

Hentchak :

Organe Central
DU PARTI

HENTCHAKISTE

Հ Ն Չ Ա Կ

Journal Arménien

mensuel

XX Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՔՍԱՆԱՄԵԱԿԸ

Հնչակեան Կուսակցութեան մասնաճիւղերը՝ Տաճկաստանի, Ռուսաստանի, Պարսկաստանի, Ռումանիայի, Բուլղարիայի, Եգիպտոսի, Ամերիկայի... մէջ՝ իւրաքանչիւր տեղ իր քաղաքական պայմանների թոյլ տուածին համեմատ՝ այս օրերս պիտի տօնեն Հնչակեան Կուսակցութեան Հիմնարկութեան քսանամեակը:

Դժագրե՛նք, համառօտ կերպով, մեր կուսակցութեան դերը հայ կեանքի մէջ:

Հնչակեան Կուսակցութիւնը Հիմնուելուց՝ առաջ պոյութիւն ունէր Հայկական Դատ. մեր կեանքը Տաճկա-Հայաստանում արեւոտեղ էր, այնտեղ սուր կերպով դրուած էր հայ ժողովրդի վիճել ջլինկութիւնը: Տաճկա-Հայկական Խնդիրը ընդհանուր Հայկական Խնդրի բնաւորութիւն էր առել, և իրաւօք ամէն կողմից աջքնեք պէպի նա էին դարձրել: Մեր երիտասարդութիւնը, մեր աշխատարար դասակարգը մասնաւորապէս, իրենց ուշադրութեան և աշխատանքի առարկան արել էին Հայկական Դատը:

Ի՞նչպէս, ի՞նչ ճանապարհներով և միջոցներով այդ հարցը պէտք էր լուծել. ահա՛ ինչպէր, որի պատասխանը մի կերպ չէր լուծւած ամէն կողմից:

Մեր մէջ այդ ժամանակները աշխատող երիտասարդների մի խումբ կար, որի համոզումն էր թէ Հայկական Դատը լուծելու միակ հնարաւոր միջոցն էր դիււանագիտական ճանապարհը, այսինքն պետութիւններին և նրանց ներկայացուցիչներին դիմումներ անել, նրանց մի առ մի ներկայացնել այն բոլոր հարստահարութիւնները և ճնշումները, որ կատարուած էին Հայաստանում, ու այդպիսով սպասել չարմար պարագային, երբ այդ պետութիւններից մէկն ու մէկը նախաձեռնութիւն կառնի և Հայկական Դատը լուծելու կաշխատի. այդպիսով է, նրանք ստուծ էին, որ մենք «Դադան թուրքի» ձեռքից կարող ենք ազատուել: Յեղափոխական որ և է շարժմանը դիււանագիտութեամբ աշխատողները հակառակ էին:

Կար մի ուրիշ խումբ մտածողներ էլ, որանք քարոզում էին մի տեսակ խաղաղ յեղափոխութիւն, այսինքն պատրաստուել, երկրի մէջ ոյժ փոխանել, բայց հետո մտալ շարժումներից ու զորձնական որ և է քալ չառնել: Սրանք էլ որ և է կազմակերպութիւն չունէին:

Մեր մէջ կային երրորդ կարգ անհատ մտածողներ էլ. սրանք այն համոզումն ունէին, թէ Հայկական Դատը կարելի էր վճռել դրանց պարբերաբար դիմումաձ խումբեր ներս խառնեցնելով և ընդհարումներ, խռանակութիւն-

ներ առաջ բերելով:

Այս անհատական տրամադրութիւնները երևան էին եկել մինչև մեր կուսակցութեան Հիմնուելը:

Պարզ է, որ կանոնաւորաձ, կազմակերպուած դեռ ոչինչ չկար մեր մէջ:

1887-ի աշնանը կազմուեց Հնչակեան Կուսակցութիւնը, որ քաղաքական առաջին անգամ սակցութիւն էր եղաւ հայ կեանքի մէջ: Ի՞նչպէս պէտք էր մօտենալ Հայկական Խնդրին, ահա՛ առաջ կարևորութիւն ունեցող հարցը: Եւ Հնչակեանութեան պատասխանը եղաւ հետևեալը.

Հայկական Դատը լուծելու համար պէտք չէր մի աչն յենուել Թերլինի Դաշնադրութեան վրայ: Թերլինի Դաշնադրութիւնը քաղաքական մի ակտ էր, որ շատ թերի կերպով դժագրել էր տաճկա-հայի վիճակը և նրան բաւականութիւն տարաւ միջոցները: Կային ուրիշ հանգամանքներ էլ: Դաշնադրութիւնը կնքուելու օրից՝ 1878-ից մինչև 1887-ը պետութեանց փոխադարձ յարաբերութիւնները փոխուել էին: Ուրիշ դիտելիք մի կէտ էլ կար, այն՝ որ Թերլինի Դաշնադրութեան ՅԱ-րդ յօդուածը ո՛չ միայն շատ տարտամ բնաւորութիւն ունէր, և դիւանագիտական բաւերի մի կատարեալ հաւնաքաձու էր, որ կարող էր ամէն տեսակ քաշքշուկի տեղի տալ, այլ եթէ այդ յօդուածի լայն բացատրութիւնն անգամ կիրարկութեան մէջ դրուէր, դարձեալ նա ամենափոքր չափով բաւականութիւն չպիտի կարողանար տալ տաճկա-հայ ժողովրդին:

Ի՞նչ պէտք էր անել, ուրեմն. — ստեղծել իւր ուղու թիւնն էր՝ ժողովրդական տնտեսական և քաղաքական պահանջների վրայ կանգնած, ու այդպիսով կռիւ մղել բռնապետութեան դէմ, որ թոյլ չէր տալիս հայ ժողովրդին յառաջադիմելու և զարգանալու: Ուրիշ խօսքով՝ պէտք էր հայ ժողովրդի կուսող ճառը կազմակերպել, տալ այդ կազմակերպութիւններին, քաղաքական բնաւորութիւն, մղել նրանց կռուի թուրք կառավարութեան դէմ և այդպիսով, սատիճանաբար, մօտենալ Հայկական Դատի լուծմանը: Ուրեմն, ո՛չ դիււանագիտութեան և ճանապարհը բռնել, և ո՛չ էլ անշարժութեան, այլ կազմակերպութիւնը մի յեղափոխութեան, նոր իրողութիւններ ստեղծելով, որ մի կողմից պիտի քաղաքէր իշխող կառավարութեան ոյժը. նրա հեղինակութիւնը կտօրէր, միւս կողմից հայ ժողովրդի մարտական ուժին. երևան դէպ ու կռուին հետեզետե ընդարձակ ճաւալ տարով՝ ստիպել թուրք կառավարութեան տեղի տալ և հայ ժողովրդի պահանջը կատարել: Եւրոպական արտաքին միջամտութիւնը այնտեղ պիտի դարձնէ միմիայն իր շահերից մղուած, երբ տեսներ՝ որ հայ մարտական ոյժի զորձնեւութիւնը

իր Հին շահերը խանդարելու բնաւորութիւնն ունի:— Այս թէպէտ նոր էր մեր կեանքի մէջ: Հնչակեան Կուսակցութիւնն էր որ Հայ ժողովրդի մէջ մտցրեց ո՛չ միայն կանոնաւոր քաղաքական կուսակցութեան գաղափարը, այլև կազմակերպուած յեղափոխութեան գաղափարը: Մինչև Հնչակեան Կուսակցութեան երևան գալը Հայ լեզուի մէջ ճ ր ա գ ի ր, մասնաճիւղ, կոմիտէ, կ ա դ ա կ ե ր պ ու թ իւ ն, պրօպագանդա, ա գ ի տ ա ց ի ա, տեղօր բառերը քաղաքական նշանակութիւն չունէին: Այդ բոլորին մարմին և ոգի, այսինքն քաղաքական նշանակութիւն տալ տուեց Հնչակեանութիւնը:

Մինչև Հնչակեան կուսակցութեան երևան գալը մեր մէջ կար Հայաստանի և Հայ ժողովրդի ազատագրութեան գաղափարը, բայց դեռ ո՛չ ոք, բացարձակապէս ո՛չ ոք չէր բացատրած, վերլուծութեան չէր ենթարկած թէ՛ ի՞նչ ասել է ա գ ա տ ու թ իւ ն: Հնչակեան Կուսակցութիւնը առաջինը եղաւ, որ յանդուգն կերպով դրեց մինչ այդ Հայ կեանքին բոլորովին անձանօթ նոր գաղափարներ, այն թէ՛ ազատութեան Համար կռուող Հայ ժողովրդի ձուակազ նպատակը պիտի լինէր ձեռք բերել ու ա մ կ ա վ ա ր ա կ ա ն մի ս ա Հ մ ա ն ա դ ր ու թ իւ ն — քաղաքական մի ձև, ուր ժողովուրդը ինքը միահեծանօրէն իր բախտի անօրինոյր լինէր իր սեպհական ներկայացուցիչների միջոցով:

Հնչակեանութեան դրած քաղաքական մտքերը այժմ շատ սովորական են դարձել, յեղեղուած են աջ ու ձախ, և ժողովրդական ընդարձակ խաւերի մէջ մտել:

Բայց այլ էր 1887-ին: Այդ ժամանակ այլ նոր խօսքերը սլաքի նման ծակուծ էին պահպանողականներին և նրանց թշնամութիւնը չարացանում: Գ ա ա ն տ ա ր ի է ա ն ց ե լ, և այդ գաղափարները, այսօր, համարեա թէ ամբողջապէս ժողովրդական ճղիջ գաղափարներ են դարձել. բայց Հնչակեան գործիչները, Հնչակեան պրօպագանդիստները, Հնչակեան մտքի ծառայիչները ի՞նչ հալածանքներ են կրել, մինչև որ այդ բոլորը կարողացել են ժողովրդական ժառանգութիւն դարձնել:

Կար Հակոբեան Դատ, կար «ազգային» ազատագրութեան գործ: Հնչակեան Կուսակցութիւնը առաջինը եղաւ, որ համարձակ կերպով մատնանիշեց այն թէ ազգերի մէջ կա, գոյութիւն ունի երկու դասակարգ, մին աշխատող, իսկ միւսը՝ ոչ. մին սեպհականատէր՝ իսկ միւսը ժառանգազուրկ: Ի՞նչ պէտք է անէր աշխատաւոր դասակարգը, — այն՝ որ իր կատարեալ ազատագրութիւնը կլինէր միմիայն այն ժամանակ, երբ նա տէր կլինէր արտադրութեան բոլոր միջոցների, այսինքն հողի, հանքերի, գործարանների, հարկերակցութեան բոլոր միջոցների, և այլն, և այլն:

Ուրեմն քաղաքական իրաւունքներ, և սպա քաղաքական իշխանութիւն ձեռք բերել, որպէսզի այդպիսով կարելի լինէր հասնել այն հեռաւոր նպատակին, որ իր առաքիւն ունի ընկերային հասարակական սեպհականութիւն դարձնելու արտադրութեան և փոխանակութեան բոլոր միջոցները — և դա պիտի լինէր սօցիալիզմի իրականացումովը:

Ահա՛, իր էութեան մէջ, այն ձուակազը և հեռաւոր նպատակները, որ առաջադրեց Հնչակեան Կուսակցութիւնը, երբ ասպարէզ մտաւ Հայ կեանքի մէջ:

Ի՞նչ եղաւ հետեանքը:— Հայ ժողովրդի ստուար մասը, թէ՛ երկրաստորդ և թէ՛ աշխատա որ բարուեցան մեր Կուսակցութեան շուրջը: Կարճ ժամանակ չանցած՝ նա դարձաւ առաջին Հակայ ոյժը Հայ կեանքի մէջ և սկսաւ ծանրանալ պետութեանց դեռնազրառութեան վրայ:

Իր մասնակի շարժումներով Հնչակեան Կուսակցութիւնը ցոյց տուեց իր ո՛չ միայն Հայ ժողովուրդ կաջ, այլ նա Արևելեան Խնդրի կարևոր ազդակներից մէկն էր, առանց որի չէր կարելի լուծուել այդ Խնդիրը:

Չենք ծանրանում 1892, 1894, 1895 և 1896 թուականների Հնչակեան շարժումների վրայ: Այսքանը միայն ասենք, որ այդ շրջանում գործող, Հայկական Դատը առաջ տանող մէն միևսակ ոյժը Հնչակեան Կուսակցութիւնն էր: Հայկական Դատը ինչոր մինչև ցարդ շահել է յեղափոխական կոխներկից և շարժումներից, դա եղել է բացառապէս այն, ինչոր նա ձեռք է բերել Հնչակեան Կուսակցութեան միջոցով:

Ո՞վ չի լիշուած որ 1894, 1895, 1896-ին Հնչակեան Կուսակցութիւնն ասելով հասկացում էր Հայ ժողովրդի ամբողջ կռուող, մի նոր կեանքի ձգտող մասը:

Ո՞վ չզլտէ, որ այդ ժամանակներո Սուլթանական բռնակալութեան աւելի մեծ արհաւիրք էր պատճառում Հնչակեան Կեղոնը, քան մեծ պետութիւնների դահլիճները: Ո՞վ չզլտէ, որ Հնչակեան մի գործիչի տեղափոխութիւնը ի՞նչ մեծ իրաւանցումի տեղիք էր տալիս Պօլսի շրջաններին: — Հնչակեան Կուսակցութիւնը մի ճղճաւանջ էր, որ ծանրացել էր ո՛չ միայն Երրդրի, այլև երոպական շահամոլ դիւանագիտութեան վրայ. չէ՞ որ այդ կուսակցութիւնն էր, որ պետութեանց ներկայացուցիչներին Սասնոյ բարձունքներն էր քաշել, տարել և 1895-ի մալխի մէծօրանդումն էր կազմել տուել: Նա չէր որ եւրոպական վեց մեծ պետութիւնների ներկայացուցիչների աչքի առաջ փողփողել էր տուել Չէթուհի ամրոցի վրայ յեղափոխական կարմիր դրօշը և բռնապետութեան զինուորներին ապստամբ ժողովրդի սրի տակից քապցեցրել:

Այդ Կուսակցութիւնը բռնակալութիւնը խորտակող մի մեծ ոյժ էր համարուում . . .

Ահա՛ դ, եղաւ այն, ինչոր անբաժան է քաղաքական կուսակցութիւնների կեանքից: Հնչակեան Կուսակցութիւնն էլ ունեցաւ իր դժբախտութեան օրերը, երբ թշնամին շունչ առաւ, երբ նա իր ոյժերը կազդուրել սկսեց:

Բայց չանցած երկար ժամանակ, Կուսակցութիւնը նորից վերակազմուեց իր ոյժերը, սեղմեց իր շարքերը և Ռուսաստանն էլ իր գործունէութեան նոր ասպարէզը դարձրեց:

Հնչակեան Կուսակցութիւնը այժմ միաժամանակ կռոււմ է երկու բռնապետութեանց դէմ՝ տաճկական և ռուսական: Երկու տեղերումն էլ նա գրկած ունի սօցիալիստական սկզբունքներ:

Այդ Կուսակցութեան մասնաճիւղերն են, ահա՛, որ այժմս տօնում են իրենց գործունէութեան քանանմեակը:

Թող կեցցէ՛ և բարգաւաճի Հայ կեանքի մէջ նոր դարագլուխ բաց անող Կուսակցութիւնը, որպէսզի իր առաջադրած նպատակներին հասնել կարողանայ:

ՍՎՋԲՈՒՆԲԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Մեր հակառակախոսները ո՞՞՞՞՞նք ճեղճեղճաբար են սկզբունքային երկուորակամութեան (դուալիզմի) ճեղճ, ուրովհետև ճեղճ ճաճկա-Հայկական Դատ ենք պաշտպանում: Այդպիսիները կարծիքով ճաճկա-Հայկական Խնդիրը զուտ ազգայնական (նացիոնալիստական) ճի խնդիր է, որին ո՞չ թէ ճշմարիտ սօցիալիստը ոչ թէ պիտի տայ, այլ նրանից հեռու պիտի մնայ, որպէս սկզբունքային ճի հակառակորդը:

Մենք այդ թէզիսն հակառակ ենք: Մեր պնդածը, ճեղճ ատածը եղել է և է՛, որ սօցիալիզմ և ճաճկա-Հայկական Խնդիր դրանք իրարու հակասող, իրարու ջնջող ոչ թէր չեն և, բացի դրանից, ազգային խնդրի պաշտպանութեան դրճը ո՞չ թէ դատապարտելի, այլ յանճնարարելի ի՛նչ է սօցիալիստական տեսակէտից: Ազգային իրաւունքների պաշտպանութիւն, ազգային ինքնադոյութեան իրաւունք, դրանք այնպիսի տարրական իրաւունքներ են, որ իրենց բնաւորութեամբ անճեղճնճխելի են, և սօցիալիզմը չէ թէ հակառակում, այլ եւանդաբան պաշտպանում է այդ սկզբունքը: Եւ դրանց որպէս պատասխան՝ ճեղճ ներկայացնում ենք ճոքի այն բոլոր արտայայտութիւնները, որ սօցիալիստական աշխարհում երևան են եկել այս վերջին անիսներս:

Մեր հակառակախոսները ո՞՞՞՞՞նք էլ ճեղճ ճեղճաբար են այն բանի ճեղճ, թէ սօցիալիզմ քարոզելով, ճեղճ ո՞չ թէ ճիայն վնասում, այլ ուղղակի սպանում ենք ճաճկա-Հայկական Դատը: Սրանց կարծիքով և հասկացողութեամբ՝ ճաճկա-Հայ Խնդիր և սօցիալիզմ երկու իրարու ոչնչացնող դօրութիւններ են, կա՛ճ ճիւն, կա՛ճ ճիւնը. աւելի ուղիղ՝ որպէսզի ճաճկա-Հայ Խնդիրը առաջ երթայ, հարկաւոր է որ նա զուտ ազգայնական, զուտ հայրենասիրական լինի: "Ազգային յեղափոխութիւն", "ազգային յեղափոխութեամբ" է որ ճաճկա-Հայ Խնդիրը կարելի պիտի լինի լուճել, այլապէս նա կվանազուլի, եթէ անտեսական, ճանաւանդ "սօցիալիստական" խնդիր նրան իսանուլի: Հայ "ազգի աճբողջութիւնը" պէտք է ճի կազմակերպութեան ճեղճ անել, առանց դատակարգային որ և է խորակնութեան, և այդպիսով ճօտնուող "ազգային խնդրի" լուճմանը: Երբ "ազգը" կազմակերպ նրանից յետոյ թող սօցիալիստը սօցիալիզմ քարոզի, անարխիստը՝ անարխիզմ, ազատամիտը՝ ազատամտութիւն, իսկ ճինչ այդ՝ գային ու ոչխարը ճիւստի պիտի արածեն և ամէնքը ճիւստեղ քայլեն ընդհանուր թշնամու ղէճ:

—Սա ճի այնպիսի պարզմտական (naïf) գաղափար է, որի պաշտպանները ո՞չ ճիւստութիւնից անեղեկութիւն տնեն, ո՞չ պատճուութիւնից և ո՞չ էլ իրական կեանքից: Պատճութեան անիւր քճահաճոյքով շուու տալ չի կարելի: Սրանց ճեղճ ասել և ասում ենք, իրաւ է որ անցեալի ճեղճ յեղափոխութեամբ իրենց ազգային իրաւունքները ճեղճ բերեցին ուրիշ ազգեր՝ առանց սօցիալիզմ քարոզելու, բայց պէտք է ճիւստաբ նախ՝ այդ յեղափոխութիւնները (Անգլիական, Միացեալ-Նահանգների, Ֆրանսիական, Գերմանական, Հունգարական, Իտալական . . .) անողը այդ ազգերի ո՞ր դատակարգն էր, որ այն ժամանակուայ դոյութիւն ունեցող պայճանների ղէճ կուտեց, քանիցէ հինը և անղը դրեց նորը՝ իր բաղճալին: Դա նրանից 150, 100, 50 տարի առաջ էր և այդ ազգերի ինքնագոյութեան իրաւունքները պաշտպանողը և նրա դատը յաղթանակել առողը եղել է իր ժամանակի հաստնացած, պայքարող, իրականութիւնից բողք ունեցող դատակարգը, այն է՝ բուրճուաղիան: Այդ ժամանակները այդ ազգերի ճեղճ ազնուականներ, կղերականներ էլ կային, բայց այդ յեղափոխական շարճումներին նրանք ճճանակցեցան որպէս դատակարգ: Ուրիշ ճի հանգամանք էլ, այն՝ որ յեղափոխուող ազգերի իսկական յեղափոխութեան տարրը՝ բուրճուաղիան ո՞չ

ճիայն իր քաղաքական ("զուտ ազգային") ճրաղիրն ունէր, որ իրագորճեց իր բողկի ոչ թու, այլ և նա ունէր և՛ իր անտեսականը: Աստուաճպետական ընկերութեան խորտակճան ազգակը եղել է ազնուականը, ազնուա-Ֆէօդալական ընկերութեան կորճանողը եղել է բուրճուաղիան. բուրճուաղիան պատճական թատերաբեճից վայր բերողը պիտի լինի պրոլետարիատը: Այնպէս որ, պատճութեան ընթացքում գորճել են դատակարգերը, և "ազգային դատ", "ազգային յեղափոխութիւն" աստուաճ բողք եւրուայթները, պատճութեան բողք արտայայտութիւնները եր ևան են եկել, թանճրացել և իրագորճուել են, դատակարգերի ճիջոցով:

Այս անտեսակետով հայ ազգային իրաւունքների, նրա ինքնագոյութեան որպէս անհատականութիւն ունեցող ճի ժողովրդի գոյութեան՝ կուրը ճողղը է, այճճս, ճեր գիւղացի, արհեստաւոր, ճարաբա, պրոլետարիատ դատակարգը. իսկ բուրճուաղիան ճեղճերը լըւացել է և Պրլատոսի ղիրք բունել. նա այդ հարցը իրենը չի հաճարում, նրանով շատ էլ չի հետաքքրում, եթէ հետաքքրում է՝ ապա որպէս ճի ուրբճաճութեան ճիջոցի. նրա ճի ստուար ճար չուել է օտար երկիրներ, ճի խոշոր ճասին էլ ներկայացած բանապետական պայճանները ճիջոց են տալիս առանց արիւն թափելու իր շահագորճումը առաջ տանել. դճոհները, բողքողները, անհաշտները հատուկորներ են, անհատներ, և ոչ թէ դատակարգային աճբողջութիւն, ուստի նա ազգային ինքնապաշտպանութեան, ազգային ինքնապաշտպանութեան դատի ազգակ չէ, և քանի որ չէ, — և դա իրականութիւն է — ուստի չցանկացող, de facto պատճական ոչ ճանեցող, չգորճող ճի դատակարգի վրին չի կարելի փաթաթել պատճական ճի ճիւստի, որը կատարել են ուրիշ ազգերի ճեղճ գորճող նճան տարրերը սրանից 150, 100, 50 տարիներ առաջ: Եւ քանի որ ճաճկա-Հայ Դատի իրական լըւճակը և շարճիչ ոչ թն է այն դատակարգը, որի հաճանճանները օտար երկրների ճեղճ, որպէս հաստնացած ճի պահանջ, ընդունել են սօցիալիստական ճրաղիրը, ուրեմն նոյնը պիտի անի և՛ հայ ազգի ճեղճ այդպիսի ոչ ճերկայացնող տարրը, և՛ քանի որ սօցիալիստական այդ ճրաղիրը իր կատարելութեամբ, իր աճբողջութեամբ ո՞չ թէ ճիայն չի հակասում ճեր փայտիայճ ազգային դատ աստուաճին, այլինքն ճի ժողովրդի ինքնագոյութիւնը պահպանել ուղել ճղաուճին, երբ ուրեմն ճեր յանկութեան աճբողջութիւնը սօցիալիստական քաղաքական ճրաղիրն ազգային ճան է կաղճում, ուրեմն եթէ չէք ուղում պատճութիւնը շուու տարու և անայլթաքօրէն վրապիւտ աւերող փարճ անելու, եկէ՛ք և գրիեցէ՛ք սօցիալիստական ճրաղիրը: Իսկ եթէ երկուը էք կրում սօցիալիզմից, վախենալով որ ճի գուցէ նա ազգային ջնջում, ճուււււււ է պահանջում, — կարողացէ՛ք, ճիւստ ոճանց պէս, ճի փողը վարը ճեղճ բերուաճները և կհաճողուէք որ սօցիալիզմը ազգային իրաւունքներ ժիստղ չէ: Խօսողները է՛ն հաչաւկաւոր, է՛ն նշանաւոր սօցիալիստական ուսճիրաններ են, ուրեմն կասկաճ չի կարող լինել:

Սկսենք նախ Բէբէլից, տեսներք թէ Ծառուաղարտի վերջին ժողովի ճեղճ, երբ օրակարգի խնդիրն էր "Ձիւնորականութիւն և ճիջողգային ընդհարումներ", ի՛նչ է ասել այդ սօցիալիստ գրուղը ազգերի ինքնագոյութեան և սօցիալիզմի յարաբերութեան նկատճամբ:

ԲԷԲԷԼ

Ճարբեր ժողովրդների հաստատութիւնները թանկազին ժաւանդութիւններ են, որ պէտք է պաշտպանել: Եւ արդարև, ճննք ի՛նչ ենք հաւաստում, — այն՝ որ ամէն երկրներում ազգութիւնների խնդիրը հըրտասայ է դարճաճ: Աւտրիան, ճանաւորապէս,

Միջազգայնականի (էնտերնացիոնալի) ձի մանրագրու- կեր է:

Քսաներորդ դարը միջազգայնականի դար կլինի, տասնիններորդ դարը, օրինաւորապէս, ազգութիւնները դարը եղաւ:

Կարող են պաշտպանել այն գաղափարը թէ տարբեր ժողովուրդների դրութիւնները իրար համարժէք են, բայց Սօցիալ-Դեմօկրատիան չի կարող հան- դուրծել, որ Փրանսիացիները կառավարեն Գերմանա- ցիներին, ինչպէս և հակառակը Գերմանացիները կա- րավարեն Փրանսիացիներին:

Կօմմունիստական Մանիֆէստի՝ պրոլետարները հայրենիք չունեն խօսքի մասին կարող են աւար- կութիւններ անել: Բայց էնգէլսը ինքը մեկնաբանել և ուղղագրել է այդ խօսքը: Պրոլետարները պէտք է որ նուաճեն օրինական ձի հայրենիք:

Բէքէյի գաղափարները Հեռեւեաններն են.

1. — Աճէն ժողովուրդ իր ինքնուրոյնութիւնը պահելու լիակատար իրաւունք ունի—Ուրեմն երբ ճէնք ատու էնք թէ հայ ժողովուրդն էլ կատարեալ իրաւունք ունի իր ինքնապոյութիւնը պաշտպանելու՝ դա նայիծնալիզմի հետք չէ, այլ սօցիալիստական մաքի պահանջ:

2. — Աճէն երկրներում ազգութիւնների խնդիրը հրատարակ է դարձած այժմս, յայտարարում է Բէքէյը:—Մի պատկեր բաւական է այդ բոլորը հաստատելու: Լեհ, Ֆինլանդացի, Լատիշ, Իրլանդացի սօցիալիստը իր սօցիալիստական պա- հանջների, իր Միջազգայնութեան բաժին է արել և՛ իր պատկա- նած ժողովրդի ինքնապոյութեան անձեռնմխելիութիւնը, որպէս պատմական ձի անհատականութեան: Սրանք դեռ նուաճուած ժո- ղովուրդների մէջ: Բայց մի թէ նոյնը չեն ատու և՛ այն ազգու- թեանց մէջ գործող ազգային ֆրակցիաները, որոնք արդէն իրենց անկախութիւնը ունին և ինքնապոյութեան իրաւունք են վայելում: Սրանց մէջ երբ սօցիալիստական կազմակեր- պութիւններն էլ ատու են, թէ ճէնք չենք թողնի որ այդ ան- կախութիւնը կործանուի և ճեր երկիրը նուաճման ենթարկուի մի ուրիշ արտաքին պարբից, ս՛վ էլ որ լինի կեղծ, յա- ուաջայիմական, կարգացած թէ յետադիմական կամ անձշակ մի ժողովուրդ: Ուրեմն ո՛ր գիտութիւնն է ճեզ հարուածում, երբ համանման իրաւունք ճէնք պահանջում ենք և՛ հայ ժող- վրդի համար:

3. — Աւստրիան Միջազգայնական (էնտերնացիոնալ) ձի մանրանկար է:—Արդարեւ այդպէս է: Եւ Աւստրիական Սօ- ցիալ-Դեմօկրատիան ո՛չ թէ ձ ու լ մ ա ն սիբաէմն է բռնել, այլ ամէն ազգութեան իր ազգային իրաւունքների լիակատար ճանաչումը և ինքնավարութիւնը ու որպէս ազատ մի ու թ իւ ն ն էր իրարու հեռ դաշնակցել, ճիւղալը և սօցիալիստական ձի ամբողջութիւն կազմելը:—Մեր ասելը տարբեր չէ, երբ խնդիրը մեզ է գալիս:

4. — Քսաներորդ դարը միջազգայնականի դար կլինի, տաս- նիններորդ դարը ազգութիւնների դար եղաւ:—Կասկած չը- կայ որ քսաներորդ դարը միջազգայնականի դար կլինի, որ ազ- գութիւնները որպէս պատմական անհատականութիւններ պատ- կածքով կճիւղանան և միջազգային եղբայրութիւնը կկազմեն: Աճէն ազգ միջազգայնութեան, ամբողջութեան ձի համագոր, հաւասար և համիրաւունք անդամը, եղբայրը կլինի: Տասնիններորդ դարը եղաւ ազգութիւնների դար,—այս դարում շատ ազգութիւններ ի- րենց ինքնապոյութեան իրաւունքը յարգել և ճանաչեցնել տուին: Այսպէս, Յունաստան, Սերբիա, Հունգարիա, Ռուսիա, Գերմանիա, Իտալիա: Պատմական այդ փուլը նրանց համար

վերջացել է, բայց դեռ կան ազգութիւններ, որոնց տասնիննե- րորդ դարը դեռ նոր է սկսել, և այդ ասել չէ թէ նրանք իրենց ազգային իրաւունքների գոյութեան խնդիրը ձի կողմ պիտի թողնեն, որովհետեւ իրենք ուշ են արթնցել: Եւ սօ- ցիալիզմը այդ խնդիրը անտես չի կարող առնել, ինչպէս որ չի էլ անուճ այն ազգութիւնների նկատմամբ, որոնք այ- սօր: միջազգայնականի անդամներ լինել ձգտելով: Հանդերձ, նման անկախներին, իրենց աւագ եղբայրներին, միաժամա- նակ պաշտպանում են և՛ իրենց ինքնապոյութեան իրաւունքը, որպէս պատմական ձի անհատականութեան: Այն իրաւունքը որ ունի Փրանսիացին, գերմանացին, անգլիացին որպէս ձի ազգութիւն, նոյն իրաւունքը պիտի ունենայ և՛ հայը և՛ վրացին, և՛ լեհը, և՛ իրլանդացին, և՛ բաթիշը, և՛ ֆինը, և՛ թուրքը, և՛ պարսիկը. . . անխտիր:

5. — Յանուն սօցիալիստական սկզբունքների Բէքէյը չի ցանկանում, որ գերմանացիները Փրանսիացիներին կառավարեն, և՛ հակառակը:—Ուրեմն բացատրումն նուաճողական քաղա- քականութեան, ինչոր սօցիալիստական սկզբունքի անկիւնա- քարերից մէկն է կազմում: Եատ լաւ: Արդ, երբ նուա- ճողական իրողութիւնը ո՛չ թէ կայ, այլ նա հրաճայական կերպով ատու է թէ ես իմ ոյժիս փրայ յենուած պէտք է ճաւրոտի լեռնաշղթայից ջնջեմ հայ ժողովուրդը, որովհետեւ նա ցցի պէս (Տես "Բեդին Իրը" 1894-1896) վարուած է մահճեղական ազգաբնակչութեան սրտի մէջ ու նրան երկու մասի է բաժանում,—ու այդ կատարում է իմ աչքի աւաջ, հարիւր հազարաւոր կոտորածներ տարով, ես որ այդ ազաւ- նալիքի առկ գտնուող ժողովրդի ձի սօցիալիստ գաւախն եմ, ասել է թէ նրա պատմական անհատականութիւնը կազմող ի- րաւունքի ձի մասնիկն էլ իմ մէջն է ճարմնացած, ես ո՛չ միայն իրաւունք, այլ հրաճայական պարտականութիւն ունիմ հար- ւածող այդ ձեռքը, նուաճողական այդ բազուկը արժատախիլ անելու և իմ գոյութեան անձեռնմխելի իրաւունքը յայտա- րարելու: Այն ինչոր ընդունելի է և իրաւունք է գերմանա- ցու, Փրանսիացու. . . համար, նոյնը և՛ ինձ համար, չէ՞ որ սօցիալիզմը ձգտում է քաղաքական և տնտեսական ազա- տագրութեան՝ անխտիր կերպով, առանց ուշադրութիւն դար- ձնելու ճագմանը և ճորթի գոյնին: Բաւական է որ նրանք բոլորն էլ ճարդիպին կերպարանք ունեն, և իրենց իրաւունք- ների գիտակցութիւնը:

6. — Պրոլետարները իրենց օրինական հայրենիքը պէտք է նուաճեն:—Արդարեւ, այսօր ամէն տեղ հայրենիքը սեպ- հականութիւն, աւարկայ, շահագործման արտ է միայն ազգի ձի որոշ դատակարգի: Հայրենիքը՝ որպէս գոյութեան վայր, որպէս իր մէջ բնակողներին սնունդ և կեանք պարգևող և նրանց գոյութիւնը պայճանուարող ձի ազգակ՝ նապատկանում է, իր պաշտօնը կատարում է միայն մէկ դասակարգի համար. միւս դասակարգը՝ պրոլետարիատը այդ հայրենիքի խորթ դատակն է, նրան բաժին չեն տալիս տիրապետող, խլող, լյափշտա- կողները, լինեն սրանք իր սեպհական ճիւղ և արխնից, լի- նեն ուրիշից: Ի՞նչ պէտք է անի այդ դէպքում պրոլետա- րիատը, ձեռնթափ պիտի լինի, թէ՛ պիտի ասի որ այս հայ- րենիքը իմս էլ է և պիտի աշխատի նրանից իրեն վերա- բարբերելը բաժինը ստանալ, ու այդպիսով հայրենիքը ո՛չ թէ մէկ մասի, այլ ամբողջութեան հայրենիքը, սեպհակա- նութիւնը դարձնի. այս ճագով է որ Բէքէյը ո՛չ թէ ձեռնթա- փութիւն է քարոզում հայրենիքի նկատմամբ, այլ պաշտ- պանութիւն և նրա տիրապետութիւնը, ընկերականոցուճը, ա զ գ ա յ ն ա յ ու ճ ը:—Մե՛նք ինչ ենք ասած: Տիրապե- տող տարրը ո՛չ թէ մեզ անունը ճատակարարող հողը մեր ձեռքից խլել է և մեզ էլ իր արտադրութեան գործիքը, իր բեռնակիր գրասար, իր խկական ստրուկն է դարձրել, այլ ու զ ու ճ է մեզ ջնջել, կ ո ս ո թ է լ ի սի: Այդ

դէպքում, երբ բռնապետի սուրբ ինձ քշել է գնդա ինձ հայ-
րենիքից, մի՞թէ ես պարտականութիւն եմ իրաւունք չգիտի
համարեմ ինձ այդ բռնապետութեան խորտակմանը աշխա-
տելու. որ գիտութիւնն է ինձ այդ արգելումը: Եւ մեր ա-
սածը տարբեր բան չի եղել Ամերիկայի, Բուլղարիայի, Ե-
գիպտոսի: . . . մէջ եղող հայ պրոլետարին, ինչպէս և
Կովկասի: Եթէ այդ բոլորը ընդունելի է Բէքէյի համար,
ապա ինչո՞ւ համար ընդունելի չպիտի լինի ինձ համար, երբ
ես Կովկասի մէջն ապրելով՝ տեսնում եմ որ անպիսի ջնջում
են այն ժողովուրդը, որի մի անդամն էլ ես եմ: Եթէ Ֆը-
րանսիացին ուզի Վեստֆալիան տիրել, Բեքէյի պրոլետա-
րիտը, յանձին Բէքէյի, նրան ասում է թէ այդ իրաւունքը
դու չունիս: Այդ իրաւունքը տեղեւում է նրա՞ համար, որ
այդ երկու վայրերի միջից սահմանը իրօք ջնջուած էր, բայց ո՞վ
է արգելում ինձ բարոյապէս ջնջել մի սահման, որ բռնա-
պետութիւնները դժե՛լ են հակառակ իմ կամքիս և ցանկութեանս
և որի դէմ դարեր շարունակ ես բողբոջում եմ:

Այժմ անցնենք հակա-հայրենիքականների թէօրեօրիս
հերքելի ասածներին՝ նոյն այդ ժողովի մէջ:

ՀԵՐՎԷ

. . . Մենք ճանաչեցինք, որ բոլոր հայրենիք-
ները խորթ մայրեր (մօրու) են:

Մենք ցանկացանք սահմաններից վեր բարձրա-
նալով՝ գալերը բաժանել ոչխարներից: Մենք գոչե-
ցինք, մեր հայրենիքը՝ դա մեր դասակարգն է: Նոյն
դոջը մենք ունենք թէ՛ կէսմանսօրի և թէ՛ Կայրեր հա-
մար:

1. — Հերվէն ճանաչել է որ բոլոր հայրենիքները հիմա
մօրուներ են պրոլետարների համար: Իրաւ է դա: Բայց
ինչո՞ւ մօրու և ո՞չ թէ հարազատ, — որովհետեւ կան դա-
սակարգեր, որ այդպէս են արել: Եւ Բէքէյը այստեղ ա-
սում է որ այդ մօրուն հարազատացնելու համար ո՞չ թէ թոյլ
պիտի տալ որ մի ուրիշ մօրու էլ աւելանայ, այլ առաջին մօ-
րուին ստիպել որ իր յափշտակածը յետ տայ և հայ-
րենիքը հայրենիք լինի բոլորին և ո՞չ թէ մէկ մասին: Եւ
վերջապէս այս այն հերվէն է, որ միօրիւ-Վ. Զօլի մէջ յայ-
տարարեց թէ ինքը իր ներկայ «մօրու» հայրենիքը՝ Փրանս-
սիան կալաշտպանէր, — եթէ նրա վրայ յարձակուելու լինէր
Թիւրքիան կամ Ռուսիան, և կալաշտպանէր, որովհետեւ այդ
երկրների բռնապետութիւնները պիտի ջանային Փրանսիացու
անձեռնմխելի իրաւունքները ջնջել և յետադիմութիւնը թա-
գաւորել տալ, մինչդեռ գերմանական քաղաքակրթութիւնը
այդ չէր անիլ և գերմանական Սօցիալ-Դեմոկրատիան չէր
թոյլ տալ, որ գերմանական կաղերիզը դար և Փրանսիան
ոտքի տակ առնէր: Նանսիի վերջին ժողովի մէջ՝ Հերվէն
իր գինու մէջ բաւականին ջուր դրեց, և յայտարարեց որ
ինքը իր պարագօքները դրեց, որպէսզի աւելի պարզ լինի և
աւելի մեծ շուռաչիւն ստանայ. այս մասը պարզաբանում է, մի
քիչ վարը, Ժօրէսը ինքը:

3. — Հերվէն ցանկանում է որ սահմաններից վեր բարձ-
րանան սօցիալիստները՝ գալերը ոչխարներից դատելու հա-
մար: — Անշուշտ, այդպէս էլ պահանջում է սօցիալիզմը,
միջազգայնութիւնը: Եւ Կովկասի սահմաններից վեր բարձ-
րացող հայ սօցիալիստը չի ասում, որ Տաւրոսի լեռնաշղթ-
թափի մէջ գալի կողմը բռնեմ ոչխարի դէմ, այլ ձեռքս
մեկնեմ ոչխարին, որ ինձ կարօտ է ներքին և արտաքին
գալերի դէմ պաշտպանուելու ու կռուելու համար:
Ուրիշ երկրների պրոլետարները բարձրագոյն
մտքով հասկացած «հայրենասէրներ» կլինէին, եթէ նրանք
ձեռք մեկնէին Հայաստանի գալերին աւելի՛ քան ոչխարներին:

3. — Մեր հայրենիքը մեր գասակարգն է: Առնենք Հէնց
այդ ափորիզը: — Եթէ այլ երկրների մէջ ապրող հայ սօ-
ցիալիստները և պրոլետարները պաշտպանէին դասակարգերի
գոյութեան անհրաժեշտութիւնը ու տիրապետութիւնը՝ դա հաս-
կանալի կլինէր, որ հակասօցիալիստական մի գործ կլինէր, բայց
այդպէս չէ: Եթէ պրոլետարական պահանջն է միահեծանութիւն
քաղաքական և միահեծանութիւն աշխատանքի. երբ նոյն այդ
պահանջներն են դրել Հայաստանի մէջ՝ երա՞ծ իր գասակար-
գակիցները, կնշանակէ թէ նա հակապետութեան մէջ չէ արանց
պաշտպանելով:

Առնենք նախկին յերափոխական սօցիալիստ Վայանի
խօսքերը:

ՎԱՅԱՆ

. . . Մենք, նոյնպէս, ի նկատի ունենք ազգերը՝ Մի-
ջազգայնականի յառաջադիմութեան այդ յետագայ տար-
րերը: Բայց հակահաստատութիւնը թողնենք, ինչ էլ որ
ասելու լինեն, մենք պահանջում ենք այլ ազգերից,
որ նրանք այնպէս շարժուեն, որ կարողանան իրենց
ազգային ամբողջականութիւնը պահպանել: Եւ Մի-
ջազգային հայրենասէր եմ, և Միջազգայնականի (Լե-
ստերնայիօնայի) կաթողին սէրը, — որ իր մէջ բովանդա-
կում է ազգերի ինքնավարութիւնը, — մեր տիրապետող
զգացմունքը պիտի լինի:

Մենք ձեզ խնդրում ենք այնպիսի որոշումներ
ընդունել, որ դրա պահանջութիւնը կարելի դարձնի:
Մենք չենք աշխատում ճշդել, ամէն բան կախումն
ունի հանգամանքներից:

— Պարզ է որ Վայանը Միջազգայնականի յետագայ յառա-
ջադիմութեան համար ի՞նչ անհրաժեշտութիւն է համարում
ազգերի ինքնագոյութիւնը և նրանց ամբողջականութեան
պահպանութիւնը: Ո՞չ թէ ձուլուել, կլանուել, մէկը միւ-
սին ենթարկուել, այլ հաւասար անդամներ, եղբայրներ
դառնալ: Միջազգայնականութիւնը չի միտում ազգու-
թիւնը, հասկանալով այս վերջին եզրը սօցիալիստական
և ո՞չ թէ բուրժուազական մտքով:

Անցնենք զինուորականութեան և միջազգային ընդհա-
բուսների համար նշանակուած Յանձնաժողովի տեղեկաբեր
Վանդերվելդին, որ մի առ մի բացատրում է թէ Յանձնաժո-
ղովը ինչպէս է հասկացել Շտուտգարտի այդ մասին դրած
որոշումը:

ՎԱՆԴԵՐՎԵԼԴ

Յանուն Յանձնաժողովի, որին որ ուղղուած էր
զինուորականութեան (միլիտարիզմի) և Միջազգային
ընդհարումների խնդիրը, պատիւ ունիմ ձեզ առա-
ջարկելու՝ այս առաւօտ ձեզ ցրուած վճռորոշման
(ուէրօլիւցիայի) ընդունելութիւնը:

Այդ սեղօլիւցիան ամենաերկայններից մէկն է,
գուցէ և ամենից երկայնը, որ երբ և է Միջազգայ-
նականը ընդունել է իր Կոնգրէսների մէջ. մենք մա-
մանակ չունեցանք աւելի կարճացնելու:

Երբ մենք ամփոփել փորձեցինք, տեսանք որ չի
կարելի անել՝ առանց միտքը անորոշ դարձնելու:

Յանձնաժողովը միահեծանութեամբ ընդունել է այդ
ուէրօլիւցիան: Այսպէս էլ չէր կարող լինել, ու-
րովհետեւ Միջազգայնականի (Լեստերնայիօնայի) հի-
մունքը կազմող զինուոր սկզբունքների մասին անհա-

մաճաչութիւն չի կարող լինել:

Այդ սկզբունքները մէկ առ մէկ պիտի թուեն:

Նախ և առաջ միջազգային Համերաշխութիւնը բոլոր աշխատաւորների առաջին պարտականութիւնն ենք նկատում: Աւերոյդ է երկար կանգ առնել այն պիտի սկզբունքների վրայ մի ժողովի մէջ, որ կօմ- մունիստական Մանիֆէստի խօսքի կենդանի իրակա- նացումն է, այն է՝ «Ամէն երկրի սրբութեամբ, միա- ցէք»:

Մուսակցական միւլենոն շահերը մենք ունինք. բոլոր երկրների, պրոլետարները դասակարգային միւլենոն շահերն ունեն: Եւ աշխարհի որ մասումն էլ որ բնակուելու լինեն, նրանց միջև Հանրական շահերի միութեան աւելի կապ կայ՝ քան նրանց և նրանց պատ- կանող ազգութեան միւս դասակարգերի միջև:

Երկրորդ սկզբունքը, որ Բէքէլի և Վայանի ճա- ուերովը սքանչելի կերպով սահմանուած է, այն է՝ որ նոյն իսկ Միջազգայնականի գոյութիւնը գորութեամբ ենթադրում է ինքնավար ազգերի նախադաս գոյութիւն:

Մեր Դաշնակցութիւնը (Fédération) անհասանելի անկերպարան մի դանդուած չէ, այլ կենդանի ազգու- թիւնների մի ազատ դաշնակցութիւն, որոնց մէջ մենք ընդունում ենք ո՛չ միայն այն ազգութիւններին, ո- ընք տարբեր կառավարութիւնների ներքոյ են սպ- րում, այլև այնպիսի ազգութիւններ՝ ինչպիսին են Ֆին- լանդիան և Լեհաստանը, որոնց Համար Միջազգայ- նականը կեանքի առանձին իրաւունք է ճանաչել: (Մա- փահարութիւն:)

Ազգային կազմակերպութիւնների օրինական այս յայտարարութեամբը մենք պատասխանում ենք այն բոլոր քննադատութիւններին, որոնք զանազան երկրներում կարող են բարձրանալ՝ մեր քուէարկելիք որոշումների դէմ: Մենք պիտի տեսնենք որ Ֆրանսիական լրա- գրերը պիտի յայտարարեն թէ միայն գերմանական սօ- ցիալիստներն են Հայրենասէր. մինչդեռ գերմանական լրագրերն էլ պիտի յայտարարեն թէ միայն Ֆրան- սիացիներն են որ եռանդապին կերպով պիտի պաշտ- պանեն Հայրենիքը: (Երկար ծափահարութիւն)

Բայց այդ հակասական յայտարարութիւնները արդէն իրարու ջնջում են: Եւ մեր ռեզօլյուցիաները պիտի ցոյց տան որ ազգութիւնները կարելի է անհը- րածեշտ Համարել՝ առանց միջազգային զգացումները թուլացնելու: (Մափահարութիւն)

Այս սկզբունքից բխում է մի անհրաժեշտ հե- տևութիւն, այն որ՝ իրենց անկախութեան սպառնա- ցող ամէն նախադրածակման, ամէն արշաւանքի, արտաքին ամէն խուժումի դէմ, ազգերը ինքնապաշտպանութեան իրաւունք ունեն, ինչպէս որ անհասանելի: Միայն թէ, իրերի ներկայ դրութեան մէջ, ազգութիւնների ինքնա- պաշտպանութեան գաղափարը գորութեամբ իր մէջ բովանդակում է ազգային պաշտպանութեան մի անկա- նիքական կազմակերպութիւն: Եւ ահա թէ ինչու Համար Յանձնաժողովը պաշտպանում է այն միայրը,

թէ վիտուած ազգութիւնների միլիցիական կազմակեր- պութիւնը՝ ազգութիւնների Համար՝ մի միջոց է կազմում ինքնապաշտպանուելու, մի երաշխաւորութիւն՝ կառավարութեան նուաճողական վտանգի դէմ:

—Վանդերվելդի ասածները այնքան պարզ, այնքան որոշ են, որ այդ մասին երկար կանգ առնելը աւերոյդ է, մենք երկու ձեռքով ստորագրել և ստորագրում ենք իր արտայայտած մտքերը, — որ արդէն սօցիալիստական Հանրական Ճշմար- տութիւններ են:

Մենք այստեղ մէկ կէտի վրայ միայն ճատանիշ պիտի անենք: Յանձնաժողովի տեղեկաբերը ասում է թէ ազգութիւն- ների գոյութիւնը կարելի է անհրաժեշտութիւն Համարել՝ ա- ռանց միջազգային զգացումները թուլացնելու: Այսինքն ան- Հատ ազգութիւնների գոյութեան պաշտպանութեան գաղա- փարը ո՛չ մի կերպ չի մտածում միջազգայնականութեան գաղափարի և զգացմունքի պաշտպանութեանը: Եւ դրանից մի փոքր առաջ Վանդերվելդը ասում է թէ տարբեր ազգու- թիւններ են նկատուած, ի թիւս այլոց, և՛ Ֆինլանդիան, և՛ Լեհաստանը: Այդ երկու երկրները անկախ չեն, նրանց մէջ եղած ժողովուրդները՝ ֆինլանդացին և լեհացին, նուաճուած են, բայց դա արդէք չէ, որ նրանք դատ ազգութիւն—անհատ- ներ չնկատուեն:

Այստեղ հարկ է նկատել որ Գրօմիտայի (Հոլանդացի) սկսած (16րդ դար), որ իրական Հիմնադրին է եղել ժողո- վրդական Իրաւունքի (Droit des Gens) մինչև 19 դարու առաջին կեսը, իրաւունքի փիլիսոփայութեան (philosophie du droit) թէօրեալիստները ազգութիւն և պետութիւն հո- մանիշ էին համարում. կար ազգութիւն այնտեղ, ուր կար պետութիւն, չկար պետութիւն, չկար էլ ազգութիւն 19 դարու երկրորդ կեսից, աւելի ուղիղը պիտի լինէր ասել վերջին քառորդից, այլևս անվիճելի դարձաւ թէ ժողովրդա- կան Իրաւունքի և թէ Միջազգային Իրաւունքի (droit in- ternational) մէջ, որ ա՛յլ է պետութիւն, ա՛յլ ազգութիւն, որ ազգութեան գոյութիւնը անհրաժեշտ նախապայճան չէ պե- տութեան գոյութեանը, և՛ Հակառակը, ու յայտնուել մի ջազ- գայն օրէն ճանչցուեցաւ որ նուաճուած ժողովուրդներն էլ ազգութիւններ կարող են նկատուել, եթէ նրանք ազգու- թիւն ներկայացնելու ազգակներ և կենսականութիւն ու- նին: Այդպէս, ուրեմն, կար Իրլանդական, Լեհական, Հայ, Չին, Լատիշ . . . ազգութիւններ այնպէս, ինչպէս որ կա- յին Անգլիական, Ռուսական, Փրանսիական, Գերմանական ազգութիւններ, որոնք առաջիններից այն տարբերութիւնը ունէին, որ անկախ և ազատ էին, մինչդեռ վերջինները՝ ո՛չ: Ի հարկէ մեզ այստեղ այսօր հեռուն կտանէր այն հարցը թէ ի՞նչ է ազգութիւն. այդ հարցի մասին մենք մի ուսում- նասիրութիւն ունենք հրատարակած մի այլ տեղ, որ ժա- մանակին ծածուկ խորհրդածութեան առարկայ եղաւ և իր դէմ յարուցեց նրանց, որոնք ազգութիւնը բացառապէս հիմ- նում էին ցեղականութեան և լեզուի վրայ:

Որ միջազգային իրաւունքի տեղեկութիւն չունեցող շատ սօցիալ-դեմոկրատներ էլ յաճախ ազգութիւն հասկանում են այնպէս, ինչպէս հասկանում էր մի Գրօմիտ, մի Պիւֆ- ֆէնդորֆ, մի Ֆիլսոֆ Իսկ, դրա մասին մէջբերումների հարկ չկայ: Մենք ազգութիւն հասկանում ենք, ինչպէս և՛ մի- ջազգայնութիւնը Վանդերվելդի բերանով, այն՝ ինչոր հաս- կանում է Բրենտանոն, Սօրելը, Ռընօն, Բլանչին . . . և Մի- ջազգային իրաւունքի ժամանակակից բոլոր թէօրեալիստները:

Լեհաստանը, Ֆինլանդիան նոյնքան տարբեր ազգութիւն — անհասանելի ճանչցուելու իրաւունք ունին, որքան որ հայ, վրացի, լատիշ, իրլանդացի ազգերը: Ազգութեան գոյութիւնը թաւի շատ ու քիչ լինելու հետ կապակցութիւն չունի:

Լսենք Հիմա մի կտորը Ժորէսի այն հրաշարի ճառի, որ նա արտասանեց Տիփօլի-Վ.Օ.Հօլլի մէջ, անցեալ սեպտեմբերի 7-ին, Շտուտգարտի ժողովոց յետոյ: Ահա թէ ինչ է ասում հռչակաւոր ճարտասանը:

ԺՕՐԷՍԻ ՃԱՌԸ

... Եւ ի՞նչ ասաց, ուրեմն, ի՞նչ հռչակեց Շտուտգարտի Միջազգային Կօնգրէսը: Երկու բան նա հռչակեց,—նախ՝ որ բոլոր ազգերի անկախութիւնը, բոլոր հայրենիքների ազատութիւնը անձեռնմխելի է և բոլոր երկրները պրոլետարները պէտք է կազմակերպուեն ազգութիւնների անհրաժեշտ անկախութիւնը պահպանելու համար ամէն տեսակ բռնութեան և նախադարձակման դէմ: Ու, ճիշդ այդ ժամանակին, երբ հռչակուում էր այդ անձեռնմխելիութիւնը, ազգերի այդ անբռնաբարելիութիւնը, Միջազգային Կօնգրէսը հաստատում էր նաև, որ բոլոր երկրների պրոլետարների պարտականութիւնն է կազմակերպուել՝ խաղաղութիւնը պաշտպանելու համար. . . .

Ուրեմն, Միջազգային Կօնգրէսը հռչակեց երկու անբաժանելի ճշմարտութիւն, երկու անբախտելի ճշմարտութիւն. առաջին՝ ինքնավար ազգութիւնները իրաւունք և պարտականութիւն ունին եռանդովին կերպով իրենց ազգութիւնը պահպանելու: Երկրորդ՝ աշխատաւորները իրաւունք ունեն պատերազմները արդիւնէր. . . .

Շտուտգարտի մէջ Միջազգայնականի (Լինտերնայի՝ ցիճնալի) հռչակածը նոյնն էր, ինչոր ֆրանսիական Սոցիալիստ Կուսակցութիւնը արդէն հռչակել էր Լիժոսի և Նանսիի մէջ: Երբ Միջազգային Կօնգրէսի տեղեկաբեր Վանդերվելը ասում էր թէ Միջազգայնականը տարրաւորուած ազգերի մի անձև զանգուած, մի խաշմիս (խաշյամա) չէր, այլ ինքնավար ազգութիւնների մի ազատ և ներդաշնակաւոր դաշնակցութիւն. երբ նա ասում էր, որ հայրենիքների ինքնատիպութիւնը և ազատութիւնը անհրաժեշտ էին պրոլետարիատի աճման և մարդկային հանճարի բազմազան հարստութեան համար. երբ Բէքէլը, Յանձնաժողովի մէջ, լիշեցնում էր թէ երբ մի ազգ ընկճուած, նկուն եղած լինի, այդ հպատակ ազգի պրոլետարները, Լեհաստանի պրոլետարների նման, ա՛յնքան երկար և հաստատակամ կերպով կտողորուեն իրենց ժողովուրդը նորից վերակենդանացնելու գաղափարով, որ այլևս չեն կարող իրենց ամբողջ գործունէութիւնը դարձնել միմիայն պրոլետարիատի ուղղակի ազատագրութեան վրայ. երբ Բէքէլը աւելացնում էր թէ մի ազգ ինչ պարագայի տակ էլ որ գտնուելու լինի, եթէ նախապէս հրաժարուի ինքնապաշտպանուելուց, դրանով նա բռնադատող, բարբարոս կառավարութիւններին և բեակցիային ծառայութիւն մատուցած կլինէր. երբ Վանդերվելը և Բէքէլը այդ ասում էին, նրանք ոչինչ չէին անում, եթէ ո՛չ Միջազգայնականի մէջ վերակրկնում էին այն, ինչոր ասուել էր Լիժոսի, Նանսիի մէջ, և ինչոր ես ասել էի մեր Կուսակ-

ցութեան Հերվէի հետ ունեցած ազատ հակաձառութիւնների մէջ. . . .

Հերվէիցը բաղկանում է երկու տարրերից. մի կողմից՝ չարաճուն կորովով նա կոչ է անում պրոլետարների կազմակերպուած եռանդին մարտնչել զինւորականութեան (միլիտարիզմի) և պատերազմի դէմ, և Հերվէիցի այդ մասը որ ամուր և առողջ էր, նա մնացել է, և ես առանց շփոթուելու յայտարարում եմ, որ մասամբ Հերվէի գործունէութեանն ենք պարտական, որ այդ խնդիրը պարզ և յստակ կերպով առաջադրուեցաւ: (Մափահարութիւն)

Բայց Հերվէին էլ պատահեց այն, ինչոր պատահում է մի որոշ գաղափարով տողորուած ամէն մարդու, այն՝ որ նա անփոքթ գտնուեց դէպի իրականութեան մի մասը և նա բաւականաչափ նկատողութեան չառաւ ազգութիւնների գոյութեան իրողութիւնը և այն համերաշխութիւնը, որ համաշխարհային պրոլետարիատը իրաւունք ունի ազգերի ինքնավարութիւնը պաշտպանելու, պահպանելու: Ես երկար չեմ ուզում կանգ առնել այդ մասին, քաղաքացիներ, որովհետև Նանսիի մէջ նա ինքը յայտարարեց որ իր մտածմունքին շատ պարզ և միակողմանի ձև էր տուել, որպէսզի աւելի լաւ թափանցէր մաքերի մէջ: Այո՛, աշխարհի ներկայ կացութեան մէջ, անկարելի է որ պրոլետարները չհազարգուեն ազգերի անկախութեամբ: Մարդկային միութիւնը (unité) ստրկացման մէջ կիրականանար, եթէ նա հետևանք լինէր բոլոր պարտուած ազգութիւնների կրանուելուն՝ տիրապետող մի ազգի մէջ. մարդկային միութիւնը ազատութեան մէջ կարող է ստեղծուել միմիայն ինքնավար ազգերի Դաշնակցութեամբ: (Մափահարութիւն)

Հերվէին ասում է, և նա միևնոյնը կրկնեց այս օրերում, թէ էփօլուցիայի (բնաշրջման) միևնոյն աստիճանի վրայ գտնուող հայրենիքները իրարու արժեն. . . կարելի է. և ճիշտ հէնց դրա համար, որովհետև այդ հայրենիքները իրարու համարժէք են, որ նրանցից մէկը իրաւունք չունի միւսին նուաճելու. . . (Հաւանութիւն): Հիները ասում էին. արգահատեցէք ստրուկին, որովհետև նա իր հոգու կէսն ունի. . . Ա՛հ, լաւ, միևնոյնն է և՛ ստրուկ, հպատակ ազգերի համար,—նրանց հողին ծալբատուած, խեղանդամուած է, նրանց հանճարը թերակատար է, և՛ գործաւորական ազատութեան ու մարդկային կազմակերպութեան մեծ գործի համար՝ մենք կարիք ունինք, որ բոլոր ուղեղները իրենց կարողութիւնն ունենան, որ բոլոր անհատները իրենց մտածմունքի ոյժն ունենան և բոլոր ազգերը իրենց ինքնատիպ գորութիւնը, իրենց հանճարը և իրենց դարգացման յատուկ հոգեկան կարողութիւնն ունենան. . . .

Շտուտգարտի առաջին դասն այն է—որպէսզի կարողանանք Միջազգայնականի մէջ տուած մանդատը կատարել—պէ՛տք է որ մենք կազմակերպուինք, պէ՛տք է որ մենք մեկ դարգացնենք, պէտք է որ մենք մեր

ոյժերը աճեցնենք: Մենք այդ կարող ենք . . .
ճշմարիտ մի ոյժ դառնալը մեզնից կախումն ունի:

Եւ, ճշմարտիւ, շատ դիւրին է հայրենիքը նորովել: Դրանք բառեր են. աւելի լաւ է հայրենիքը նուաճել: (Հաւանութիւն): Հայրենիքի տէր լինելը մեզնից կախումն ունի: Ինչո՞ւ համար նա բուրժուաների հայրենիքն է: Որովհետեւ դուք բաժանուած էք, որովհետեւ դուք ետասէր էք, որովհետեւ դուք անշարժ էք: (Ծափահարութիւն): Թուական աուտեղութիւնները ձերն է: Եթէ դուք միւսնոյն ժամանակին կազմակերպուած լինէիք և կամք ունենայիք, դուք կընկերականայնէիք հայրենիքը, դուք այն ձերը կանէիք, դուք այն կըրթնէիք պրոլետարիատի ստացուածքը, նրա իրը: (Ծափահարութիւն): Այս է, որ Միջազգայնականը ձեզնից պահանջում է, դէպի այդ նպատակն է, որ մենք պիտի քայլենք լուրջ երկրներէ մեր ընկերների հետ:

—Ժօրէքը խնդիրը այնքան պարզ կերպով է գնում, որ մի բառ աւելացնելն անգամ յանցանք է:

Կովկասի և այլ երկրների մէջ ապստամուղ հայ պրոլետարը կլինի ա՛յնքան «ետասէր», որ իր կարագից և պանրից անկն չի մտածիլ,—մենք այդ չենք ենթադրում, և այդ մտքի հետ չենք կարող հաշուել: Հայ պրոլետարիատը ամենաետասէր և իր սեպհական շահերը ամենախող դասակարգը կլինի, որեմն իր պատմական միասօլի բարձրութեան վրայ չկանգնող, եթէ նա արհեստական բարձր սահմաններից վեր չբարձրանայ և իր մաճկա-հայ եղբայրների ոգնութեան և եղբայրականութեան ձեռք չկարկանի,—այն եղբայրներին, որոնք այնտեղ մղում են նոյն այն պրոլետարական, ազատագրական կռիւլ, իր էութեան մէջ, ինչոր ուրիշները իրենց միջավայրերի մէջ:

Սոցիալիզմի և ազգութեան ու հայրենիքի պաշտպանութեան նկատմամբ ճառագարտի մէջ արտայայտուած մտքերը գրեթէ նոյնութեամբ արտացոլացան և՛ Էտսէիլ Կոնգրէսի՝ գերմանական Սոցիալ-Դեմոկրատների ազգային ժողովի մէջ, որ տեղի ունեցաւ անցեալ սեպտեմբերին:

Հետեւե՛ք, այժմ, Էտսէիլ ժողովին: Վիճաբանութեան նիւթն է, դարձեալ, հայրենիքի և սոցիալիզմի փոխադարձ շարաբերութիւնը:

Ռայխտագի մէջ, պատերազմական բիւռջէի առթիւ, Նօսթէն, ի թիւս այլ խօսքերի, յայտարարել էր և՛ հետեւալը.

ՆՕՄԻԷ

Հայրենիքը վտանգի մէջ գտնուած ժամանակին հայրենիքի սիրոյ նկատմամբ գերմանացի սոցիալիստները յետ չեն մնալ բուրժուա Կուսակցութիւններից: Ուրեմն, եթէ մէկը մեզ հայրենիքի դաւաճան համարի, մենք իրաւունք կունենանք նրան ստախոս անանելու:

—Նօսթէի այդ յայտարարութիւնը բուռն վիճաբանութիւն է յարուցանում:

Ընդհանուր եղբակացութիւնն այն է, որ Նօսթէի ասածները պէտք է հասկանալ յարաբերական մտքով, այսինքն թէ՛ երբ Գերմանիան յարձակման ենթարկուելու լինէր և իր անկախութիւնը ու ամբողջականութիւնը վտանգի տակ ընկնէր, միայն այն ժամանակն է, որ իր հայրենասիրութիւնը պակաս չպիտի լինէր բուրժուական հայրենասիրութիւնից:

Չափաւորական վերաբնիչ (րեվիլյուցիոնիստ) Դափլը, Նօսթէին պաշտպանելով ասում է. «Յայտնի բան է, որ երբ մենք խօսում ենք պատերազմի մասին, դա պիտի հասկանալ սոցիալիստ պատերազմ, երբ Գերմանիան յարձակման կենթարկուի: Բայց բաւական չէ, որ բուրժուական ասի թէ՛ «մենք յարձակման ենք ենթարկուած», որպէսզի նրան հաւատանք. պէտք է որ մենք ինքնեքս համոզուինք թէ իրաւ որ յարձակման ենթակայ ենք և էն էլ՝ առանց պատճառի: Ուրեմն ճգնաժամի բուլէին՝ հայրենիքի պաշտպանական վարիչները չեն, որ խնդիրը պիտի վճռեն, այլ պրոլետարիատը ինչը զիտակցորէն պիտի վճռի թէ արդեօք իրաւունք և պարտականութիւն ունի ներկայացած պատերազմին ծանակցելու: Բուրժուական, ղեկավարիչ դասակարգին չէ, որ պրոլետարիատը պիտի անաս, այլ իր սեպհական գիտակցութեանը, որ իրեն յենակէտ պիտի ունենայ պրոլետարական շահի:»

—Մեր ասածը ուրիշ բան չէ, և պրոլետարական շահի ո՛չ մի գիտակցութիւն չի ասում թէ երէկ հայաստանից խոյս տուող, պանդխտութեան երող պրոլետարը մուսուր ամէն ինչ և ո՛չ մի պարտականութիւն ու իրաւունք չստանձնէր դէպի այն կռիւլ, որ մղւում է իր հայրենիքի մէջ, նոյն այն կառավարութեան դէմ, որ իրեն ստիպեց դուրս գալ, և օտար երկրից ի՛նչ նոյն այդ ճնշող կառավարութեան տուրք ստալ:

ԻՒԼԻՒՅ

Հայրենիքի անկախութիւնը պահպանելու տեսակէտից ինքը համաձայն է Նօսթէի հետ: Ամէն երկրի սոցիալիստների համար բնական մի բան է հայրենիքի անկախութեան պաշտպանութիւնը, և նա՛ ո՛վ որ աչքովէն չի մտածում, նա դուրս պիտի վտարուի սոցիալիզմից: (Ծափահարութիւն):

—Իւլիիլի իտքը այնքան սրտ է ներկայացած խնդրի առթիւ, որ անցնում ենք:

ՇՏԱՏՀԱՒԻՆ

Ընտրական շրջանում ևս նոյնպէս ենթակայ եմ եղել մեր թշնամիների պրպարատիւններին և ստախոսութիւններին, և ես պատասխանել եմ, որ ղեկավարիչ դասակարգերի հայրենասիրութիւնը հայրենասիրութիւն չէ, ես ստել եմ, որ բուրժուական մեզնից յափշտակել, մեզնից գողացել է հայրենիքը, ուստի և մենք ո՛չ մի պատճառ չունէինք այդ հայրենիքը պաշտպանելու բուրժուակցի շահի տեսակէտով: (Ճատ լաւ):

Բայց ի՛նչպէս, ղեկավարիչ դասակարգերի անհատների և կապիտալիզմի գործածած մեծ դաւաճանութեան յափտենական ոճիրի առաջ, Նօսթէն ի՛նչպէս կարողացաւ ստել թէ. Այ՛, եթէ պատերազմ ծագի, եթէ դուք յարձակման ենթարկուիք, մենք ձեզ հետ կլինենք:

Նօսթէն մտածում է, երբ մի հակառակորդ նրան ասի թէ՛ դուք հայրենիքի դաւաճան էք, ինքը պիտի պատասխանի՛ դուք ստախոս էք: Ո՛չ, եմ կասեմ. հայրենիքի դաւաճան, բայց ո՛ւր է հայրենիքը, դուք հայրենիքը աշխատաւորներից գողացել, յափշտակել էք. մե՛նք ենք որ հայրենիքը նրանց տալ ենք ուզում:

—Բերլինի պատգամաւորը ուղղակի կերպով հակադրում է պրոլետարական հայրենիքը բուրժուական հայրենիքին:

Աշխատանքը դասակարգող ո՛չ ձի պարտականութիւն չունի դէպի բուրժուա հայրենիքը, որովհետեւ նրա վրայ ինքը իրաւունք չունի: Պարտականութիւնը հետեւանք է իրաւունքի: Չկայ իրաւունք, չկայ և՛ պարտականութիւն: Հարստահարած, թաւառած, ամէն աեսակ բռնութեան դո՛հ եղող հայ աշխատանքի, ձի կտոր հող չունեցողին արի ասա, թէ անուն հայրենիքի ի՛նչ նորից դահուի՛ր, տո՛ւր կեանքդ, պարսի՛ր քսակդ, որ պէտքի աչգ հայրենիքը պատանեք "թուրք" լծից, ու դարձեալ կղի՛ր այն, ինչոր էիր, այսինչն որ դարձեալ պիտի շարունակես մնալ այն, ինչոր ես, կեանքդ էլ վրայ տալով: Ինչո՞ւ, — որովհետեւ այդպէս է պահանջում հարուստ հայի շահը, այդ դնով է որ նա խոստանում է քեզ ոչակցել օսմանեան լուծը թօթախելով օսմանեան լծի փոխարէն հայ լուծ, եթէ կուզես, այդ է քո ճանապարհը գործելու և այդ տրամաբանութեամբ ի՛մ դասակարգային աջակցութիւնս ստանալու:

Եթէ հայ աշխատանքը, հայ դիւրացին, հայ ճարտարան, հայ արհեստանոցը, հայ սեպհակամտաէրը ցանկանում է թրքական լուծը թօթախել, այդ նրա համար, որ իր վրէժն վրայ ծանրացող լուծ է, և ո՛չ թէ որովհետեւ նա թրքական է: Լուծը լուծ է, ինչ ծագումից էլ որ գալու լինի: Եթէ պրոլետարիատը ուզում է լուծ թօթախել, նա գիտակցութիւն կունենայ անպիտի դրութիւն ստեղծելու, որ լուծը վերանայ, փշրուի ու գոյսթիւն ունենալուց դուրս: Ահա թէ ինչու համար արտադրութեան գործիչները սեպհակամտայուն և աշխատանքի միահեծանութեան տիրապետութիւնը երբէք իր մտքից չալիտի համի, երբ նրա սուսն են ներկայանում քաղաքական դանաղան խնդիրներ նոյն խի իր ստաջին քայլերի մէջ:

Լսենք հիմա սօցիալիստ ֆէմինիզմի հռչակաւոր պրօպագանդիստին:

ԿԼԱՌԱ ՅԵՏԿԻՆ

Նօսքէի ճառի թերի կողմն այն է, որ նա չի հաստատել թէ կայ դասակարգային մի Կուսակցութիւն, որ կանգ չի առնում սահմանազմի վրայ եզրող սիւների առաջ: Մենք ոչինչ չենք ուզում ծածկել մենք չենք ուզում ո՛չ մի կասկածի տեղի տալ այն մասին, թէ մեր հասկացած հայրենասիրութեան և ղեկավարիչ դասակարգերի հասկացած հայրենասիրութեան միջև ո՛չ միայն աստիճանի տարբերութիւն կայ, այլև բնաւորութեան տարբերութիւն: (Բուռն ժափահարութիւն): Դեկավարիչ դասակարգերի հայրենասիրութիւնը պահպանողական է. նա բեկոյցիտներական է, նա միայն մի նպատակ ունի — հայրենիքը իր ստացուածքի նման լուրացնել իր դասակարգային շահագործութեան համար և դասակարգային այդ շահագործութիւնը տարածել սահմաններից անդին, ուրիշ երկրների մէջ . . . Այդ ըմբռնումով տոգորուած, Միջազգային տապնակները մենք այլապէս ենք դատում, քան բուրժուա դասակարգերը:

— Եթէ մեր հասկացած հայրենասիրութիւնը պրոլետարական մտքով չլինէր, մենք երբէք չէինք ասիլ թէ պետութեանց մէջ բաժան-բաժան եզրող հայաստանի սահմանները մեզ համար նշանակութիւն չունեն: Մենք մի տեղ բուրժուազական հայրենասիրութեան վրայ չենք կանգնած, մի այլ տեղ պրոլետարական, երկու տեղումն էլ մենք պրոլետարական հայրենիքի, պրոլետարական հայրենասիրութեան գաղափարն ենք պաշտպանում, ուստի երկուորականութեան (դուալիզմի) խօսք չի կարող լինել մեր թէղի նկատմամբ:

Նորից լսենք Բէքէլին:

ԲԷԲԷԼ

Ռայլստատում ես ասել եմ. եթէ հայրենիքը մենք խկապէս պիտի պաշտպանենք, իրօք էլ կը պաշտպանենք. որովհետեւ դա մեր հայրենիքն է. որովհետեւ անհրաժեշտ է որ մենք պաշտպանենք այն հողը, որի վրայ որ կը թնուած ենք. ապր՛ որի լեզուն որ խօսում ենք և որի վարքն ու բարքն ունենք. և որովհետեւ մենք ուզում ենք ունենալ այնպիսի մի երկիր, որ ուրիշ բոլոր երկրներից պերպանց լինէր իր կատարելագործութեամբը, իր դեղեցիկութեամբը և արտադրութեամբը, ուստի դրա համար էլ պրոլետարիատը ձեզ հետ կուռի մէջ է: (Բուռն ծափահարութիւն):

Այժմս ինձ ասում են — և Կառլցկին նոյնպէս այդ առարկութեան մէջն է ընկել — բայց յարձակողական պատերազմը պաշտպանողական պատերազմից ի՛նչպէս դանաղանել: Ճշմարտիւ, շատ ցաւալի պիտի լինէր որ այսօր, երբ ժողովրդի մի մեծ մասը ամէն օր աւելի ու աւելի է շահագրգռուած քաղաքականութեամբ քան առաջ, մենք անընդունակ կլինէինք տարբերելու թէ արդեօք ինչո՞րք պաշտպանողական պատերազմի մասին է կամ ոչ: Տակաւին 1870-ին այդպիսի մի աչքակապութիւն կարող էր պատահել: Սակայն նոյն խի այն ժամանակը մենք գիտցանք որ Բիսմարկն էր — ինչպէս Էմսի հեռագրի խորհակտութիւնը յետոյ երևան եկաւ — որ Նապօլէօնին հարկադրել էր պատերազմի դուրս գալ: Ճշմարտ է որ այն ժամանակ մեր դիրքը՝ Լիբլինիտիւնը և իմո՛, հաճելի չեղաւ նոյն խի մեր Կուսակցութեան մէջ, որովհետեւ Բրունշվիլի Կօմիտէն թէ ինձ և թէ Լիբլինիտի գէմ հակառակ դիրք բռնեց: Եթէ նման մի պարտադրում Կուսակցութեան գոնադան մասերի միջև թիւրիմացութիւններ ծագելու լինին կարելի է այդ մասին վիճարանել: Բայց, յամենայն դէպս, շատ ցաւալի կլինէր, որ այն մարդիկը, որոնք, այսպէս ասած, քաղաքականութիւնը իրենց գրաւումն են արել, անընդունակ լինեն չգիտնալու թէ արդեօք ինչո՞րք վերաբերում է պաշտպանողական պատերազմին, թէ՛ յարձակողական: Այսուամենայնիւ Կառլցկույ ծածուկ չէ այն, որ Եւրոպայի դրութիւնը այսօր նոյնը չէ, ինչոր ասաց: Այսօր բոլոր կառավարութիւնները պատերազմ ցանկանալու երևոյթից ուզում են խոյս տալ, և նրանք շատ բաւ գիտեն, որ եթէ այժմս պատերազմ ծագելու լինի, հաստատուած ամբողջ կարգ ու կանոնը լնդրոյ առարկայ կդառնայ:

Բնկեր Դօսը նկատում է, որ երբ ես ինձ պատրաստ էի յայտարարել հրացան առնելու նոյն խի ձերութեանն օրերում, այդ խօսքս միայն Ռուսաստանի մասին չէր կղել: Եւ սակայն, ես չաչոնում եմ, որ խօսքս միայն Ռուսաստանի մասին է եղել և ո՛չ ուրիշ երկրի: Եթէր տարի պանից առաջ ես չաչոտարեցի, որ եթէ պատերազմ ծագելու լինի մեր և Ռուսաստանի միջև, որին ես ամէն քաղաքակրթու-

թևան թշնամի եմ նկատում, որին բոլոր Հարստահար-
 ւածների ամենավտանգաւոր թշնամին եմ համարում՝
 ոչ միայն իր սեպհական երկրում, այլ բոլոր Եւրո-
 պայի, նոյն իսկ մասնաւորապէս մեզ՝ գերմանացիներ-
 իս համար. այո՛, երբ մի պատերազմ ծագելու լինի մեր և
 այդ Ռուսիայի միջև, որ գերմանական բէակցիայի
 պիտաւոր յենակէան է, ես պատրաստ եմ, ես՝ ձերունի
 երիտասարդս Հրացան առնել և առաջ քայլել:

— Ուրեմն Բէքէլը Էստէնի ժողովի մէջ նորից վերակրկնում
 է իր գաղափարները, այն է՝ թէ պրոլետարիատը պարտակա-
 նութիւն ունի Հայրենիքի անկախութիւնը պաշտպանելու, ու-
 րովհետեւ այդ Հայրենիքը այն կենսական միջավայրն է, ուր
 պրոլետարները կանոնաւոր ընթացքով զարգանում են: Հայ-
 րենիքը պէտք է պաշտպանել, որովհետեւ պրոլետարը ու-
 դում է ձեւափոխել այն և շահագործող Հայրենիքից՝ աշխա-
 տանքի Հայրենիք դարձնել. քանի որ Հայրենիքը չպէտք է
 պաշտպանել բուրժուազրիայի և ղեկավարողի շահի տե-
 սակէտից, այլ պրոլետարիատի, ուստի, ի հարկին, երբ ինքը
 անկաշկանդ համոզում կգոյացնի այդ մասին՝ նոյն իսկ պա-
 տերազմի դաշտ դուրս կգայ: Պրոլետարական Հայրենասի-
 րութիւնը ո՛չ «անպայման հայրենասիրութեամբ» է պայծա-
 նաւորում և ո՛չ էլ «լուիկ-մնջիկ կրաւորական հնազանդու-
 թեամբ», այլ ներգործական այն կամքի և համոզման վրայ
 կրթնած, թէ դա ի մ ս էլ պիտի լինի:

Տիրերիս Գրակըսը իր հռչակաւոր ճառի մէջ ցոյց էր
 տալիս թէ մինչդեռ Խաւիսյի գաղանները իրենց համար
 որջեր ունէին հանգստանալու, ընդհակառակը՝ անտուն-անտեղ
 էին և որ և է ապատանաւորան ու կեանքի նիւթական ապահովու-
 թիւն չունէին՝ իրենց կանանց և երեխաների հետ՝ այն մար-
 դիկները, որոնք հռովմէական Հայրենիքի մեծութիւնն էին
 պաշտպանում:

«Հեղինակութիւն է, ասում է Գրակըս, երբ պատերազմի ժամանակ
 Հրամանատարները նրանց հրամայում են կուռել իրենց թերափ-
 ների (ընտանեկան աստուածների) և իրենց նախահայրերի գե-
 րեղմանների համար (այսինքն Հայրենիքի): Որովհետեւ նրանց մէջ
 կան այնպիսիները, որոնք հազիւ թէ մի գերեզման և ընտա-
 նեկան մի խորան ունեն: Նրանք սուր են կրում և ճակա-
 տամարտերի մէջ մեռնում՝ տրիշների համար ձեռք բերելու
 Հարստութիւն, փառք և հեշտաբոյր կեանք: Նրանք աշ-
 խարհը յաղթեցին և աշխարհի տէրը դարձան, մինչդեռ ի-
 րենց համար հողի մի անկիւն անգամ չունեցան»:

Եթէ հռովմէական քաղաքակրթութեան օրօք Գրակըսը
 յանդիմանում էր իր ժամանակի ղեկավարիչ և տիրապետող
 դասակարգին, որ նա իրաւունք չունէր «հողի մի անկիւն»
 չունեցողների կեանքը իբրև միջոց ծառայեցնել իր համար
 հարստութիւն, փառք և հեշտատաճ կեանք ստանալու, նոյնը
 աւելի մեծ չափով պիտի ասել մանաւանդ այժմս՝ ամէն
 անգամ, երբ «հողի կտոր» չունեցողները սուր պէտք է առ-
 նեն և կուռի վաշտ դուրս գան:

Տաճկահա-հայ աշխատաւորին, հողադուրկին, ճարաբային,
 պարտքերի տակ թաղուած գիւղացուն, փոքր արհեստաւորին
 և պրոլետարին ո՞ճիր կլինի ասել թէ կեանքդ
 տո՛ւր, «ազգային յերափոխութիւն» արա՛, առանց նախապէս
 անտեսական և ընկերական խնդիրներ յարուցանելու: Ինչո՞ւ, —
 որովհետեւ հարուստները «սուր» ունենալու և կախելու միջոց
 չեն տալ քեզ: Եւ այդ խստովանել չէ՞ թէ հարուստը սուր չի
 տալ, երբ գիտնայ թէ իր շահը չի պաշտպանում. այդ ասել
 չէ՞ թէ քո շահը թո՛ղ և հարուստի շահը պաշտպանի՛ր, որ սուր
 ունենաս. ուրեմն էլ ի՞նչ օգուտ այն սրից, որ քեզ համար
 չպիտի ծառայի, այլ մի ուրիշի:

Կեանք սուր, պարտականութիւն կատարի՛ր, երբ քո սեպ-
 հական իրաւունքդ է քեզ այդ թերազրում և ո՛չ թէ ուրիշի
 շահերից բխած հասկացութիւնը: Եղի՛ր հեռուողական
 ինքդ քեզ: Ազգը ամբողջութիւն է, մինչդեռ այդ ամբող-
 ջութիւնը բաղկացած է երկու մասերից, որից ամէն մէկը ներ-
 կայուծա ունի իր սեպհական պարտականութիւնը և իր սեպ-
 հական իրաւունքը, ուստի ճայրադոյն անարդարութիւն է՝ երբ
 մի դասակարգ իր սեպհական իրաւունքի և պարտականութեան
 պիտակցութիւնը չունենալով, նրան ստիպում են ուրիշները
 իր հակառակորդ դասակարգինը իրենը անել, որովհետեւ նա
 տղէտ է, որովհետեւ նա «անխել» է, որովհետեւ նա
 միջոցից զուրկ է:

Լսե՛նք և՛ Կառուցիւ ստամեները:

ԿԱՌԻՑԿԻ

Ի՞նչ կարծիքով մենք չենք կարող ասել թէ,
 նոյն իսկ պաշտպանողական պատերազմի պարտապիւն,
 մենք համախոհ կարող ենք լինել կառավարութեան նրա
 պատերազմների խանդավառութեանը: Բէքէլը մտա-
 ծում է թէ մենք այժմ աւելի լաւ դրութեան մէջ ենք,
 քան 1870-ին, հասկանալու համար թէ արդեօք պա-
 տերազմը յարձակողական է, թէ՞ պաշտպանողական:
 Ես չէի ուզիլ ինձ վրայ մի այդպիսի պատասխանա-
 տուութիւն առնել: Ես չեմ կարող երաշխաւորել
 թէ կառավարութիւնը ստուգիւ մեզ խաբում է. կամ
 թէ իրաւացի կերպով նա նպատակ ունի սպառնալիքի
 տակ եղող ազգին պաշտպանելու: (Շատ լաւ:) Բայց
 նոյն իսկ այդ պարագան մի կողմ թողնելով, հարց է՝
 թէ արդեօք երբ յարձակման ենթարկուելու լինենք, ա-
 մէն պարագայի տակ՝ սօցիալիստ պրոլետարիատը պար-
 տականութիւն ունի՞ պատերազմին մասնակցելու: Եթէ,
 օրինակի համար, Զապօնիան յարձակուելու լինէր
 Ռուսաստանի վրայ, մի՞ թէ ռուս սօցիալիստները պար-
 տաւորում պիտի լինէին, իրենց ազգութիւնը պաշտ-
 պանելու համար, պաշտպանել կառավարութեանը:
 Յայտնի բան է որ՝ ոչ: (Հաւանութիւն:) Մենք չը-
 պէտք է ղեկավարունք այն հարցով թէ արդեօք
 պատերազմը յարձակողական է կամ պաշտպանողական,
 այլ մենք մեզ այն հարցը պիտի տանք, թէ արդեօք
 այդ դէպքում պրոլետարական, դեմօկրատական շահը
 խնդրոյ առարկայ է թէ ոչ: — Առնենք, օրինակի համար,
 Մարօկիօն: Երէկ նախադրածակը գերմանական կա-
 ռավարութիւնն էր, վաղը՝ Ֆրանսիականը կլինի և
 մենք չենք կարող ասել թէ միւս օրը՝ անգլիականը
 չի լինիլ: Պատկերը շարունակ փոխում է. բայց ինչ
 էլ որ լինի, Մարօկիօն մի պրոլետարիատի արեան
 չարժէ: Եթէ Մարօկիօյի սովիւ պատերազմ ծագելու
 լինի, մենք ամենաեռանդուն կերպով դէմ կկենանք.
 Նոյն իսկ եթէ յարձակման ենթարկուելու լինենք: Մի
 օր Գերմանական կառավարութիւնը կարող է ցոյց
 տալ Գերմանական պրոլետարներին թէ իրենք յար-
 ձակման ենթակայ են. Ֆրանսիական կառավարութիւնը
 միևնույնը կարող է ցոյց տալ Ֆրանսիական պրոլե-
 տարներին, և դրա հետևանքը կլինի մի պատերազմ՝
 երբ Գերմանական և Ֆրանսիական պրոլետարները իրենց
 կառավարութիւններին կհետևեն ամենայն խանդավա-

առթեամք ու կոստեն իրարու խողխողել, իրարու սպան-
 նել: Սրա դէմ է, ահա՛, որ պէտք է կանխապատ-
 րաստուել, և մենք այդ վտանգի դէմ կանխապատ-
 րաստուել չենք կարող յարձակողական կամ պաշտ-
 պանողական պատերազմը աստիճանացոյց (կրիտերիում)
 ընդունելով, այլ պրոլետարական շահի աստիճանա-
 ցոյցը, որ միևնոյն ժամանակը միջազգայնականի շահն է:
 Խօսենք Փրանքո-Գերմանական պատերազմի մասին:
 Պրոլետարական շահ կա, որ Ալլաս-Լօրրէնի ազգա-
 բնակչութիւնը ոչ թով և աշխարհակարութեան իրա-
 տւնքով չմիացնուէր մի Պետութեան, այլ իրենց
 սեպհական հասարակութեամբ: Դեմօկրատիան կարող
 էր պահանջել, որ Ալլաս Լօրրէնցիները իրենք վրձ-
 ուէին: Այն ժամանակ այդպէս էլ հասկացան Ռայխստագի
 մեր ընկերները, և Բէքէլի համար պտուռ մի տիտ-
 դոս է, որ նա պաշտպանել էր ո՛չ թէ հայրենա-
 սիրական հայեցակէտը, այլ պրոլետարական և միջազ-
 գային հայեցակէտը: (Նոյնը կանի ապագային էլ):
 Բարեբախտաբար ո՛չ մի թիւրիմացութիւն չի կարող
 տեղի ունենալ գիտնալու համար, թէ արդեօք ազգային
 շահի, թէ՞ միջազգային շահի համար է, որ գերմա-
 նական Սօցիալ-Դեմօկրատիան պատերազմի պարա-
 րագային իր որոշումը պիտի տայ: Գերմանական
 Սօցիալ-Դեմօկրատիան չի կարող ասել թէ ինքը
 առաջ գերմանացի է և յետոյ պրոլետար: Այլ պիտի
 ասի թէ ամէն բանից առաջ ինքը պրոլետարական
 կուսակցութիւն է: Գերմանական պրոլետարները Փը-
 րանսիական պրոլետարների հետ են համերաշխ և
 ո՛չ թէ գերմանական ինկերների և շահագործողների:
 (Շատ բաւ): Երբ ժամանակը զայ՛ մենք մեր զիրքը
 կորոշենք պատերազմի վտանգի պարագային: Այդ
 բանը այսօր չի կարելի ճշդել, և ապառ ձեռք պիտի
 պահենք միջոցների ընտրութեան համար՝ առանց
 մէկն ու մէկը գանց առնելու: Բայց
 մի հարց կա, որ մենք գերմանացիներս մէն մի-
 նակ իրաւունք չունինք վճռելու, այն է՝ թէ որոշեալ
 մի պատերազմի հանդէպ մենք ի՞նչ զիրք պիտի
 բռնենք. և այդ հարցը վճռեց Միջազգայնականը
 (Լենտերնացիօնալը) Շտուտգարտի մէջ: Որոշ է որ
 գերմանական Սօցիալ-Դեմօկրատիան այդ ուղղու-
 թեամբ է ուղում գործել. և ահա զրա համար էլ
 Շտուտգարտի որոշումը համաշխարհային պատմու-
 թեան մէջ մեծ տեղ պիտի գրաւի: Ներկայ վիճա-
 բանութիւնները ապացոյց են, որ գերմանական պրոլե-
 տարիատը որոշել է այդ ուղղութեամբ գործել և
 գալիք անցքերը ինչ էլ որ լինեն, նրան պատրաստ
 կզանեն մարդու պէս շարժուելու: (Ծափահարութիւն):

ԲԷԲԷԼԻ ՊԱՏԱՍԻԱՆԸ

... Յայտնի բան է որ Ջապոնացիները եղան
 նախապարձակները, ուրախ ենք այդ մասին. մենք նը-
 րոնց չաջողութիւն ենք մաղթել, և մենք խսր-
 հօւրդ չէինք տօւել մեր ոռւս բարե-
 կամներին այդ նախապարձակները հա-

կ ա յ ա ր ձ ա կ ու ը ո վ պ ա տ ա ս խ ա ն ե լ ու ՛:

—Քանի որ «ազգութիւն» ասուած կըրը իր մէջ ներկայուծա
 ամբոխուծ է երկու դասակարգ, որոնցից մէկը «ազգային
 գործերի ղեկավարչութիւնը» և պաշտօնական «հայրենիք»
 տիրապետութիւնը իր ձեռքին ունի, իսկ այդ «ազգային գոր-
 ծերի ղեկավարչութեան» և այդ «հայրենիք» տիրապետու-
 թեան մէջ բաժին չունի աշխատատեղ դասակարգը, ուստի
 կառուցիկն յիշեցնում է որ պրոլետարիատը կորովածուծութիւն
 և զիտակցութիւն պիտի ունենայ այդպէս հասկացուած «ազ-
 գային շահերը» ստորադասել միջազգայնականի, ընդհանուր գոր-
 ծաւորականի շահերին, այսինքն գործաւորը իրեն թող չտայ
 երթալ մեռնիլ այն «ազգային» շահերի, այն «հայրենիք»
 համար, որ իրենը չէ, այլ պիտի ջանայ այդ «ազգային»
 շահից և այդ հայրենիքից՝ իրեն էլ բաժին հանել և նրա
 գործերի, ղեկավարութեան ու ծառայարարութեան մէջ բաժին
 առնել, վերջը ամէնքի միտակը հաւաքական սեպհականու-
 թիւնը դարձնելու նպատակով:

Ուրեմն, ներկայուծա, միջազգային բնաստութիւն ունեցող
 ինկլիբների վճռման ժամանակ, ինչպէս են պատերազմները,
 ազգային հայեցակէտը սրոշակի կերպով պէտք է ստորա-
 դասել Միջազգայնականի և հանրագործաւորական աշխարհի
 շահին, որ ասել է սոցիալիզմին:

Բէքէլը իր պատասխանի մէջ, նոյնպէս, «ազգային շահը»
 ստորադասում է պրոլետարիատի ազատագրութեան շահին:

Սա է դիրքը բոլոր սոցիալիստների, ո՛ւր էլ որ նրանք
 լինեն, միջազգային ինչ յարաբերութիւնների մէջ էլ որ
 ձեռնամուխ լինեն:

Ե գ ր ա կ ա ց ու թ իւ Ն. — Սօցիալիստական տեսակէտով
 ամէն ազգ կարող է և պէտք է որ ունենայ իր ազգային
 ինքնագոյութեան իրաւունքը. նա պէտք է լինի ինքնավար,
 ազատ, ինքն իր բախտի տնօրինողը, անկաշկանդ իր կամքի
 արտայայտութեան մէջ՝ որպէս մի ազատ անդամ: Եւ որ-
 պէս ազատ մի անդամ՝ նա կարող է և՛ պէտք է որ անգա-
 մակցի իր նման միւս ազատ, անկախ և ինքնավար ազգերի
 հետ ու այդպիսով կազմուի հանրամարդկային Դաշնակցու-
 թիւնը, ուր ո՛չ մէկը միւսին իշխում է, ո՛չ մի ազգ միւսին
 նուաճում է, ո՛չ մի ազգ միւսին ստորադասում է, այլ ա-
 մէնքը հաստատ, համերաւունք, միևնոյն իրաւունքը և մի-
 կնոյն պարտականութիւնը ստանձնող պէս ը մ ա ր գ կ ու-
 թ իւ Ն ր:

Ուրեմն նրանք՝ որոնք կարծում են թէ Տաճկա-Հայկական
 Դատից ձեռք պիտի վեր առնել, որովհետեւ այդ Դատը նա-
 ցիօնալիստական Դատ է, դա սխալ է: Սխալ է, որովհետեւ
 նացիօնալիզմը ենթադրում է դասակարգերի փոյութեան՝ ան-
 հրաժեշտութիւնը և իրաւունքը մի ազգի ծոցի մէջ. սխալ է,
 որովհետեւ նացիօնալիզմը ենթադրում է մէկ ազգի տիրապե-
 տութիւնը միւսի վրայ: Նացիօնալիզմ չէ, երբ մի ազգ ու-
 դում է ա պ ր ե լ, գ ո յ ու թ իւ Ն ու ն ե ն ա լ, ի ր
 ա զ գ ա յ ի ն ի ր աւ ու ն ք ն եր ր ձեռք բերել և
 ի ր ի ն ք ն ա վ ա ր, ի ր ս ե պ հ ա կ ա ն բ ա խ տ ի
 ա ն օ ր ի ն ո զ ր լ ի ն է լ: Նա՛ ով որ ժխտում է ազգերի
 այդ իրաւունքը, նա սոցիալիստ չէ, ուրեմն նա, ով որ այդ
 տեսակէտով չի ձուլում Տաճկա-Հայ Դատին, նա ո՛չ
 միայն սոցիալիստ չէ. այլ սոցիալիզմի անունով պարզապէս
 ա ն ա ր խ ի դ մ ք ար ո զ ր է, կամ տգէտ է և կամ պայքա-
 րելու, կռուելու ոգի չունեցող մէկն է, որ սիրում է բառեր
 թոթովել՝ առանց այդ բառերի արժէքը գիտնալու կամ ամե-
 նաթեթե ջանք անելու կեանքի մէջ գործադրելու՝ իր ոյժերի
 ներածի սահմանների մէջ:

Մենք սոցիալիստ ենք, և որովհետեւ սոցիալիստ ենք,
 Տաճկա-Հայ Դատը պիտի պաշտպանենք: Այդ Դատը մենք
 չէինք պաշտպանիլ, եթէ բուրժուական իդէօլոլիստը ղե-

կախարուելու լինելնք կեանքի մէջ: Կովկասի և այլ վայրերի մէջ նստողն բուրժուազական դարափոխարարմութիւնն է որ թոյլ չի տալ Հայկական Դատին (Տաճկա-Հայ Խորհրդին) ձօնեալ, որովհետև բուրժուազական շահը ունի պետական որոշեալ սահմաններ: Մենք որ միջադպրոցական ենք, մենք որ տեղական շահերի տեսութեամբ չէ որ ղեկավարուծ ենք, այլ ընդհանուր մարդկութեան, որ դեռ կազմուած չէ և կազմուելու վրայ է,—մեր թէօրիան, մեր իդէօլոգիան մեզ ս'չ միան թոյլ է տալիս, այլ մեզ վրայ հրամայական պարտականութիւն է դնուծ, մեր կարողութեան և ոյժերի սահմանների մէջ, առանց ֆլաստելու մեր տեղական կուռին, սահմաններից վեր բարձրանալ և ձեռք կարկառել, աջակցել նրանց՝ ուրոնք կուռուծ են յանուն ինքնադրոյութեան, յանուն աշխուտանքի տիրապետութեան իրաւունքի, ընդդէմ բռնապետութեան, ընդդէմ ծարղկային շահագործութեան: Երբ մենք Հայ ինքնագոյութեան մի ծանօթին ենք, մենք չէ'նք կարող անտարբեր մնալ, երբ այդ ինքնադրոյութիւնը ջնջող ձեռք կայ և անդին դրա համար կռիւ կայ:

Ինչո՞ւ համար է կուռուծ Տաճկա-Հայ աշխատուորը, — քաղաքական և անտեսական միահեծանութեան համար. դա չէ' և՛ ձօնակայ նպատակը, իր էութեան մէջ, ամբողջ սօցիալիստական կազմակերպութիւնների: Երբ այդպէս, սպախմ դրան աջակցելով ո'չ թէ կյաւաջանայ երկուարականութիւն իմ գաղափարների և դործունէութեան մէջ, այլ միութիւն և շարունակութիւն սահմանից անդին, որ ինձ համար բարոյապէս դոյութիւն չունի արդէն:

Եթէ սօցիալիզմը չի ժողովուրդը ազգերի իրաւունքը և նրանց ինքնադրոյութիւնը, սպա ինչո՞ւ համար Տաճկա-Հայկական Խորհրդին չալիսի ձօնեալ սօցիալիզմի վրայ կեցած:

Նրա՞ համար որ մեզ «ազգային յեղափոխութիւն» է պէտք, ինչպէս որ ուրիշ ազգեր արել են: Բայց այդ սխալ է: Նայեցէ՛ք, թերթեցէ՛ք պատմութիւնը, սկզբից մինչև այսօր, և դուք կտեսնէք որ ազգերի կեանքի մէջ, թէ ներքին յեղափոխութեան պարագային և թէ արտաքին յեղափոխութեան պարագային, այսինքն եթէ տառալիչ շարժումներ եղած են մի ազգի ներքին կեանքի մէջ, օրինակ, Թրանսիստան, Բելգիստան, Գերմանիստան, և արտաքին՝ աշխարհակալող սոցի դէմ, օրինակ Ամերիկեան Նահանգներու, Իտալիստան, Հունգարիստան, Ռուսիստան, Յունաստանու, և այլն, —այդ բոլոր շարժումները եղած են ո'չ թէ ամբողջ ազգի կողմից, այլ այդ ժամանակները ազգը ներկայացնող, ազգի գործերը ղեկավարող դասակարգի կողմից: Ո'չ ամբողջ ազգը միացած քանդեց Աստուածաբնութիւնը, և ո'չ էլ ամբողջ ազգը միացած քանդեց արտականութիւնը, այլ երկու ժամանակաշրջանում էլ ազգի մէկ մասը: մէկ դասակարգը այդ արեց, այն դասակարգը, որ հասնատուած կարող ու կանոնի մէջ իր շահագործուիլը, իր տիրապետելին էր տեսնուծ: Անգլիան, Թրանսիստան, Գերմանիան ունեցան ազգային յեղափոխութիւններ, մի քանի անգամ, բայց այդ ազգային յեղափոխութիւնն ասուածը խկապէս մէկ դասակարգի գործ էր ընդդէմ միւսի: Ամերիկայի Միացեալ Նահանգները, Հունգարիան, Իտալիան ունեցան իրենց ազգային յեղափոխութիւնը ընդդէմ արտաքին աշխարհակալի, բայց այդ յեղափոխութիւնները ամբողջ ու թե ան միտակ դործը չէր, այլ միայն մի դասակարգի: Միացեալ Նահանգների, Իտալիայի, Հունգարիայի . . . յեղափոխութիւնները այդ երկրների բուրժուա դասակարգերի գործն էր, պատմական այդ գործը նրանք են կատարել, ուրովհետև այդ ժամանակները ազգի ասելով այդ դասակարգն էր հասկացուծ, այսինքն ազգի պաշտօնական ներկայացուցիչը, աժեղը և կշիռ ունեցողը նրանք էին: Եթէ պատմական այդ պատկերը ներկայանուծ է ամբողջութեան, ամբողջ ազգի անունով և ամբողջ ազգի կողմից,

այդ նրա համար, որ միւս դասակարգերը կանուել էին նրանց մէջ կամ նրանց շահը իրենց էին համարուծ, կամ անոյժ էին, հասունցած չէին և կամ չէր ոք էին, մինչ ուրիշները գործուծ էին, թէև ըստ երևոյթի իր անունով էլ:

Տաճկա-Հայ յեղափոխութեան ազգակը, այսօր, Տաճկա-Հայ բուրժուազանչէ, պատմականօրէն նա այդ միտական չի ստանձնել, նա «ազգային յեղափոխութիւն» ասուած դրամայի մէջ չէ, որ իր շահը և զոյւթիւնը պայմանաւորուած է տեսնուծ. նա իրեն զոյւթեան և իր շահի ապահովութեան համար որոշեալ պահանջական պայմաններ ունի և իր կշիռը կանոնաւորութեան մէջ է դրել, առաւուռէն նա «ազգային յեղափոխութիւնը» պիտի աշխատի շահագործել իր տիրապետութեան, իր շահերի ասելի ընդարձակութեանը համար. աւերող և առանց աշխատանքի ստացած պատուը նա չէ, որ պիտի մերժի: Եթէ նա եղած լինէր Հայկական Դատի իրական ազգակը, նա ինքն արդէն իր միջից ձեռք կլինէր տարբեր և իր սեպհա կանոնաւորութիւնը կունենար այսօր հրապարակի վրայ: Այդպիսի մի փորձ նա արեց 40-ական, 50-ական և 70-ական թուականներին, բայց անընդունակ հանդիսացաւ առաջ երթալու: Մեր Սահմանադրութիւնը (Տաճկա-Հայ) է'ն բուրժուազական և անտեսական, տիրապետող դասակարգի, ազգի անունով լստող տարրի զլիկի դուրս եկած է'ն մեծ և դասակարգային է'ն որոշ արտադրութիւնն է: Դա եղաւ նրա մտունը և նրա գործը: Այնուհետև նա քաղաքական և ազգային կանոնաւորութիւնը որոշ պատճառ ունի: Ուրիշ ազգերի ազնուաբուրժուազական տարրերը անկախութիւն, ինքնավարութիւն ձեռք բերեցին, դրանց մէջ տեսնելով իրենց շահերի լայն ապահովութիւնը և իրենց դասակարգի զարգացումը ու յաւաքողիմութիւնը, իսկ մերոնքը հազիւ հազ կարողացան Պօլսոս կանոնի «Սահմանադրութիւն»ը ձեռք բերել, որով ազգի գործերը պաշտօնապէս յանձնուեցան մեր կղերա-բուրժուազասակարգին: Այդ «Սահմանադրութեամբ» Հայաստանի մէջ պարիակուած Հայ ժողովրդի ամբողջութիւնը ունէր 40 ձայն, «ազգային գործերը» վարելու գործին մէջ, իսկ միայն պօլսոսեց ին երը, այսինքն ազնուա-կղերա-բուրժուազականները՝ 80 ձայն. ուրիշ տեղերի բուրժուաները, որոնք «իրենց ազգային ղեկը» ձեռքերնին ունէին, այլապէս չէն վարուած և չէն էլ վարուծ:

Տաճկա-Հայ յեղափոխութեան իրական ազգակը եղած է և է՛ աշխատուոր դասակարգը, այսինքն այն դասակարգը՝ որ սօցիալիստական տարր է, և որի շահը արբանագծօրէն հակառակ է թուրք բռնապետութեան քաղաքական և անտեսական կարգերի գոյութեանը: Այդ տարրի համար պէտք է մի լայն սամկավարական պետութիւն՝ քաղաքական պայմաններ, որ ժամանակի ընթացքուծ աշխատանքի միահեծանութիւնը թաղաւորի, այսինքն արտադրութեան գործիքները ամբողջապէս անցնեն արտադրողներին:

Հայկական Դատի մէջ տաճկա-Հայ աշխատուորը ունի այն դերը, տիրող բռնապետութիւնը կործանելու և քաղաքական ու անտեսական նոր պայմաններ ստեղծելու, ինչոր իր նմանները այժմ ունեն ուսուական և այլ յեղափոխութեանց մէջ: Լատիշ, լեհ, ֆին, բոհեմացի, իրանդացի աշխատուորներն են, այսօր, այն տարրերը, որ պիտի լուծեն այն խնդիրները, որ չկարողացան. շատ առաջները լուծել իրենց կանոնաւոր, անընդունակ հանդիսացած, գործունէութեան յաւաքողիմութեան տեսակէտից, բուրժուալիստները,—այսինքն՝ մի կողմից իրենց ազգային ինքնադրոյութեան իրաւունքը ապահովացնել և միւս կողմից ջանալ առաջ բերել կեանքի այնպիսի նոր պայմաններ, ուր քաղաքականապէս և անտեսապէս աշխատուոր դասակարգը կարողանար զարգանալ, յաւաքողիմել և մի օր էլ պատմութեան շահագոր-

ծող անիւր շուռ տալ աւ սօցիալիստական աշխարհ ստեղծել իրենց միջավայրի մէջ:

Այդ երկրների բուրժուաները այժմ երկրորդ պլանի վրայ են անցել, նրանք նոյն իսկ տիրող արտաքին ոյժի կողմն են որքան որ այդ արտաքին ոյժը իրենց դասակարգային շահերի պահպանողականութեանն է նպատառւմ:

Այս է իրականութիւնը, որ մեզինչ օժան է չտեսնելով ուզում են բուրգը գրաւին ի վայր կանգնեցնել և պատմութեան մէջ հրաշագործութիւն անել, այն է՝ արդէն կոճղացած մի դասակարգի վրայ նոր պարտականութիւն դնել, որին ինքը պատմականապէս ընդունակ չի եղել. մեռելին ասել թէ դու կենդանացի՛ր պարտականութիւնդ կատարի՛ր և յետո՛յ մեռի՛ր, բայց մեռելը մեռած է, նա այլևս չի՛ արթննար: Հայ բուրժուան այլևս յարութիւն չի առնիլ և "ազգային դատ" ընդդէմ բռնակալութեան չի վճռիլ, եթէ նա վճռէր, արդէն իր հասկացողութեամբը կվճռէր, իսկ այժմ արդէն ուշ է: Եթէ մեռելը յարութիւն առնի, նա իր առաջը կը գտնի կենսալից տարրը, իրական դասակարգը, որ մեր պատմութեան մէջ կրջուած է ամենից փառաւոր դերը խաղալու: Եմէն գասակարգ պատմութեան մէջ իր գործունէութեան որոշ ժամանակաշրջանը ունի, այդպէս է տուած պատմութիւնը:

Հրաշագործութիւն չէ, այլ աճպարարութեան է՛ն բարձրագոյն աստիճանը պիտի լինի, եթէ գոնուի մարդիկ, որ կարողանան հայ աշխատաւոր դասակարգին վճռել տալ "ազգային դատ" է՛ն գաղափարներով և է՛ն սկզբունքներով, որոնցով որ պիտի վճռէր բուրժուա դասակարգը ինքը, եթէ նա ընդունակ և կարող լինէր վճռելու: Հայ աշխատաւորը ինքը "ազգային դատ", այսինքն ազգի ինքնագոյութեան իրաւունքի դատը վճռի՛, բայց այդ կուտի մէջ դեկլարուի այն դասակարգի շահերով և ձգտումներով, որ ո՛չ միայն անընդունակ եղաւ այդ հարցը վճռելու, այլ ինքը աշխատաւորի արինը ծծալն է և իրական յանձնառութիւն չունի այս բնագիւղ և, եթէ ունենայ էլ, հակառակ ժողովրդական շահերի խաւին պիտի գործի:

Հայ աշխատաւորը՝ տիրուող, տիրապետուող, շահագործուող, աշխատող, բայց չվայելող դասակարգը լինի՛, բայց ինքը կուտի մէջ ո՛չ թէ իր դասակարգային շահերի վրայ կեցած, ո՛չ թէ դասակարգային գոյութիւնը պայծամաւորող գաղափարների և սկզբունքների վրայ յետուած, այլ բուրժուական, այսինքն ինքը գործ արտադրի, այդ գործի դեկլավարութիւնը յանձնի մի ուրիշին, առանց որ և է հեռուոր նպատակի, այն պատճառաբանութեամբ, որ իրեն ուսուցիչները իրեն դաս են տուել թէ դասակարգային գոյութիւնը բնական է և մէկ դասակարգը միւսին պէտք է իշխի, ուրեմն դու թէև աշխատող, թէև քրտնող, թէև կեանք, արին առող, թէև յեղափոխութեամբ մի գործ արտադրող, բայց քանի որ դասակարգային տիրապետութեան գաղափարը կայ, որպէս յախտենական ճշմարտութիւն, ուրեմն դու որպէս դասակարգ՝ քեզ գոհի՛ր և ասպարէզը յանձնի՛ր միւսին, սրովհետև ուրիշ ազգերի մէջ այդպէս է եղել:

Հայ աշխատաւորը գիտէ որ ուրիշ ազգերի մէջ այդպէս է եղած, գիտնալով հանդերձ որ այդ ազգերի մէջ այդ հարցը լուծուող այն դասակարգն է եղած, որ հայ ազգի մէջ անընդունակ է եղել, բայց նա գիտէ և՛ Կարլ Մարքսի այն խօսքը թէ. "Ամէն ազգ ուրիշ ազգի պատճառութիւնից կարող է և պէտք է որ գասառնի: Երբ մի ընկերութիւն նոյն իսկ յաջողուած է իրեն շարժմանը ուղղութիւն տուող բնական օրէնքի շաւիղը գտնել... նա չի կարող ո՛չ թուիչք գործելով և ո՛չ էլ հրովարտական երով՝ իր բնական գար-

գացման փուլերը ջնջել. բայց նա՛ կարող է չդուրսեան ժամանակի ջոյքը կը՛ծաւակ և նրա երկունքի յաւերը մեղմացնել":

Աներկիւս ենք, որ կապիտալիզմը բնական դարգացման այն անհրաժեշտ փուլն է, որից ամէն ազգ և ամէն երկիր պիտի անցնի, դրան կասկած չի կարող լինել: Եւ արդէն Մարքսը ինքը այդ ասել է իր հետեւալ խօսքերով. "Ճարտարագործութեան տեսակէտից յետո՛մն այդ երկրները իրենց սեպհակաւն ապագայի պատկերը կարող են տեսնել ճարտարագործագէտ Լ.Ա. աւելի դարգացած մի երկրի մէջ": Ուրեմն այս վերջին թէպէտ մեր երկիրը, հայ ժողովուրդն էլ պիտի անցնի դարգացման այն շրջաններից, որից անցել են յառաջադէմ ազգերը և աւելի արագ կերպով դարգացած երկիրները: Ո՛չ միայն կասկածում, այլ համոզուած ենք, որ վաղը՝ երբ հայաստանի մէջ մի փոքր փոփոխութիւն կլինի, երբ ընդարձակ կերպով կտիրեն կապիտալիզմը դարգացման և ուսուցման համար անհրաժեշտ երող բոլոր պայծամները, այն ժամանակ Պօլսոյ, Ձմիւռնիայի, Եգիպտոսի, Մանչեստրի մէջ ապառանդ հայ դրամագրուները իրենց առաջին շահագործութեան վայրը կըլարձնեն այդ երկիրը, և նրանք կանեն այն ինչոր հարեան ազգութիւնների կապիտալիստները և նրանց նեցուկ տուող կապիտալիստական բէժիմը: Այսօր Խարբերի մէջ մի փոքր գործարան կայ 300 գործաւորով, վաղը, աւելի ապահով պայծամների մէջ, երբ աւելի ապահովութիւն կլինի կապիտալի, ո՛չ թէ 300, այլ 30,000 հայ աշխատաւոր է որ պիտի լցուն մէկէն այդ գործարանների մէջ, և այդ նրա համար, որ հայ ժողովրդի փոքր բուրժուալիստ ատուած մասը, պատմական աննօրմալ հանգամանքների պատճառով, որ այստեղ երկար կլինէր բացատրելը, աւելի շուռ քայքայուեց, քան օտար երկրների մէջ եղող իր դասակարգակիցները:

Եւ այստեղ մեղ առարկում են. ուրեմն՝ եթէ կապիտալիզմը այժմ չի տիրապետում Հայաստանում, էլ ի՛նչ սօցիալիզմ, վաղահաս չէ, և բնական դարգացման հակառակ չէ, նոյն իսկ Մարքսի խօսքով: — Մենք պատմ ենք, որ սօցիալիստական սկզբունքները չենք գրի որ կապիտալիզմի մուտքը արդիւնք և թոյլ չտանք, որ հայ ժողովուրդը կապիտալիստական փուլից չանցնի. մենք այդպիսի անհեթեթութիւն ո՛չ ասել և ո՛չ էլ մեղ կլիտալիստները ասել՝ մի որոշեալ նպատակի համար. մենք այս խնդրի մէջ միտումնաւոր քայլեր չեն որ նետում ենք, այսինքն ազգայնականութեան (նացիօնալիզմի) ողին չէ, որ մեղ մըում է այդպէս վարուել, — ց:

Նախ բոլորովին միամտութիւն կլինէր ենթադրել անգամ, թէ հայ ժողովուրդը, ուրեմն և Հայաստանը, այժմ նահապետական, ֆեոդալաւաւորական դրութիւն ունի որոշապէս: Մենք ասել և տուած ենք, որ Թիւրքիան դարգացման տեսակէտից մի ժիւղութիւն, մի ամբողջութիւն, մի ամբողջութիւն չի կաղմում, այնտեղ տնտեսական դարգացման ամէն աստիճաններ կգտնէք, ինչքան որ ուզէք:

Մի ընկերութեան աւատական կաղմը մասնաւոր սեպհականատիւրութիւն չի ենթադրում: Բայց Հայաստանի և Թիւրքիայի մէջ անհատական սեպհականատիւրութիւնը բնականին մեծ չափով կայ և գոյութիւն ունի: Կիլիկիայի մէջ կան սեղեր, որ ազարակալարձութիւնը նոյն բնաստութիւնն ունի, ինչոր Միացեալ Նահանգներում: Իրարու կողքին կայ և համայնական տիրապետութիւն, աւտոակնութիւն, իսկ դրանց բարբից վերև, որպէս իշխող, կանգնած է այն բարձրակետան կապիտալիզմը, որ իր շօշափելիքները (tentaclle) տարածել է Թիւրքիայի բոլոր կողմերը, թէև առանց տեղին վրայ գործելու: Եւ կապիտալիստական այդ հիգրոսի բոյներն են՝ Մանչեսթր, Բերլին, Լոնդոն, Պարիզ, Կայն, Կայն:

Capitulatiounները թիւրքիայից ծի հաւաքական սեպհակա- նաւորութիւն են արեւ եւրոպական ձեռն պետութիւններին. որոնց ճարտարագործութիւնը նոյնքան սիւսում և տարածա- կանութիւն է ստանում իրենց սեպհական երկրում, որքան և՛ թիւրքիայում: Կոշկակար, դերձակ, հիւան, հողատէր, փոքր և ձեռն արտադրող, իրենց ճրջակիցները ունեն ամէն տեղ և ամէն չափով, այն տարբերութեամբ, որ իրենք ի- յենց տեղին վրայ կաղնակերպութեամբ, զարգանալու օրինակն սպանաններ չունին, իսկ ճրջակիցները ո՛չ ձիան այդ պայ- մանները ունին, այլ ս ու ռ ն էլ իրենց կողքին կախած, թնդանօթն էլ յետևներին: Յորենը, գարին, պտուղն ի՛սկ օտարաձուտ ճրջակից ունի, էլ ո՛ւր մնաց ձիւս արտադրու- թիւնները: Եւ այն խաբուսիկ երևոյթը, որ ձիւներուցի ծուխը թիւրքիայի մէջ չի բարձրանում, այլ Գերմանիայի, Փրանս- սիայի, Անգլիայի մէջ, այստեղից եզրակայնել թէ, ուրե՛մն, թիւրքիայում կապիտալիզմի հետք չկայ. — դա իրականութեան հակառակ է:

Բայց այս ինդիւրները շօշափած ժամանակին ձեր հակա- ուակախօսները ծուսանում են ձի հանդամանք, այն՝ որ սօցիա- լիստ կուսակցութիւնների առաջին ձգտումն է ձեռք բերել քաղաքական իրաւունքներ և քաղաքական իշխանութիւն: Եւ այս հիմամբ է ձիան, որ ձենը ձեր սկզբունքները ու տարախիսն պահելով հանդերձ, կարող ենք, ձի յայտնի չափով, օգնու- թիւն և աշակցութիւն ստանալ ձեր այն բուրժուա տարրերից, որոնք պատմականօրէն անընդունակ եղան իրենց շահերի ըն- դարձակ ապահովութիւնը ձեռք բերել տիրող բռնապետու- թեան դէմ կռու ձղելով:

Մեղ ասում է թէ Հայաստանի մէջ ամայի, անմշակ, ընդարձակ հողեր շատ կան. բաւական է կեանքի և գոյքի ապահովութիւն, ու հայ ժողովուրդը ուզածին չափ կվարէ և կցանէ: Դա երազատեսութիւն է. ձենք Հայաստանի շատ կողմերը եղած ենք և ձեռն չափերով այդպիսի վայրեր չենք գը- տած: Դա 30-40 տարի առաջ՝ գոյցէ, բայց ո՛չ այժմս: Այժմս ա ն տ էր հողեր չկան, անմշակն ի՛սկ տէր տիրա- կան ունի:

Բայց դրանով ի՛նչ է ապացուցւում. ձի թէ նոյն իսկ Մի- այցեալ նահանգներում, Ռուսաստանում ամայի տեղեր չկան: Մի թէ ձի երկու ձրոն հողային տարածութիւնը կարող է նշանակութիւն ունենալ ընկերային և քաղաքական ինդիւրները բնաստութեան վրայ:

Մեղ ասում են, եթէ համոզուած էք, որ կապի- տալիզմը վարող ոյժ պիտի հանդիտանայ և ընկերային կարող ինքը պիտի կաղծի, իր սեպհական ընթիւնից անբաժան քաղաքական և սնտեսական հաստատութիւնները պիտի ու- նենայ, ապա ինչո՞ւ էք հիմակուանից պայքարում, քանի որ այդ փուլը անհրաժեշտութիւն է և զսպելը ձեր կա- րողութիւնից վեր է:

Այ թէ ինչո՞ւ, առնենք ամենահասարակ ձի օրինակ: Հին յայտերը աւելի քան 400 տարի գործ դրին, որպէսզի դր ա- ման ստեղծեն: Եւրոպական յառաջադէմ աղգերը իրենց թ ա տր ո ն ը, իրենց գ ե դ ա ր ու ռ ե ս տը ունենալու հա- մար հարկւարտար դարերի յղացման մէջ մտան: Բայց հայ ժողովուրդը հնդու թէ 20-30 տարի գործ դրեց այդ բարբը իւրացնելու և ինքն էլ, յայտնի չափով, այդ շրջանի մէջ մանկուս:

Գաղտնյական, համարարանական զարգացման գործը, գարեր է խլել ուրիշ աղգերից. մեզնից խլել է հապիւ. ձի քանի տասնեակ տարիներ, և այլն:

Ի՛նչ ենք արել ձենք՝ այդ պարագաներում, — չինչ, եթէ ոչ դարձեալ բնական զարգացման շաւղով ենք ընթա- ցել, իրաւ է, որ «թ ու ի չ ք ո վ» և «հ ր ո վ ա ր ա կ ո վ» մ ե ր գ ա ր դ ա ց մ ա ն փ ու լ ե ր ք չ ե ն ք ջ ն ջ է Լ:

Բայց ուրիշ աղգերի, ուրիշ ժողովրդների սրածուծութիւնից օգտուելով, դաս առնելով, այդ տեսակետներով, ձենք կա- րողացանք ձեր բնական զարգացման «յրութեան ժամանակա- միջոցը կրճատել և երկունքի ցաւերը մեղմացնել»:

Այսպէս էլ պիտի անենք թրքական բռնապետութեան դէմ ձղած մ ե ր ն ե ր կ ա յ կ ու ռ ի, մ ե ր յ ե դ ա փ ու լ ս ու թ ե ա ն մ է ջ:

Ոչ թէ երազել հայ ժողովրդի բարբ դատակարգերը ան- խըտիւր ձի կազմակերպութեան մէջ առնել և թուրք բռնա- պետութեան դէմ ձղել, ինչոր անկարելի և հակաբնական է, — և ձեր անցեալը ցոյց տուեց որ այդ անկարելի է, որովհետև ձի քանի անգամ փորձուեցաւ իրականացնել այդպիսի ձի գաղափար, բայց անյաջողութեան բաղխեց, և այսպէս էլ չէր կարող լինել — այլ կազմակեր- պել այն տարրերին, որոնք որ պատմականապէս ընդունակ և կարող են այդ անել: Նրանք՝ որոնք ասում են թէ բու- յոր հայերին ձի կազմակերպութեան մէջ պէտք է դնել, կրկնում ենք, այդպիսի հակաբնական ձի ընթացք չի կարելի բռնել, բռնու- ղին կապառնայ կատարեալ անյաջողութիւն: Բայց ինչո՞ւ այդպէս ասենք. նրա համար որ «հարուստները» դրամ տան: Եթէ ինդիւրը ձիան դրամի համար է, ասենք, որ դրամը վճռական դեր խաղացող չէ, եթէ յերափոխութիւնները դրա- մով լինելին, այսօրուայ բուրժուաները, այն երկրներում ուր իրենք տիրող են, ո՛չ ձի յերափոխութեան լուսանցք չէին թողնիլ: Ասենք և, որ յերափոխութիւնների ժամանակ դասա- կարգից դասակարգ անցնողներ կլինեն, շատ անհատ «հա- րուստներ» կհամակրին մեզի, շատերն էլ ո՛չ, նայելով իրենց անհաստական շահերին. բայց որպէս քաղաքական դա- սակարգ՝ նրանք չեն գործիլ, եթէ «օգնեն» էլ, այն էլ ձեռքի տակից, որպէսզի իրենց շահերը չխտանգուեն: Եւ ձիւս կողմից նրանք աւելի կպօւան և տիրապետողի հովեք կառնեն, երբ գործը գլուխ գայ ու աւարտ առնի: Նայեցէ՛ք ուղտերի քարավանին, ամէնից առաջ ացնողը, գլուխը կանգնողը ն առ ն է, նա է ամբողջ շարունը իր յետևից քաշողը: Այդ նաւը, ուրիշ աղգերի մէջ, բռնապետութեան լուծը թօթափելու գործում, եղել է այնտեղի բուրժուալիստ: Մեր մէջ այդպէս չեղաւ, ձեր ն ա ու ը ա շ խ ս ա տ ա ու ր, պրոլետար դատակարգն է, անհատ բուրժուաները սլ ո չ ե ն, յետևից եկողներ, յաճախ իրենց կամքին հնկառակ:

Այնտեղ ուր լեհ բուրժուազիան սնանկացաւ, հայ ան- զարգացած, անոյժ, օտար երկրների մէջ սպասսամուղ և շատ սահմանափակ թիւ կաղծող բուրժուալիստն չէ,՝ որ պիտի յաջողի:

Ուրե՛մն, քանի որ թուրք բռնապետութեան առաջին և ձեռն գոհը հայ գիւղացին, հայ արհեստաւորը, հայ մարա- բան, հայ աշխատաւորը, հայ պրոլետարիան է, որ իսկապէս սօցիալիստական տարբ է, — ձենք սօցիալիստական գաղափարա- բանութեամբ էլ պիտի մօտենանք Հայկական Դաւին: Այո՛, գիտնալով հանդերձ, որ ձենք անմիջապէս այնտեղ սօցիա- լիզմը չպիտի հաստատենք, գիտնալով հանդերձ որ կապի- տալիզմը և կապիտալիստը այնտեղ իր խիտա ճաւաղակնու- թիւնը պիտի գտնի և իր սեպհական օրէնքներով յառաջ երթայ. բայց գիտնալով հանդերձ, որ այսպիսով, հիմակ- ւանից այսպէս գործելով, ձենք բնորոշակ կլինենք աւելի շուտ, և աւելի արագ կրճատելու «յրութեան ժամանակաշրջանը» և աւելի ձեռն չափով «մեղմացնելու նրա երկունքի ցաւերը», այն է՝ կապիտալիզմից դէպի սօցիալիստական տիրապետութիւն անցնելը և սնտեսական ու քաղաքական ամբողջական աղա- տութիւն դրկելը:

Ի՛նչ վրաս կլինի եթէ այդպէս չանենք. նախ՝ երկտասար- դական ոյժը, գաղափարի նուերուած երկտասարդութիւնը ձեռնթափ կլինի: Երկրորդ՝ ոյժ չի գոյանալ, որովհետև գի-

ասկից աշխատանքը գատակարարը ո՛չ անխելքութիւնն և ո՛չ էլ դատակարարային ինքնատանտնութիւնն կունենայ ճիւղ ու բլուղ դատակարարի, որ իր սպազայ թշնամին է, ինչպէս և ներկայ, դարսփարարանութիւնը, իդէօլոգիան իրենը անի, նա չի կարող իր իրաւունքի և պարտականութեան հասկացողութիւնը ուրիշների իրաւունքի և պարտականութեան մէջ կլանել տալ ուրիշի «միտման» ինքը չի կատարել, պայծանձմ որ յետոյ ինքը «ազգասիրարար» գոհուած և ձեռնունայն մնայ, դա հակաբնական ճիւղ երևոյթ կլինէր. երրորդ՝ Հայկական Իստակի հետ կմնային ուրիշ երկրների մէջ եղող համանման աշխատանքը տարբերը, նրանք չէին կարող իրենց եղած վայրի մէջ պրոպետարական թէրիւտով առաջնորդուել, իսկ Հայաստանում՝ ոչ: Չորրորդ՝ մենք թոյլ կտայինք, որ մեռածների շղթան աւելի կուռ լինէր և աւելի երկար ժամանակ ծանրանար կենդանիների վրան ու մենք շատ երկար տարիների սկիտի կարօտէինք ունենալու այն, ինչոր կարող էինք ունենալ, եթէ այժմեանից սօցիալիստական սկզբունքներով գործէինք:

Եւ որպէսզի այդպէս չլինի, որպէսզի «դաս առնենք» ուրիշ ազգերի պատմութիւնից, որպէսզի կարողանանք կրճատել դալիք զարգացման տատիճանի յուլթեան ժամանակաշրջանը և նրա բերած ցաւերը մեղմայնենք, հարկաւոր է և հրաձայական պարտականութիւն է, պարտականութիւն որ պիտի յենուի գիտակցութեան և գիտութեան վրայ, հարկաւոր է որ հիմնականից մենք այդ գաղափարաբանութեամբ առաջ ենթանք, երբ ուզում ենք մեր հայրենիքից խորտակել տիրող քաղաքական կարգ ու կանոնը և ստեղծել նոր կեանքի նոր պայծաններ:

Հայկական հարցին, մեր անդրուելի համոզումով, պէտք է և կարելի է ծոտենալ միմիայն սօցիալիստական գաղափարաբանութեամբ, սօցիալիստական սկզբունքներով առաջնորդուելով:

Հակառակ դէպքում ամէն այլ բարդացութիւն և փորձ ապարդիւն կանցնի և ոչինչ էլ յառաջ չի գալ, բացի բացասականից:

Կա՛մ սօցիալիստական սկզբունքների առաջնորդութեամբ է որ Հայկական հարցը պիտի լուծուի, կա՛մ նա կ՛մեռնի. կ՛մեռնի՝ աճման իր սեպհական նիւթը չտանալով, իսկ այդ նիւթը նա ունի. ուրեմն ինչո՞ւ խնայել. դա ո՛ճիր չի՛ լինիլ:

Ասում են թէ երբ սօցիալիզմը մենք ու՛ մեր սերունդը չբարձր պիտի տեսնենք իրականացած, ուրեմն ինչո՞ւ համար աշխատել... սա գաղափարական երիտասարդի խօսք չէ: Ես ի՛մ բոլոր ուժովս կաշխատեմ, կտանջուիմ, կմեռնիմ, ո՛չ թէ նրա համար, որ անմիջապէս վայելեմ աշխատանքիս արդիւնքը, դա կլինի ամենադատապարտելի ետադիրութիւն. այլ պիտի աշխատիմ, մեռնիմ, որովհետեւ այդպէս է պահանջում ընկերային պարտականութիւնը: Եստ ուրիշները մեռել են, սպանուել են ինչ-նից առաջ և նրանց մահով մենք բերումս արդիւնքը ես եմ վայելում, ես էլ պիտի պայքարեմ, ես էլ պիտի մեռնեմ որպէսզի ի՛մ գործունէութեանս յառաջադրած արդիւնքից ուրիշները, ինչնից յետոյ եկողները օգտուեն: Այսպէս է եղած ընկերային այն պարտականութիւնը, որ անհատները և դատակարգերի պայքարող ոյժերը ունեցել են, և այդ հասկացողութեամբ էլ ասպարէզ մտել Ո՛ր մեծ յեղափոխականը, ո՛ր մեծ գիտնականը իր աշխատանքի արդիւնքից անմիջապէս օգտուելու գաղափարից ձրուեց դէպի փշտո ճանապարհը, դէպի Հետախուզութիւնը: Ես կընտրեմ, կկարծանեմ, կտապալեմ եղածը, եթէ ես գործունէութեանս արդիւնքից վայելեցի, լա՛ւ, իսկ եթէ ո՛չ, յետևից եկողները կլինեն վայելողներ. — խաջուած Յիսուսը, բանաբերի խորշերի, արտաբաղարների մէջ խոշտանգուողները, կախարաններից կոչ արձակողները փոյթ չունին, թէ իրենք պիտի վայելե՛ն կամ ո՛չ

իրենց ճիւղի արդիւնքը: Սօցիալ-Գե՛տոկրատը շատ լաւ գիտե՛ս որ տիրապետութեան շարքը կապիտալիզմին է, բայց դա արդէք չէ, որ ինքը չաշխատի, այն պատճառաբանութեամբ թէ ինքը անմիջապէս չպիտի վայելի: Սա ընկերոջ համար գոհուողի հոգեբանութիւնն չէ:

Ասում է թէ ամենաքաղաքակիրթ, ամենագարգայած, տրուտեստապէս ու քաղաքականապէս հասունացած ժողովրդների մեծամասնութեան համար ի՛նչ դեռ սօցիալիզմը ան մ ա ռ ս էլի գաղափար է:— Բայց գիտէ՞ք թէ ինչու անմարտելի է: Որովհետեւ այդ երկրների տիրապետող դատակարար երկրի կարգ ու կանոնը՝ օրէնսդրական իշխանութիւն, վարչականութիւն, արտադրութիւն, պ ե տ ա կ ա ն ամբողջ մեքենան իր ձեռքն է առել, ուստի թոյլ չի տալիս, որ այդ գաղափարը ժ ա մ ա ն ա կ ի ս տ ա մ ո ք ս ը ե թ թ ա յ: Եւ դրաման հէնց այն է, որ աշխատող դատակարգերից շատերը իրենց գաղափարաբան շահի դէմ են դնում, որովհետեւ իշխանութիւնը իր ձեռքին ունեցող բուրժուան նրան ա լ դատարարական է տալիս, քան նրա իրական շահը կպահանջէր: Եւ դեռ աչքի առաջ ունեցէք, որ այլ երկրների մէջ այդ գաղափարը ինքն է եղել, որ այդ կարգերը ստեղծելու, առաջ բերելու համար ար իւ շ է թափել. իսկ դուք ուզում էք, որ մենք՝ պրոպետարներս աշխատենք, և մեր աշխատանքի պտուղից ո՛չ միայն չօգտուենք մեր ց աւ եր ը կ ը ճ ա տ է լ ու և մ ե դ մ ա ց ն է լ ու ա ս ա ի ճ ա ն, այլ ողբափարաբար առաջնորդուինք մեր հակառակ գաղափարի գաղափարաբանութեամբ, որպէսզի երբ պ ե տ ա կ ա ն մ ե ք ե ն ա ն առանց նեղուելու իրենց ձեռքն առնեն՝ մեզ շա՛տ երկար ժամանակ անմարտելի դարձնեն այն, ինչոր իրօք շատ մարտելի է, բայց անմարտելի ու թեան էր և ո յ թ ն է տ ա լ ի ո, որ ո յ ճ ե տ և մ ե թ ս տ ա մ ո ք ս ի ն թ ո յ լ չ է ն տ ա լ ի ո մ օ տ ե ն ա լ ու: Եթէ անտեսապէս և քաղաքականապէս զարգացած այդ երկրների բուրժուա դատակարգերը սօցիալիզմի տիրապետութեան խնդիրը վ ա դ ու ա ն են յետաձգում՝ որովհետեւ այդպէս պահանջում է իրենց շահը, և որքան որ այդ վ ա դ ը ու շ գ ա յ, այնքան աւելի լաւ բայց մի՛ ծռուցէք, որ այդ երկրներում վ ա դ ը մ օ տ ե ն ս ո յ մ ե թ կ ա ն: Արդ, մենք ինչո՞ւ մեր վաղը ուշայնչենք մեր ձեռքով, երբ կարող և հնարաւորութիւն ունինք մօտեցնել. ի՛նչ խեղդով, ի՛նչ տրամաբանութեամբ, — մի երկու դուրուշի համար:

Սօցիալիզմը հիմա մի՛ քարոզէք, այլ պահէք. Հայաստանը ազատուելուց յետոյ Լա՛ւ, աչքներս լո՛յս Իսկ Հիմա՞, հիմա քարոզենք բուրժուազական իդէօլոգիա, այնինքն ասենք թէ, տեսէ՛ք Անգլիան՝ ազատ, անկախ երկիր է, այնտեղ կայ երկու գաղափար, աշխատող՝ չվայելող, պրոպետար և կապիտալիստ, դրանք պէտք են մի ա դ գ ի համար, մենք էլ մեր ազգը անկախ, ազատ՝ դարձնենք, որ մեր հարուստն էլ, մեր բուրժուան էլ, ի փառս «ազգային յեղափոխութեան», տիրի, ուսձանայ, յղիանայ և մենք էլ ազգասիրաբար նրա վարձու բանուորները գառնանք, ինչպէս որ օտար երկրներումն է: Եւ ինչո՞ւ այդպէս ասենք, — որովհետեւ եթէ այդպէս չասենք, հարուստը դրամ չի առլ «թ ու ը ր ք ի» ձեռքից ազատուելու:

Յետո՛յ սօցիալիզմ քարոզենք, — երբ բուրժուազական կարգ ու կանոնները իրենց բուրժուազական շղթաները կզննեն: Թնդանօթ, հրացան, բանա, կախարան՝ դրանք կլինեն այն ժամանակուայ «թուրքերը»:

Բայց ինչո՞ւ հիմնականից շեշտակի չքարոզեմ ընկերային էլիտիւլյուսի ուղղութիւնը և յեղափոխութեանց ճճարիւս փիլիսոփայութիւնը, ինչո՞ւ չասեմ թէ հիմնականից վալիքի վիտակցութիւնը մեք բեր և ըստ այնմ ճամբայ էլիր:

Իտալացի մի իշապան մի օր պը՛ր Լրուա-Ռօլլօյին պատմեմ է թէ ի՛նչպէս ինքը և իր ընկերները երբեմն ողևորուած

գործում էին, այն համարումով որ երբ ուղղը ազատուի և "սահմանադրութիւն" ձեռք բերուի, իրենց վիճակը պիտի փոխուի ու իրենք պիտի երջանկանանային: Բայց խեղճի հիասթափութիւնը որքա՞ն մեծ է եղել, երբ տեսել է թէ ազգը ազատուելոց և "սահմանադրութիւն" ունենալուց յետոյ էլ, իր վիճակը ո՛չ միայն չփոխուեց, այլ իր հարկերը ծանրացան և երեք էջից մէկն էլ ծախեց . . .

Ես չեմ կարող, և դա անպարարութիւն կլինի, հայ աշխատաւորին ասել թէ հէնց որ "Թուրքի" քշենք մեր երկրից, մենք կեանքի և գոյքի ապահովութիւն կստանանք և մենք բախտաւոր կգտանանք:

Ես կասեմ, որ խնդիրը "Թուրքի" ձեռքից ազատուելու մէջ չէ, այլ բոլոր տեսակի "Թուրքերի": Ես պիտի ասեմ, պողեոսար դու դեռ երկա՛ր, շատ երկար ճամբայ ունիս քաղկիք, դեռ շա՛տ գործ ունիս կատարելիք:

Ահա՛ առաջը Ամերիկան: Ի՞նչ է այստեղ այժմս քո դասակարգակից գործաւորի, աշխատաւորի դրութիւնը, թէև նա ազատուել է Անգլիայի լծից, և ունեցել է իր "ազդային յեղափոխութիւնը":

Ես պիտի ասեմ, որ բանապետութիւնը ունի իր բուժը, կապիտալիզմը՝ իրենը, դրանք երկու տեսակի լուծեր են աշխատաւորի վրի վրայ դրուած, երկուսն էլ քո արեւը ծծող, քեզմով ուռճացողներ են: Բանապետութիւն, կապիտալիզմ, մի՛ խաբուիր, աշխատաւոր, դու դարձեալ ս ա ղ ու կ դարձեալ դերի ես . . .

Քո փրկութիւնը, պրոլետար միայն այն ժամանակը կլինի, երբ քաղաքական և տնտեսական միահեծանութիւնը քո ձեռքը կլինի, իսկ մինչ այդ՝ կռի՛ւ, ճա՛րս Ահա՛ իմ ասածը:

Սոցիալիզմը՝ ապրաքայի գործ է, ասում են, ուրիշ ճար չգտնելով. լաւ է, ուղիւ է, յարում են հարկադրուած, բայց մեզ համար կանխահաս է այդ ճառին խօսելը:—Եթէ դուք չէք ուզում հայ ժողովրդի ստուար ճառի շահը մակարոյճ դասակարգին ծախել, նրա անգիտակից պատուանդանը դարձրել, —այն ժամանակ քարոզեցէք սոցիալիզմը գէթ այնքանով, որքան որ նա կառլ ունի մ ե թ կ ե ա ն ք ի, մ ե թ յ ե ղ ա փ ո խ ու թ ե ա ն հ ե ա, և այդպիսով ջանայէք թէ իրական ազատագրութիւնը ծառայեցնել և թէ նրան հաստատուն հիմունքներ ստեղծել, քանի որ այդ կարելի է և հնարաւոր է:

Նորից վերակրկնում ենք, առանց սոցիալիստական սկզբունքների Հայկական Դատին ծառնալը հայ ժողովրդի ստուար մեծամասնութեան շահին և ապագային գիտակցութիւն կամ անգիտակցութիւն դեմ երթալ ասել է: Առանց սոցիալիզմի չկայ Հայկական Դատ: Եւ դրա համար էլ մեր Հարունա-կական կոչը պիտի լինի.

Կեցցէ՛ սոցիալիզմ:
Կեցցէ՛ Հայկական Դատ:

Ս. ՍԱՊԱՀ-ԴԻՎԼԵԱՆ

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ

Տիրահոգի կուսակալ Ալի Պէյը որ անուանի եղաւ իր անբարոյական և աւերիչ յատկութիւններովը, իր վրայ էր հըրուելրած Միւշլիլի, տեղւոյն բոլոր զինուորականներու, կառավարութեան թուրք ու հայ պաշտօնեաներու և բոլոր հիւպատոսներու դժգոհութիւնը: Երկու շաբաթ առաջ հեռագիրը ծանոյց իր պաշտօնանկութիւնը և Պիզայի Միւթատըրի՛ յաջորդ նշանակուելը: Այդ լուրին վրայ յանկարծ

փոխուեցաւ սեպուցս ընդհանուր թուրք՝ ոչ զինուորական պաշտօնեաներու տրամադրութիւնը: Բանի մը ժողովներէ վերջ լեյուտեյան խուժանով հեռագրատուն և "կուզենք որ այս վալին մնայ հաս, եթէ ո՛չ մենք այս երկրի մէջ չենք կրնար մնալ, զի նա կաշիստէր հայ յեղափոխականները բռնել. իսկ ասոր մեկնելէն վերջ մենք անապահով կզգանք ինքզինքնիս, և այն, և այն" հեռագրեցին: Զինուորական հրամանատարն (կոմանդանը) ալ "ինք ունձամբ, հրացանաւոր զինուորներով շրջապատուած, հեռագրի դուխը նըստաւ և 24 ժամէն կուսակալի հեռացումը ինդրեց ու տակէն ալ լուր տուաւ շուկայի հայերուն, որ խանութներին գոյնէ՛ հեռանան, որպէսզի ինքը հեռագրէ թէ երկիրը անապահով դրութեան մէջ է՝ կուսակալի պատճառով: Երկու օր քոյ մնաց շուկան: Առաջին օրն իսկ հեռագրի պատասխանն եկաւ . . . Զինուորակիր, "Պիզայի կուսակալը չի պիտի քայ, այլ Պաշգալէի միւթատըրը անմիջապէս վան մեկնի և պաշտօնավարէ": Երէկ, օգոստոս 31-ին, Պաշգալէի միւթատըրը եկաւ: Այսօր, սեպտեմբեր 1, տրշալոյսին հին վալին մեկնեցաւ, կամ փախաւ, Ռուսաստանի ճամբով, Պօլիս:)

Այսօր՝ ժողովուրդը շուկան թէև բացաւ, բայց կոմանդանի յանձնարարութեան վրայ կրկին փակեցին, զի կուզէ նոր վալին ցուցնել թէ՛ այնքան ահաբեկած է ժողովուրդը, որ չի համարձակիր բանալ, և ահա այս ժողովուրդն է որ կանբաստանուի, որպէս յեղափոխական":

Այս անցքերուն մէջ աչքի ընկնելիքն այն էր, որ թուրք խանութպանները իրենց խանութները չբացեցին:

Թուրք յեղափոխականներն ալ չի շարժեցան, եթէ անոնք գործունէութիւն ցոյց տային, կրնային զինուորականութիւնը իրենց կողմը ունենալ:

Երէկ մի գազթիչէ սպաններ է Խոսպ գիւղի ռէսը, առանց յայտնի պատճառի:

ՄԱՐՏԻԿ

1 Սեպտ. (հ. տ.) 1907
Վ Ա Ն

ՆԱՄԱԿ ՓՈՒՐ-ՀԱՅՔԻՑ

Տերսիմի և կարգ մը այլ տեղերէ եկած յուրերը վերջին աստիճանի անհանգստացուցիչ են, կերևի թէ խուժութիւնները սաստիկ են, սրովհետև արձագանքը մեր կողմերը սալ սկսած է:

Թուրք կուսակարութիւնը տենդային գործունէութիւն ցոյց կուտայ, այս օրերս դէնքի և ռազմամթերքի արտղ և անհաստում փոխադրութիւններ կը կատարուին:

Անցեալի գասը չի մտնալով, ի հարկէ անխահեծութիւն պիտի ըլլար այդ բոլորը աքաթող ընել, խուժանը վերջագէս խուժան է, իսկ բանապետութիւնը՝ բանապետութիւն. ըսել կուզեմ վտանգի ուրուականը մեր վրայ յաճախել սկըսած է:

Այս վտանգի առաջ, չպէտք է գործանար, եթէ բռնեմ թէ մեր հարստաները, մեր ջօջերը դարձեալ մարի այն կարողութեան մէջ կը դանուին, ինչոր էին 1895-1896-ին: Այս մարդոց համար կերևի թէ պատմութիւնէն, անցեալէն խրատուիլ չկայ:

Սակայն, ինչ որ ալ պատահելու ըլլայ, այժմ ո՛չ 1895-ն է և ո՛չ 1896-ը, այժմս կայ որոշեալ գիտակցութեան հասած ժողովրդական մի դանդուած, որ ո՛չ միայն թոյլ չի պիտի սոյ առաջուան նման կոտորուիլ, այլ հարկաւոր եղած ընդդիմադրութիւն երևան պիտի գնէ, իր ամբողջ ճիգերը թափելով:

ՓՈՒՐ-ՀԱՅՔԻՑԻ

29 Սեպտ. 1907
ՓՈՒՐ-ՀԱՅՔ

(* Բաթումի մէջ սպաննուեցաւ: Խմբ.

ՆԱՄԱԿ ՍԵՒ ԵՌՎԻ ԹԻՔԱԿԱՆ ԱՓԵՐԻՑ

Այն ժամանակ՝ երբ համիտեան բանապետութիւնը իր ամբողջ ճիգը կ'ընդունէր մեզ բնաջնջելու, մեզ վտարելու մեր արիւնքը քրտինքով արգաստուարած երկրէն. այն ժամանակ, երբ մեր անհուն ցաւերուն ու տառապանքներուն մէջ մխրճուած՝ դարձեալ՝ կտտաւ հենք յուսոյ աստղի մը, միշտ քաղցր երազներ տաճելով, թէ այս բոլորը որ մը չէ որ մը վերջ պիտի գտնէ, — այդ իսկ պարագային մեր ցաւը, մեր կակիճը անտանելի կը դառնայ մեզ համար, մենք՝ կը կորսնցունենք մեր հաւատարակչութիւնը, մեր աչքերը արիւնի արտասուքով կը լեցուին, երբ հեռուէն, ազատ երկրի մէջ ապրտանող հրապարակաստներու գրածները կը կարդանք թէ Տաճկաշէնի Դատը պէտք է թողնել, որովհետեւ այն "ազգայնական" Դատ մըն է: Ասանկ է եղեր: Ուրեմն մենք կտորուցինք, մենք ջարդուինք, մեր եղբայրներէն՝ օշոնութիւն սպասելու իրաւունք չունենանք, որովհետեւ մենք հայ ազգի անդամ ենք: Արեւի, Սուլթան Համիտը արդէն ինչ կըսէ: Միթէ ան ալ մեզ արդէն չըսեր, թէ մեզ կտորելու տաճ, որովհետեւ դուք Փետոս ազգի զունակներ էք, այսինքն մեր ազգային գոյութեան Դատը կուզէք պաշտպանել, կուզէք թէ մեր ազգութիւնը պահել և թէ իմ բանապետութեան լուծը մեր վրայէն թողուլ: Ասացէք, խղճածիտ ընթերցողներ, այս երկու տեսակ մտածածուքի մէջ նմանութիւն, թէ հակառակութիւն կայ:

Մեր ցաւը կը սաստիկանայ, երբ ուրիշ կարգի տուարկութիւններ կը լսենք: Ի՞նչ կըսեն Սուլթան Համիտը և անոր կամակամար ծառաները: Անոնք զիշեր ցորեկ կաշխատին Թիւրքիայի մէջ իրորու բովէ բով ապրողներու մէջ շարունակ խռովութիւններ սերմանել: Լազը՝ թուրքի դէմ, թուրքը՝ բուրդի դէմ, արբանացիներ՝ արաբի դէմ, և բոլորը միասին սոթքի հանել հայի և ուրիշ կեանքներին դէմ: Ուրեմն ազգ ազգի, ժողովուրդ ժողովուրդի ձգել և զանոնք իրարմով չէզոքացնել, ու այդպիսով բոլորին մէկտեղ բռնութեան ճիրաններու մէջ պահել: Այդ բոլորը մենք զիտենք, մենք կը տեսնենք: Եւ ջանք չենք խնայեր հայերս՝ այդ դաւերը ի դերև հանելէ: Թուրքը, մահճեղականը մեզ շատ ականջ չի կախեր, ունի կասկած մը վերջապէս, անշուշտ կան անձինք որ այլպէս կը խորհին, բայց ասոնք ովկիանոսի մէջ կաթիլներ են: Ուրեմն մենք մեր այլացեղ հայրենակիցներուն վրայ շատ մեծ ազդեցութիւն չենք կրնար ունենալ, ասոր համար շատ ու շատ պատմական և հոգեբանական պատճառներ կան: Այդ խնայիրը աւելի ձեռնհասօրէն և արդիւնաւոր կերպով կորսող էին պարզել թուրք երիտասարդները, թուրք հասկցողները: Բայց ցաւալի է, որ ասոնց գրածներն ալ պակաս թունակից չեն: Ասոնք ալ կըսեն թէ հայ Դատը միայն "սեպարատիստական" է, հարկաւոր է որ ամբողջ կայսրութեան վրայ խորհնք: Ես ալ ազգի, չէ որ մենք ալ այդ ընդհանուր կայսրութեան մի ծամն ենք, երբ այդ մէկ ծամին, մի որոշ ազգին մէջ դորձենք, ատու մենք ընդհանուր բանապետութեանը համար ո՛չ թէ շինիչ՝ այլ քանդիչ ուժեր կը հանդիսանանք: Ուրեմն թողնէ՛ք մեր ամբողջ անցեալը, մեր թափած արիւնը և բռնեք թէ մենք առանձին Գ ա տ չունինք, մեր Դատը բոլորիս համար մէկ է: Բայց Սուլթան Համիտը ինչե՞ր չէր տար, որ Հայկական Դատ անունը մէկ մը մէջտեղէն վերնար:

Այդ դեռ մի կողմ: Բայց ո՛ր էն այն թուրք երիտասարդները, որոնք ոչ թէ մէկ ազգի, այլ բոլոր ազգերի իրաւունքները կուզեն պաշտպանել, եթէ այդպէս են, ապա ո՛ր էն, ինչե՞ր մէջտեղ չեն վար հոս, որ ամէնքս ձեռք ձեռքի տանք դորձենք, իւրաքանչիւրս իր շրջանի և իր ժողովուրդի մէջ: Ի՞նչ արմատա-

կան միջոցներ մտք առնի և առնել կուզեն բոլորին՝ եղբայրացիներն ո՛ւր և մէկ հայրենիքի հաւատար գաւախներ դարձնելու: Միդհադի Սահմանադրութեան մէջ կուզեն փնտռել և զանել Թիւրքիայի ամենաբուժիչ դեղը: Բայց այդ Սահմանադրութիւնը աշխատող ժողովուրդի ցաւերը ինչե՞ր պիտի մեղմացնէ, օլիգարխի կայ ու կայ, բլրաց բիչ մը աւելի, կամ քիչ մը պակաս, չէ որ ուսուցը պիտի ուսնէ և ուսուցը պիտի ուսուցի:

Ընկեր Սուրբատի կոչը պահ մը մեր սրտերը թրթրումի մէջ դրաւ, կարծելով որ մեր արտասահմանի յեղափոխականները վերջապէս ուշքի կուզան, բայց կերևի թէ մենք այստեղ եղող յեղափոխականներս իրար շատ լաւ մը չենք կերեր, ուստի "վաղահաս" է համերաշխութեան գալիքի մը դեռ իրարու աւելի արացներ, աւելի բղբոնք, ու փամառնակ տանք որ համար մեզ ազգի մը քաճէ, անկից յետոյ համաձայնութիւնը, համերաշխութիւնը այլևս "վաղահաս" չըլլար, որովհետեւ ամէն բան լինցած, հասունցած կըլլայ: Այդ չէ՞ համիտին ալ երազը:

Հոկտ. 2, 1907

ՓԱՅՆԱԾՈՒ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

ԹՈՒՐԿԱՆՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԹԳՏԵՆ

1907 յունիս 17-ին նախաձեռնութեամբ պրք. Մ. Յակոբեանի, Մ. Ապրէհեանի, Մ. Բեղամեանի, Չերմ Խաչկոյութեամբ Խի. Զապէի, պրք. Անտոն Ռուսեանի, Յակոբ Զանոյեանի և բարեհաճ ճանաչողութեամբ դերասաններ՝ Խի. Արարսի, պ. պ. Զարեփեանի և Ալեանի՝ ներկայացրուց "Հրեաներ" պիեսան, որ ջնայած նեղ կուսակցական չար միտումներին՝ այսուամենայնիւ իր բարոյական և համեմատելի արդիւնքն ունեցաւ: Չընորհիւ մի շարք աղին ընկերների ջանքերի, նրա հետ և ներկայ պայմանների յարաբերութեամբ ունեցաւ ներթափան բաւարար արդիւնքը, որի մանրամասն ներթափան հաշիւը հետևեալն է:

Վաճառուած է տոմսակ	—	—	—	664	բ.	80	կ.
Մախ դերասաններին	125	բ.	—	4			
Թատրոնի վարձ	50	"	—				
Պիեսայի թարգմանչին	20	"	—				
Յայտարարութիւնների և տոմս.	29	"	—				
Թատրոնի լուստարութեան	20	"	—				
Տոմսակադրոշմի (մարկայ)	50	"	5				
Վերնագրեատ կախելու տեղերին	40	"	85				
Քեմանիկարչին	—	8	50				
Վարսաւերի	—	7	—				
Թատր. ծառայողին (կապելաններ)	4	"	50				
Հրդեհաշէջների	—	2	60				
Մանր ծախսեր	—	12	90				

Տոմս. վաճառումից անպարտաճանաչ անհատների վրայ մնացած 39 " 40 " 409. բ. 80 կ: Մարտը մնացող կանխիկ 255. բ. Երկու հարիւր յետուն և չինգ բուրջին ուղարկուեցաւ սիրելի Սուրբատին՝ հասցնելու Թիւրքա-Հայաստանում սովաձ ամանջ ընտանիքներին բաշխուելու համար:

Մ. ԱՍԼԵԿԵԱՆՑ

24 Օգոստոս 1907.

ԲԱԳՈՒՑ

ՆՈՐԱԿ ԹՐԹՈ-ՊՈՐՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Անցկացող տարիների երկար շարանները ու նրանց տեղադրեան ընթացքում կատարուած ճիւղաճանաչման տխուր անցքերը, մէկ վերջին անգամ էլ գալիս են, բուն կատարութեամբ ու նարսախելի արտայայտութիւններով, ազդարարելու ընդհանուր աշխարհին թէ՛ քրդական բազմաթիւ ու բազմազան խմբակցութիւնները, որոնք բնակուած են, եթէ կարելի է այսպէս՝ առէլ, թրքո-պարսկական սահմանները բաժանող, բարձրաբերձ ու շղթայանման ձգուած լեռների վրայ պատուհաս, սրտիտ ու ցասումն են իրենց հարևան խաղող ժողովրդների համար, սարսախելի ու անդիտակ գործիք իրենց հետ միլիոնաւոր թշուառներէ, ինքնակոչ ու մարդակեր տէր դասակարգերի ձեռքին:

Պարսկական բացարձակապետութիւնը տապալելու համար, պարսկաստանցիների սկսած շարժումները միայն անցեալ ձմեռան կարողացան հասնել երկրի արեւմտեան սահմանները՝ Մակու, Խօյ, Սարճաստ և Ուրմի, ու արձագանգ տալ ճայտաքաղաքներում սկսած ըմբոստացման ցոյցերին: Յոյցերը այս վայրերում սկսուած օրից անցան խաղաղ, առանց նշանաւոր նեղութիւններ կրելու. ժողովրդին ու նրան առաջնորդելու կոչուած յետին նպատակներով ոգևորուած պետերին աջակցեց բացարձակապետութեան ներկայացուցիչներին բոլորովին չէզոքացնել և մինչև անգամ ամենախայտառակ ձեռով վրաբերել. այսպէս կոչուած՝ երկրի կառավարութեան բախոր անցկացաւ պարսկական հասկացողութեամբ ընտրուած ժողովրդի ներկայացուցչական ժողովի — Անջումանի — ձեռքը:

Ինքնաբաւական իրենց էթնոագին յաղթանակներէր, ժողովուրդը սկսեց կաղծակերպուել և ամենաուժեղ կերպով զինուել:

Այսպէս, անցկացաւ ձմեռը ու գարնան երկու ամիսները,

Մակու, Մակուայ խանութիւնը վաստալ մի իշխանապետութիւն է պարսկական պետութեան մէջ: Մակուայ խան Սարգարը տարեկան մի որոշ գումար ու ընծաներ է ուղարկում պարսից արքունիքը, պատերազմի ժամանակ օգնութիւն տալիս, և միայն այսպէս:

Մակուայ ներկայ խանութեան սահմանները բաւական ընդարձակ են, երեք կողմից նրանք հասնում են ուստական ու օսմանեան երկրներին. իսկ չորրորդ — հարաւային կողմից՝ Խօյի գաւառապետութեան: Այս սահմանում տեղաւորուած ընդարձակ հողը ծածկուած է հարիւրաւոր գիւղերով. հողի և գիւղերի ամենախաշոր մեծամասնութեան տէր-տիրականը Սարգարն է, մնացեալ աննշան փոքրամասնութիւնը պատկանում է սարգարական ընտանիքի գանազան աղա-խաններին: Մակու, Պարսկաստանի այլ վայրերի պէս, սեպհականա-տիրութեան հողային կարգերի բազմապիտութիւնը դոյութիւն չունի, այնտեղ երկիրը — հողը բացարձակապէս պատկանում է Սարգարին: Նրան են պատկանում ու նրա քմահաճոյքներին խաղաղիք՝ երկրում բնակուած ամբողջ ազգաբնակչութիւնը, որի մեծագոյն մասը քրդեր են, իսկ միւս բաժինը ասորաւորականի թիւրքեր: Սարգարի իշխանութիւնը ժաւանդական է, Արաբատականում Սարգարը և իր մարտիկների բանակը՝ քաջութեան և վարժ պատերազմողի հուշակ են վայելում:

Գարնան սկզբին, ամենախիտ ճնշման տակ հեծող մակուցիքն էլ շարժուեցին, Սարգարը իր ընտանիքով Կովկաս փախաւ, նրա ազգականներից մի խան, Սարգարի գաղտնի կարգադրութեամբ միացաւ անջումանականների հետ ու անցկացաւ շարժման գլուխը ու նրա ղեկավարը դարձաւ:

Հալիւ մէկ ամիս տեւեց այս երջանիկ ժամանակը, ու նրան յաջորդեցին սարսախելի օրեր:

Սարգարը Մայիսի կիսին վերադարձաւ Կովկասից, քաջաբերուած իր ազգական ու խնամի երևան — նախիջուան խաներից, գործելակերպի մասին ցուցումներ առած ուսուբանապետութեան բարեկամ դասակիցներից և . . . : Մինչև նրա վերադարձը անջումանական խանն էլ գաղտագուրի պատրաստել էր տեղացի մութ տարրերին, ջալալի և հայդարանցի քրդերին, ու սկսուեց մի չտեսնուած հալածանք, անխնայ կոտորած, հրդեհ, պլան-թալան և շէնքերի խաղախորտակում:

Գազանային գործը մի քանի շաբաթ շարունակուեց, այլուեցին ու քանդուեցին բազմաթիւ գիւղեր, կոտորուեցին հարիւրաւորներ, առանց սեռի ու հասակի խորութեան:

Սարգարի շրջանը օրից օր տարածուած, ընդարձակուած էր, Խօյը որ սկզբում պատրաստուած էր կոտորուող մակուցիներին օգնութեան հասնել, սկսեց ինքնապաշտպանութեան մասին հոգալ, թնդանօթները քաղաքից դուս բերեց ու ըստպատեց Սարգարի աւերիչ ու ահարկու արշաւանքին: Խօյի շրջակայ գիւղերը անխնայ ու անպաշտպան կողոպտուեցին, և ամէն ինչ դադարեց, շարժուողները խաղաղ ջարդ ու փշուր ընկան, քաղաքի ձայները լուեցին, ամբողջ գիւղերում տիրեց սուգն ու շրւանը ու ահռելի մոխրակոյտերը:

Սարգարը կոտորեց, քանդեց, այրեց ու յաղթեց և վերջացաւ: Այժմ դարձեալ նա իր հողի և հպատակների միակ սեպհականատէնն է:

Մակուում կատարող անցքերի ժամանակ, մակուեցի հայերի համար տեղի ունեցան մի քանի յիշատակալի դէպքեր: Առաջին՝ Մակուում սպանուեց մի հայ, որ միտցել ու զինուորադրուել էր անջումականներին: Երկրորդ՝ ընդհանուր կոտորածի ժամանակ թաղէի վանքի և նրա հայաբնակ գիւղի պահպանութեան ապաւինած ու հայ կուռուղներով պաշտպանուած բազմաթիւ քիւրդեր ու թիւրքեր աղաւտուեցին կոտորածից, Սարգարը նրանց խնայեց հայերի խաթրին, բայց շատ էլ հաճելի չեղաւ նրան հայերի այդ արարքը . . . :

Այն ժամանակ՝ երբ Մակուն պատերազմի դաշտ էր դարձել, խաղաղ Սարճաստն էլ վրդովուեց, Թաւրիզում եղեբական վախճան գանող Աւոյի ցեղապետ Ջահվար աղայի եղբայրը, աւոյիների ներկայ պետ երխտասարգ Սմիօն, պատգամ է ուղարկում Սարճաստի Անջումանին և պահանջում. — «Տուէք մեզ մեր նախկին բնավայրը — ճարան և իր շըրջանը, հավատակ դէպքում ես կը դիմեմ զէնքի և նրա ուժով կանեմ այդ»: Անջումանը տուեց բացասական պատասխան ու հրաւեր կարդաց Սարճաստի բոլոր թիւրքերին, աւոյիների թշնամի շիկակ և ծածաղի քրդերին որ բանակ կազմեն ու գնան Սմիօն ու իրայինները խաղաղ ջնջեն: Հրաւերը ընդունուեց բուն սիրով, մի շաբաթուայ մէջ կազմուեց հազարնոց ձիաւոր կամաւորների մի բանակ, Սարճաստի քրդերից և թիւրքերից ու բանակը Անջումանի նախագահ Հաջի Փիշնամալ կրօնապետի հրամանատարութեամբ Յունիսի սուաջին օրերին շարժուեց դէպի Կօսօլ — Սմիօնի նոր բնակավայրը: Բուն ոգևորութեամբ հաղար ու մէկ երեսակայութիւններով տաքացած կամաւորները մի քանի օրից յետ դարձան կուրագուխ, Սմիօն միայն մի քանի ձիաւորներով, անսուղի զիւրքերում ձին խաղաղացնելով զիմաւորում է բանակի սուաջապահ քիւրդ զնդերին և երբ ստուգում է որ բանակին չեն միացել հայեր կամ իրենց յեղափոխականները, գնդակների տարափ է ուղարկում բանակին ընդ սուաջ՝ սպանում է մի քանի յայտնի քրդերի և . . . արշաւող բանակը յետ է դաւնում: Քրդերի և օսմանեան սահմանապահներին հատրդած է լինում որ իբր թէ հայ յեղափոխականներն էլ մտել են պարսից բանակի մէջ, այս ստուգելու համար, զեռ կուխ չսկսած, օսմանեան սահմանապահները զալխ ու խուզարկում են բանակը:

Այնուհետև Ամկոն սկսեց անարգել ու աներկիւղ արշա-
ւել Սալմաստի գիւղերի վրայ, քշեց ու տարաւ աւելի քան
տասն գիւղերի նախիրներն ու ոչխարների հօտերը, սարանց
տասնեակ թխրքերի, ճի քանի անգամ կողորոտեց Խօջից Սալ-
մաստ գնացող հարուստ կարաւանները, երթեկուղիները դա-
դարեցրեց, կեանքը փարձրեց անտանելի, իսկ իրենք Սալմաստի
ձերձակայքում լեռնալանջերի վրայ բանակած, բաժանում են
տարած աւարները: Ասում են որ հազարաւոր թուճաններ
արժող թէչի իւրաքանչիւր կէս փութը 40 կողակով են ծա-
խում !!:

Աւելի նշանաւոր, աւելի աղէտալի իրենց հետեւանքներով,
դէպքեր ու յուրումներ աղմկեցին ու քարոքանդ արին Ուրմին:
Ուրմի քաղաքից ընդամէնը 4-5 ժամ հեռավորութեան վրայ
ընկած, Թեւրզաւար, Մարգաւար, Բարդաւար և Բրաբոտ
վայրերում բնակուող բէզդաղա քրդերը, ինչպէս վերջում
փաստերով հաստատուեց, օսմանեան կառավարութեան յա-
տուկ թեղալուծութեմբ, բազմաթիւ արշաւանքներ կազմած
սկսեցին յարձակուել դաւառի գիւղերի վրայ, կողորոտել ու
անխնայ սպանել: Ուրմիում Մաճիտ Սալթանայ յայտնի
ղինուորական հրամանատարի անձիջական ղեկավարութեամբ
կազմուեց կամաւորների ճի ձեռք բանակ՝ թխրք քիւրդ և ճա-
վանացի ստորինների կառուղներից, ու սկսեց հալածել բէզ-
դաղաներին ձինչև օսմանեան սահմանը, ուր բէզդաղաները
անձար մնալով, հնազանդուած են պարսից բանակի հրամա-
նատարին ու հաշտուած: Պարսից բանակը դրուած է լինում
Մալանայի շրջանում՝ սահմանագծին ձօսիկ: Յուլիսի 10-ին
օսմանեան սահմանապահների պատերազմական հրամանա-
տարը յայտարարում է պարսից բանակի հրամանատարին —
ձինչև 2 ժամ բանակը հեռացնել սահմանից ու դեռ երկու
ժամը չլրացած, 14 թնդանօթներ ու ճի քանի վաշտ զօրքեր
ճի համադրելով կոտորած են սփռում պարսից բանակի
վրայ, ճիւս կողմից հաշտութեան դաշինք կապած բէզդաղա-
ները սկսում են հարուածել պարսից բանակին, որը յանկար-
ձակիլի եկած ու կրակի հեղեղից սարսափահար հարիւրաւոր
ղիակներ թողած, դէնք, ռազմամթերք, թնդանօթ թողած՝ փախ-
չում են, օսմանցիք առաջանում են, բէզդաղաների հետ ճիւս-
ցած ճահաջու հարուածներ հասցնում պարսից բանակին ու
տիրանում նրա թողած ամբողջ կայքին:

Օսմանցիք առաջանում են ձինչև ասօրաբնակ Մալա գիւղը,
ուր սպանում են 60-70 կին ու ճարդ, աղջիկ ու տղայ, լի-
նում են բռնաբարութեան բազմաթիւ դէպքեր, առեւանգում
են ասօրի տասնեակ հարսեր ու աղջիկներ:

Դրուծիւնը սարսափելի է դառնում, Ուրմին հողմակած
քամու առաջ եղող տերևի նման րոտւմ է. վերսկսում են
կողորոտն ու թալանը, սպանութիւնն ու առեւանգումն աւելի
ազատ ու համարձակ: Մաւանան ու իր շրջակայ ասօրի
գիւղերը ամէն ինչ թողած, իրենց դարդակ անձը առած՝ քա-
ղաքէն փախչում են, ընդմիջա թողնելով իրենց բնակայր
Մալանան ու ապաստանում են «քրիստոնէապաշտպան» ուս-
տայ հիւպատոսարան, իսկ խեղճ թխրքերը՝ պարսկաստանցիք
ո՛ւմ պաշտպանութեան զիմեն, արդեօք աւելի երջանիկ չէ՞ն
այս վերջինները, որ նման ինքնակոչ ու . . . պաշտպան-
ներ չունեն:

Օսմանցին եկել, նստել է Մալանա, ու ասում է այս-
տեղերը ձերն են, ճեր պապերի օսկի բահերը այստեղ են
ճաշուել:

Մալանայից իսպառ թալանուած, հարիւրաւոր սիրելիներ,
կորիճ, հարս, աղջիկ կողորոտ Ուրմի՛ ուստայ հիւպատո-
սարանում իրենց սև օրերն են ողբում:

Իսրայիլի ստրկութեան ճանր լուծ կրած պարսկաստանցիք,
ճի պահ ազատ շունչ առնելով՝ իրենց առաջին շարժումնե-

րով՝ պարսուած ու կատրուած, թալանուած ու յուսահատ:
Թխրքիայով ու Պարսկաստանով Հասագրով. պետու-
թիւնները այժմ շտապում են !! դէպքին վայրը բնիչներ
ուղարկել: Ասում են որ օսմանցիք ճաղկիր են յետ՝ բող-
ւել. իմ հարցին թէ ինչո՞ւ են այսպէս անուծ օսմանցիք և
այնուհետև ի՞նչ են ճաղկիր անել՝ պատասխանեց օսման-
եան պետութեան ճի պաշտօնեայ որ կարևոր յանձնարարու-
թիւններով . . . էր եկել. «Որովհետև վաղ թէ ուշ Ա-
տրբապատկանը ռուսական ճի նահանգ պիտի դառնայ և ու-
րովհետև ճեր այս սահմանները բնական ամբողջութեանց ու
կարևոր ղեկբերից դուրկ են, ճենք աշխատում ենք այժմեանից
ճեք բերել և հէնց դրա համար էլ առաջանում ենք»:

Այժմ դրուծիւնը սահմանազլտում համեմատաբար իսպաղ-
է, քրդերը տակաւին իրենց տարածները կերած ու ճարսած
չեն:

ԱՍՕ

1907 Մեպտեբեր

ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԿԵԱՆԻ

ԳԵՐՄԱՆԻԱ

Վ. ԼԻԲԿՆԵՆՏ ՆԻ ԱՉԳՈՒԹԻՆՆ

Իերմանական Սօցիալ-Դեմօկրատիան 1896-ին ժողով
էր ունեցել Համբուրգի ճէջ: Այդտեղ՝ հոկտեմբեր 6-ին,
Լիբկնեխաը արասանել է ճի ճիւս, որի ճի փոքր ճասը
ճիւսն ճէջ ենք բերում ստորև, ցոյց տալու համար սօցիա-
լիզմի այդ ռահվիրայի հայեացքը ազգութեան և սօցիալիզմի
յարբերութեան նկատմամբ:

«Մենք ճեղ ճիջաղգայնականներ ենք համարում
— ասում է Լիբկնեխաը — և յիրաւի որ ճիջաղգայ-
նականներ էլ ենք, բայց այդ չի նշանակում թէ ճենք
ժխտում ենք աղգային իրաւունքները: Միջաղգայնու-
թիւնը նոյնքան չի վտարում ազգայնութիւնը, որքան
որ սօցիալիզմը՝ անհատականութիւնը, այսինքն՝ անձ-
նաւորութեան զարգացումը: Ինչոր իւրաքանչիւր ճարդի
անհատականութիւնն է ընկերութեան ճէջ, նոյնն է և՛
ազգերի անհատականութիւնը ճարդիւթեան ճէջ: Որ
աղգային զպացմունքը չպէտք է այստեւուրի՝ ճի աղգ
իրեն բարձր համարելով ճի ուրիշ ազգից, — դա
ինքն ըստ ինքեան հասկանալի ճի բան է բոլոր սօ-
ցիալիստների համար: Մենք հաւասարութիւն ենք
ցանկանում այն ամէնի համար, ինչոր ճարդիւսին
կերպարանք է կրում: Մեր ճրագրով յայտարարել
ենք, որ ճենք կողմնակից ենք իրաւունքների հաւա-
սարութեան՝ առանց ցեղի և ճազման խտրութեան:
Ինչպէս որ ճենք դատապարտում ենք նրանց, որոնք
պաշտպանում են այն զաղափորը թէ հրէաները ա-
ւելի ստորին ճի ցեղի են պատկանում և ճրանսխայնի-
ները՝ աւելի՛ ստորին ճի ազգութեան — այդպէս էլ
ճենք պիտի վարուենք, ամէն պարագայի տակ, և՛ նը-
րանց հետ, որոնք համանման ընթացք ունեն և դէ-
պի Լեհացիները:

ԲՕԲԵՐՏ ՅԲԻԲԵՐԿԻ ՎՏԱՐՈՒՄԸ

Բերլինի քաղաքապետութեանն՝ նախկին՝ անգամ,
դոկտ. Ռօբերտ Ֆրիբերգ, հիմնադիր Աւարխօ-Սօցիա-

լիցի՝ վերջերս Գերմանական Սոցիալ-Դեմոկրատիայի շարքերից դուրս վտարուեց, որովհետև նա իրեն Հակառակորդ էր յայտարարում պարլամենտարիզմի և կողմնակից՝ ամէն տեսակ օրէնքի ժխտման:

Դատելու պաշտօն ունեցող Իրաւարարական Ատեանի անդամներն էին Լիզէն, Ճառահէպէն և Կառլցիլի: Վճիռը Հետեւեալ ձևով է բանաձևուած.

Ներքոյ ստորագրեալ ընկերները, իր յայտարարութիւնները լսելուց յետոյ, այն Համոզումը ձեռք բերեցին, որ Անարխո-Սոցիալիզմը այնպէս՝ ինչպէս որ բացատրել է Փրիբերգը, անհաշտելի է Սոցիալ-Դեմոկրատական սկզբունքների հետ:

Մեր ծրագիրը յայտարարում է, որ գործաւոր դասակարգի կռիւը քաղաքական կռիւ է. նախ քաղաքական իրաւունքների համար և յետոյ՝ քաղաքական իշխանութեան համար: Այդ կռիւը Անարխո-Սոցիալիզմը մերժում է, որովհետև նա իրեն Հակառակորդ է յայտարարում պարլամենտարիզմին, այսինքն՝ մի միջոցի որ՝ ներկայ պայմանների մէջ, անհրաժեշտ է քաղաքական կռուի համար:

Նա մերժում է մասսաների քաղաքական գործադուլը, որ պրոլետարական իրաւունքներ ձեռք բերելու մի միջոց է նրկատում և, ընդհակառակը, ջատագուրում է անօրինակամութեան պրօպագանդան, մինչդեռ Սոցիալ-Դեմոկրատիան ցանկանում է օրէնսդիր մեքենան նուաճել, օրէնքները փոփոխելու համար՝ պրոլետարիատի շահի տեսակէտով:

Անարխո-Սոցիալիզմի հիմունքները էականապէս անարխիզմի հիմունքներ են: Այդ ի՞նչ պատճառով անարխիստները այն տեսակ կազմակերպութիւններ են արել, որ ամէն տեսակէտով հետու են Սոցիալ-Դեմոկրատական կազմակերպութիւններին:

Եթէ Ռ. Փրիբերգը այդ սկզբունքները իրենն է համարում՝ Հէնց դրանով էլ նա ինքն իրեն դուրս է դնում Սոցիալ-Դեմոկրատիայից: Թէև Իրաւարարական Ատեանը զրտակ է պրոլետարիատին ծառայած նրա ծառայութիւններին և նրա անձնական աղնութեանը և Սոցիալ-Դեմոկրատիան ի սրտե ցաւ է դուրս նրա հետ իր յարաբերութիւնը խզելու, բայց, այնուամենայնիւ, նա պարտաւորում է յայտարարել որ Փրիբերգը դադարած է սոցիալիստ լինելուց և այլևս չի պատկանում Կուսակցութեանը:

Դօկտ. Փրիբերգի Հետևողները մեր մէջ էլ Անարխո-Սոցիալիզմը քարոզում էին որպէս Սոցիալ-Դեմոկրատական սկզբունք: Այդպիսիների հետ ի՞նչպէս վարուելու պաշտօնական չափանիշը այլևս կա: Այդպիսիների հետացումով Սոցիալ-Դեմոկրատիան ո՛չ թէ կորցնում, այլ շահում է:

ՖՐԱՆՍԻԱ

ՆԱՆՆԻ ԺՈՂՈՎ:

Անցեալ «Հնչակ»ով տուեցինք Նանսիի Կօնգրէսի մէջ եղած վիճարանութիւնները հակապիտոբական և միջազգային ընդհանրութեան նկատմամբ: Սրանով տալիս ենք միջազգային նշանակութիւն ունեցող մի այլ խնդրի մասին եղած վիճարանութիւնները, այն է՝ «Աէնդիկոթեան և Սոցիալիզմի» փոխադարձ յարաբերութիւններին:

Բացատրութեան համար ասենք այն, որ Փրանսիայում սէնդիկատ կոչուած գործաւորական արհեստակցական միութիւնները, Ամերիկայի Միացեալ Նա-

Հանգներում և Անգլիայում կոչուած են արէդ-իւնօններ, Ռուսաստանում՝ արհեստակցական, պրօֆէսիօնալ միութիւններ, և այլն:

Խնդիրը աւելի պարզ կերպով ներկայացնելու համար, նախ դնում ենք Շէսի և Դորդօնի առաջադիւնները, և ապա դրանց վրայ եղած վիճարանութիւնները:

ՇԷՍԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Կօնգրէսը, համոզուած որ գործաւոր դասակարգը կարող է կատարելապէս միայն ազատագրուել քաղաքական գործունէութեան և սէնդիկայական (արհեստակցական միութեան, սէնդիկոթեան) գործունէութեան միացած ոյժովը, մինչև ընդհանուր գործադուլ հասցնող սէնդիկալիզմով և քաղաքական իշխանութեան ամբողջական նուաճումով՝ կապիտալիզմի ընդհանուր սեպհականապրիման (էքսպրօպրիացիա) նպատակով:

Համոզուած, որ այդ կրկնակի գործունէութիւնը աւելի ազդու կլինի, երբ քաղաքական օրգանիզմը (յօրինումաճքը) և տնտեսական օրգանիզմը իրենց կատարեալ ինքնավարութիւնը կունենան. — սէնդիկալիզմը իր համար նոյն նպատակը ընարելով, ինչոր սօցիալիզմը:

Նկատելով, որ պրոլետարիատի քաղաքական գործունէութեան և տնտեսական գործունէութեան այդ հիմնական միաբանութիւնը անհրաժեշտօրէն կապահովի ազատ գործակցութիւն երկու օրգանիզմների միջև, առանց շփոթութեան, առանց ստորադասութեան և անկոտակութեան:

Հրաւիրում է մարտիկներին (militant), որ ամէն ցանր թմոխեն և գործաւոր դասակարգի արհեստակցական (corporatif) կազմակերպութեան ու քաղաքական կազմակերպութեան միջև եղած ամէն թլարիմացութիւններ ցրուեն:

ԴՕՐԴՕՅՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Նկատելով, որ միջազգային Կօնգրէսները միաձայնութեամբ հաստատել են արհեստակցական կամ սէնդիկայական կազմակերպութեան և գործունէութեան անհրաժեշտութիւնը՝ «կապիտալի ամենակարողութեան դէմ մարտնչելու և ներկայ ընկերութեան մէջ գործաւորների դրութիւնը բարւոքելու համար», ինչպէս որ նոյն այդ Կօնգրէսները պարտականութիւն են դրել բոլոր աշխատուորների վրան՝ իրենց արհեստի սէնդիկալիզմ պատկանել:

Նկատելով, որ նոյն այդ Կօնգրէսները, այդ կազմակերպութեան և արհեստակցական կամ սէնդիկայական գործունէութեան անհրաժեշտութիւնը խստովանելով հանդերձ, միաձայնութեամբ հաստատել են որ գործունէութեան այդ եղանակը միայն «հերիք չէ աշխատաւոր դասակարգի ազատագրութեան համար» և որ այդ գործունէութիւնը «չի կարող ընջել, այլ միայն մեղմացնել կապիտալիստական շահագործումը. որ գործաւորների շահագործումը վերջ կդանի միայն այն ժամանակ, երբ ինքն ընկերութիւնը իր ձեռքին կանուի արտադրութեան բոլոր միջոցները, և որ այդ ընկերականացումը կկատարուի այն ժամանակ, երբ կազմակերպուած աշխատուորները քաղաքական կուսակցութիւն կազմելով՝ քաղաքական իշխանութիւնը կնուաճեն»:

Նկատելով, միւս կողմից որ՝ իր աշխատանքի և կեանքի պայմանները բարւոքելու և իր ամբողջական ազատագրութիւնը ձեռք բերելու համար՝ միւլնոյն դասակարգն է որ կոչուած է կազմակերպուելու և գործելու թէ արհեստակցական (corporatif) և թէ քաղաքական հողի վրայ, և որ կազմակերպութեան ու գործունէութեան այդ երկու եղանակները, ինչքան էլ որ իրարուց անջատ մնան, չեն կարող իրարու գոյութիւն անգիտանալ և իրարու հակառակել՝ առանց մահացու կերպով երկպառակելու նոյն ինքն պրոլետարիատին:

Կոնգրեսը որոշում է որ կարիք կայ Հոգալ այն ճափին, որ պարագաներին համեմատ, աշխատատեղերի սենյակայան կարծուհեութիւնը և քաղաքական գործուհեութիւնը իրարու հետ կարողանան խորհրդակցել և համաձայնիլ թէ ազգայնապէս և թէ միջազգայնապէս:

Բ ե ո ս ռ . — Լուստի ֆեդերացիան միաձայնութեամբ քուէարկեց Դորդօյնի առաջարկը: Այդ առաջարկը շատ հեռու է Աշխատանքի ընդհանուր Դաշնակցութեան (la Confédération Générale du Travail) դէմ ուղղուելուց: Արդ, մենք չենք ուզում մոլորուել նրանցից, որոնք սենյակայանները մէջ քաղաքականութիւն չմտցնելու պատրուակի տակ իսկապէս քաղաքականութիւն են ներմուծում: Կուսակցութիւնը պէտք է սահմանի թէ ինչի մէջն է կայանում սենյակայան գործուհեութիւնը: Եթէ սենյակայանը մէջն մինակ ընկերային ձևափոխութիւն չառաջացնող գործը է, տպա և այլև չպիտի պատկանի այս Կուսակցութեան: Բայց երկար ժամանակներից ի վեր սենյակայան անդամակցելով՝ են համոզուեցայ, որ սենյակայան գործուհեութիւնը իրօք յերափոխական չէ: Դորդօյնի առաջարկը ճշրում է սենյակայան գործուհեութեան բնաւորութիւնը — այն՝ որ նա չպիտի շփոթուի քաղաքական գործուհեութեան հետ: Այդ առաջարկութիւնը մեզ ասում է, որ մեր պարտականութիւնն է լուսաբանել աշխատատեղերին, նրանց հասկացնելով, որ իրենց վերջնական ազատագրութիւնը կարող է լինել միայն քաղաքական իշխանութեան տիրապետութեամբ: Ընկն այդ քուէարկումսով, լինի ապաստանութեամբ կամ յերափոխութեամբ:

Փ ի ա ն ս է տ . — Ես նոյնպէս խօսում եմ, որպէս սենյակայանի հիմնաւորը մի անգամ: Թէօրիայով չէ, որ մենք տարբերում ենք Դորդօյնի առաջարկը քուէարկողներէ: Մեր և ձեր տարբերութիւնը բոլորում է գործնական պատճառներից: Հիւսիսի մէջ դուք յաջողել էք ի մի ձուլել սենյակայանը և սոցիալիզմը: Ես ձեր պոստեանը նախանձում եմ: Բայց մենք չենք կարող մեզ դնել ձեր պայմանների մէջ: Չկարծեք թէ մենք սենյակայանի նախապատուութիւն ենք տալիս սոցիալիզմին: Մենք թէ սենյակայանի անդամներ ենք և թէ սոցիալիստներ: Սենյակայանի մէջ մըսնող գործաւորի քաղաքական կարծիքները չեն փնտռում: Եթէ սենյակայանի մէջ մտնող գործաւորից հետեւալ օրը հարցնէք թէ արդեօք նա "միայնակ է սոցիալիստ Կուսակցութեան", — միւս օրը նա դուրս կերթայ: Եթէ ամէն ոք Հիւսիսի կարգապահութիւնը և դիմացկուն բարեխանութիւնը ունենար, իրենք բարտալին այլ ընթացք կառնէին: Բայց Պարիզի Աշխատանքի Բորսայում երեք հազար սենյակայան անդամների մէջ իսկ սոցիալիստները շատ փոքր թիւ են կարծում: Եթէ Դորդօյնի առաջարկը քուէարկուի, ոչ սոցիալիստ անդամները դուրս կգան սենյակայանից: Իսկ դուք այդ չէք ուզել . . . Սենյակայաններին անդամակցող անգիտակից մասային մշտապէս սենյակայանների մէջ պահելու համար, հարկաւոր է նրանց շարունակաբար մասնակի փոքրիկ առաւելութիւններ տալ, եթէ ոչ նրանք կ'զգեն՝ կ'հեռանան: Չկարծեք թէ՛ եթէ Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութեան դրոշմը սոցիալիստներ կանոնում լինէին, նրանք Կուսակցութեան հետ համընթաց կլինէին: Դա չէր կարող լինել, որովհետեւ պրոլետարիատի մեծամասնութիւնը կրթութիւնից դուրկ է. . . Իւր կշտամբում էք, որ Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութիւնը մտերմական յարաբերութիւն չի պահում Կուսակցութեան հետ: Չպէտք է մոռանալ, որ դա սկզբնաւորում է Լոնդոնի Կոնգրեսից. սխալարեթիւնը դեռ շարունակում է: Որքան որ թէօրիայի կողմից ճիշդ է, որ սենյակայանական և քաղաքական կազմակերպութեանց մէջ ընդհանուր կարգաւորութիւն պիտի տիրի, բայց գործնականի մէջ այդ գոժար է լինում ընդունել տալ, որովհետեւ սենյակայանները անպատճառ ցանկանում են իրենց ինքնախարութիւնը պահպանել: Մենք չենք կշտամբում Դորդօյնի և Հիւսիսի մեր ընկերներին, որ նրանք փափաքում են իրողութիւնները համաձայնեցնել թէօրիայի հետ, բայց չպէտք է յամուել, երբ անյալթի դժուարութիւններ կան: Մերձեցումը կկատարուի, երբ սենյակայանները կլուսեն թէ Կուսակցութեան տարտիկան, որ յամախ բարենորոգչական (րէֆորմիստ) էր, փոխուել է: Այժմս ինչոր կարելի է, այդ այն է՝ ինչոր ճեւը առաջարկում է, այսինքն

պրօպագանդայով և կրթութեամբ ամէն թիւրիմացութիւններ փարստել:

Լ է վ ի . — Նախորդ ճառախօսներից ոմանց ասածներից այնպէս է երևում, որ Սոցիալիստ Կուսակցութիւնը ցանկանում է իշխել Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութեան վրայ, եթէ այդպէս է ապա նոր բաժանումն յառաջ կգայ: Արդեօք դատակարարային կռուի անունով է, որ Սոցիալիստ Կուսակցութիւնը ուզում է կլանել Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութիւնը: Իւր ասում էք թէ սենյակայանների մէջ քաղաքական պրօպագանդան պէտք է անել . . .

— Ո՞վ է այդ ասողը, բացառաւորապէս է Գէրլը: Մենք ճիշդ դրա հակառակն ենք ասում:

Ուրիշ խօսքով, յարում է Լ է վ ի, դուք կարծում էք թէ սոցիալիստական գաղափարը չի կարող թափանցել սենյակայանների մէջ առանց Սոցիալիստ Կուսակցութեան: Բայց՝ իմ կարծիքով՝ սոցիալիստական որու ճշմարիտ ստեղծագործող ինքը դատակարարային կռիւն է: Ի հարկէ դա արդեւք չէ՛ որ Սոցիալիստ Կուսակցութիւնը իր պրօպագանդան գուզնիթացաբար առաջ չաանէր: Ա՛հ, ես չեմ մոտում, որ սենյակայանը, մի կողմից էլ, քաղաքական գործուհեութիւն պիտի ունենայ. քաղաքական գործուհեութիւնը, սեպհականարկման (էքսպրօպրիացիա) օրէնքներով, պէտք է լրացնի այն ամէնը, ինչոր սենյակայանը կարող է նուաճել: Բայց դրա համար անհրաժեշտ չէ, որ քաղաքական գործուհեութիւնը գործադրուի սենյակայանի մէջ:

Ո ռ լ ա ն ր . — Իմ ցանկութեան է, որ սոցիալիզմի և սենյակայանի մէջ մերձեցումն յառաջանայ: Դորդօյնի առաջարկն էլ հէնց դրա մէջն է կայանում: Միայն է այն կարծիքը թէ մենք Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութեան թշնամին ենք. մենք նոյնքան անձուներ անդամներ ենք սենյակայանի, որքան որ միւսները. . . Դորդօյնի առաջարկը պատերազմական յագտարարութիւն չէ սենյակայաններին: Արդէն ճեւի առաջարկի առաջին մասը իրուումը է տալիս Դորդօյնի առաջարկին, իսկ նրա երկրորդ մասը հակառակն է առաջինին: Պէտք է արձանագրել լինել և մի առաջարկի վերջին մասով չբանդել այն՝ ինչոր ասում է առաջին մասի մէջ: Սենյակայանական շարժման մէջ սոցիալիզմին հակառակ միտումներ էլ կան: Մենք նպատակ չունենք սենյակայանները կլանելու, — ո՛չ, մենք ձեռք ենք մեկնում արհեստակցական կազմակերպութեանը, և եթէ սենյակայանները մերժում են, այդ ասել չէ՛ որ մենք մեր պարտականութիւնը չպիտի կատարենք: Կուսակցութեան անդամները փոխանակ ցանկատուելու, պէտք է աշխատեն իրենց միտումները ընդունել տալ: Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութեանը, իր Կոնգրեսների մէջ, մենք պիտի ասենք թէ. իր մի քանի մարտիկների գործադրած միջոցներով չէ, որ գործաւոր դատակարար պիտի հասնի ազատագրութեան:

Լ ո շ . — Նախ կուզէի ցրուել այն շփոթութիւնը, որ կարծել է տալիս թէ սենյակայանական շարժումը իսկապէս անարխիստական շարժում է: Որքան որ Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութեան մէջ համոզուած սոցիալիստ եմ, նոյնքան էլ համոզուած կերպով հակառակ եմ որ Կուսակցութեանս և սենյակայանների միջև պաշտօնական յարաբերութիւն լինի: Երկու առաջարկների բնազդը շատ քիչ կարևորութիւն ունի, ինչիցը նրանց ներշնչած ոյին է և սենյակայանական շարժման մասին նրանց տուած բացատրութիւնը. . . Դանիացի մէջ սենյակայանական շարժումը տարբեր ուղղութիւն է առած քաղաքական շարժումից, և այդ խարականութիւնը ոյժի մի մեծ աղբիւր է եղել սենյակայանների համար: Ե՛ման շարժում է կատարում և՛ Ջուլիցիբայում: Մի կողմ թողնենք իր առանձնաշատակ պայմաններով յայտնի Անգլիան, ուր սենյակայանների թեկնածուները և Սոցիալիստ Կուսակցութեան թեկնածուները իրարու հակառակորդներ են: Վեր առնենք Բելգիան՝ որ մեզ օրինակ էին ճառայեցնում, ի՛նչ ենք տեսնում, — այն՝ որ այդ երկրի մէջ եղող շատ դժուար և արհեստակցական տեսակետից շատ գործուհեաց սենյակայանները, — ինչպէս են Ապերիտ ադամնորդորմները — կարիք զգալով ինքնախարութեան՝ այլևս չեն անդամակցում Կուսակցութեան սենյակայանական յանձնախմբին: Դերմանիայի մէջ ի՛սկ — ուր մենք անվերապահ կերպով սքանչանում ենք սենյակայանների ներքին

կազմակերպութեան վրայ և նրանց աւելի յարձակողական եւ անդ մտնում — ձեռք տեսնում ենք, որ սենյակատներին անդամակցող 1,500,000 գործաւորները ծխախոտի 400,000 հալի են Կուսակցութեան անդամավճար տուողները, և այստեղից հետեւում է այն որ սոցիալիստները սենյակատները վարելիս բուլտովին այլ ուղով են առաջնորդում քան որ և է Կուսակցութեան մէջ, և արդէն նրանք աշխատում են թօթափել — ինչպէս որ այդ եղանակով Կորոզնի Կոնգրէսի մէջ — Կուսակցութեան անօրէն խորհրդի ինստիտուտները: Գերմանիայում այնքան լաւ են հասկացել այդ զիրքի կարեւորութիւնը, որ Մանհէյմի Կոնգրէսը ջնջեց ենայի մէջ անցկացնող որոշումները և զիջումներ արեց: Այսպէս, շարժումը ընդհանուր է: Ամէն տեղ ձգտում են սենյակատական շարժման ինքնավարութեանը: Փրանսիական սենյակատներին տաքսիական վերուժելով — բանթոդական գանձարան, գործաւորային հատուցում, ընկերային օրէնքների պաշտպանութիւն, մի խօսքով այն բոլոր շահերը, որ գործաւորի անմիջական բարձրացման են ձգտում — Լօշը ցոյց է տալիս, որ այդ տաքսիական ճակատագրականօրէն տանում է դէպի սենյակակիցի վերջնական նպատակի ճանաչողութիւնը, դէպի սեպհակնատիրութեան ձեւափոխութիւնը, որ վերջնական նպատակն է և սոցիալիզմը: Եւ այնքան ճշմարիտ է, որ գերմանական սենյակատները յայտարարում են, ինչպէս և ֆրանսիականները, որ սենյակատի գիտակից անդամը ձգտում է ընկերային ձեւափոխութեանը:

Որն ա. — Եւ համարժեք է մեծ Աշխատանքի Բնդհանուր Դաշնակցութեան և Կուսակցութեան ապագայի մասին Լօշի յայտնած կարծիքներին: Թէ ձեռք և թէ նրանք բաւականն առողջ ստանոքս ունինք այս բոլոր վիճաբանութիւնները մարտեր համար: Ուրեմն դուք կասկածում էք սոցիալիստական կենսական շահերը ներկայացնող կազմակերպութիւնների ոչ մի մասին, երկիւղ էք կրում նրանց բաժանուելուց, որովհետեւ Կուսակցութեան սենյակատների յարաբերութեան մասին վիճաբանութիւն է լինում:

Ասում են թէ աշխատանքի Բնդհանուր Դաշնակցութիւնը և Կուսակցութիւնը միևնոյն նպատակին են հետապնդում. եթէ այդպէս է, այլևս ի՞նչ հարկ կայ, թող Կուսակցութիւնը լուծուի՝ որպէս անօգտակար մի բան: Բայց ճշմարտութիւնը այլ է: Այսօր գործաւորները շատ լաւ ըմբռնում են կազմակերպութեան անհրաժեշտութիւնը, որպէսզի միաժամանակ թէ՛ արհեստակցական հողի վրայ մարտնչել կարողանան և թէ՛ իրենց արտադրութեանը հասնում և վարձագինի աշխատանքը ջնջեն: Սենյակատները քաղաքական միութիւններ չեն: Երբ դուք քարոզում էք հակապարլամենտարականութիւն, հակահայրենասիրութիւն՝ դրանով չէք զբաղւում: Արժեքներով (արհեստակցական) խնդիրներով: Նրանք Կուսակցական գործեր են: Սենյակատը զբաղւում է գործաւոր դասակարգի արհեստակցական շահով: Հակառակ դէպքում քաղաքական մի հաւատածք (credo) դուք հարկաւորիչ կործանելով թէ՛ անտարբեր, թէ՛ արմատական և թէ՛ քրիստոնէայ գործաւորին: Եւ այդպիսով դուք նրանց վիրավորած կլինէք քաղաքական որոշումներ ընդունելով: Սենյակատները պէտք է՝ մի կողմ դնել, գործակցական ընկերութիւնները՝ առանձին, Կուսակցութիւնը՝ առանձին: Ի հարկէ դա արգելք չի կարող լինել, որ հարկը պահանջած ժամանակին նրանք իրարու հետ յարաբերութիւն չունենան: Մեր պահանջածը կատարում է արդէն թէ՛ Գերմանիայում, թէ՛ Բելգիայում, թէ՛ Աւստրիայում և թէ՛ Փանիայում: Ասում են որ սա՛ անհաճոյ է Փրանսիական սղուն, որ չի սիրում բարձր անդամավճարներ տալ և ուժեղ կազմակերպութիւններ անել: Այդ ատղները նախադատում են Իսպանական և Իտալական սենյակատները, որոնք հազիւ թէ գոյութիւն ունեցող կազմակերպութիւններ են:

Անդրիայում, աւելի քան կես դար, սենյակատները հետեւեցին այն ուղիով, որ Աշխատանքի Բնդհանուր Դաշնակցութեան այսօրուայ դեկլարիցները ջատագովում են: Նրանք համոզուեցան որ հակառակ իրենց լիքը գանձարանին՝ իրենք միշտ բաղխում էին այն անանցանելի արգելիչներին, որ գործատուներին (ոլտարօնայի) ծառայութեան մէջ գտնուող քաղաքական իշխանութիւնը իրենց դէմ յարուցանում էր: Նրանք նայնպէս մտապել էին Պարլամենտի մէջ մտնել, որպէսզի

այդպիսով օրինականութիւնը (légalité) յօդուա իրենց շահին դարձնէին: Արգալս սենյակատների շարժական ջանքերի շնորհիւ էր, որ շաբաթական հանգստեան օրէնքը գործաւորուեցաւ, որովհետեւ իշխանութիւնը իր ձեռքին ունեցող դասակարգը ընդհանրական օրէնքից իրեն բարձր է դասում: Բայց գործաւորական գանգուածը իր շահի գիտակցութիւնը փայր առ փոքր է ձեռք բերում: Սենյակատները կազմում են, և գործաւորական հովանաւորիչ օրէնքները օգնում են սենյակատական շարժումը ուժեղացնելու: Այդ ժամանակ սենյակատին անդամակցող գործաւորը ինքն իրեն այն դասակցութեան է գալիս թէ պէտք է օգնել նրանց, որոնք պաշտպանում են իր շահերը, ուստի և քաղաքական ու ընտրական հողի վրայ միանում է իր դասակարգի ընկերներին:

Մենք չենք պահանջում որ Կուսակցութիւնը ձեռք դնի սենյակատների վրայ, եւ որ հինաւուրց սոցիալիստ եմ, ո՛չ մի դիմով այդ չէի ցանկանալ: Ինչոր պէտք է հեռացնել, այդ այն կռիւն է, որ Աշխատանքի Բնդհանուր Դաշնակցութեան մէջ մղւում է Կուսակցութեան դէմ: Այդ կռիւր, սակայն, գոյութիւն ունի և ձեռք որ Դաշնակցութեան մէջն ենք, մենք այստեղ գալիս ենք երկու կողմից էլ տեղացող զինդակներին տարաբի տակ:

Բոլոր գործաւորները ճշմարիտ եղբայրներ են, սենյակատականներ կամ սոցիալիստներ՝ ձեռք բոլորս իրարու հետ պիտի միանանք սրբութարական շարժման ապագայի գաղափարով: Երբ սոցիալիստ Կուսակցութիւնը և Աշխատանքի Բնդհանուր Դաշնակցութիւնը կմիանայ, մենք կարող ենք դիմագրաւել ամէն տեսակի կռուի՝ բուրժուա կառավարութեան դէմ: Իրաւ է, որ մէկի առաջարկը լաւ մասեր ունի, բայց նա կանգ է առնում կէս ճանապարհին: Մենք կը ցանկանանք քայլել նայն ընթացքով, որով գնում են մեր արտասահմանեան ընկերները: Բնդունեցէք Գորդօնի առաջարկը, որ մերձեցման անհրաժեշտութիւնը շեշտում է, և եթէ այդ մերձեցումը հիմայ չի կարող լինել, գէթ հիմնականից պէտք է աշխատել:

Լագարդել. — Որպէս յեղափոխական սենյակակիցի կողմնակից՝ եւ քուէս կամ մէկի առաջարկին: Երբ սենյակակիցի ինկիւրը իր սմբողջութեամբ և ընդարձակութեամբ Կուսակցութեան Կոնգրէսի առաջը կգայ, այն ժամանակ էլ եւ կլիմաբանեմ: Այժմ ինկիւրը միայն այն մասին է, թէ արդեօք Սոցիալիստ Կուսակցութիւնը և Աշխատանքի Բնդհանուր Դաշնակցութիւնը պէ՛տք է պահպանեն իրենց ինքնավարութիւնը և անկախութիւնը: Մէկի առաջարկը ուղւում է այդ ինքնավարութիւնը և անկախութիւնը պահել, ինչոր չի ուղւում անել Գորդօնի առաջարկը: Գործաւորական շարժման ծագումից ի վեր մի էվոլուցիա (բնաշրջում) է կատարուել, որի վրայ ուշադրութիւն չի ուղւում դարձնել Գորդօնի առաջարկը: Մեր տաճած երէկուայ գաղափարները շատ յետ են: Թող զգործաւորական կեանքից բխած իրողութիւնների շարժման առաջ: Մենք այդ շարժմանը պէտք է հետևենք: Մեկ անշարժութեան մասնից յետս նահանջել կնշանակի: 1876-ից մինչև այսօր գործաւոր դասակարգը շատ մեծ ճանապարհ է անցել: Այսօրուայ համար այլևս անպէտք են այն ժամանակները յարմար դասուած և օգտակար նկատուած կազմակերպութիւնները: Եւ որովհետեւ մենք անշարժութեան մասնեցանք և գործաւորական շարժման սկզբնական դադարի մէջը մնացինք, ուստի մեր առջը էլ յառաջացաւ այն վրդավից պայթիւնը, որի առաջին նշանը տրուեցաւ Նանտի Կոնգրէսի մէջ, իսկ վերջաւորութիւնը այնտեղ հաւասար, որ Իլլիի Կոնգրէսի մէջ Սենյակատների մեղէրացիան կործանուեցաւ: Այդ մեղէրացիայից մնացած բեկորները — պարլամենտարական սոցիալիզմի (որից բաժանուել էին) և համբերական կազմակերպութեան ու գործունէութեան ջատագով հանդիսացող պարլամենտարական անարխիզմի մէջ տարուբերուելով — հետևեցան՝ քաղաքական ամէն քործունէութիւնից անկախ՝ դուռ սենյակակիցի սրբութարաններին: Գործաւոր դասակարգը ցանկանում էր իր դասակարգային քաղաքականութիւնը ինքն իր ձեռքով գործաւորել: Ամիենի Կոնգրէսը բանաձեւել է իր վարդապետութիւնը: Սենյակատական և արհեստակցական գործունէութիւնը այժմս այնպէս չի հասկացուում, ինչպէս որ 30 տարի առաջ: Գորդօնի առաջարկը՝ որ այդ ժամանակաշրջանում գոյութեան իրաւունք

ունէր, այժմ շատ հինցած է և անպէտք դարձած: Այժմս գործաւոր դասակարգը ինքնազիտակցութեան գալով՝ քաղաքական ամէն մտահոգութիւններէն զերծ կանգնող սէնդիկատները մէջ է համախմբում հորդքի մեծ կողմերէն եկած գործաւորներին: Այսպէս ստեղծուեցաւ այն յեղափոխական սէնդիկալիզմը, որ գործաւոր դասակարգի կրթութեանն է հետապնդում և նրան ղեկի իր ազատագրութիւնն ուղղում:

Պրոլետարիատը այսօր իր դասակարգային օրգանիզմը (յօրինուածքը) ունի և, ինչպէս որ գիւղատնտեսները բուրժուազիայի ազատագրութեանը ծառայեցին, այնպէս էլ՝ սէնդիկատները պրոլետարիատի ազատագրութեանը պիտի ծառայեն: Նոր շարժման իրողութեան առաջ՝ Հին բանաձևերը այլևս տակն ու վրայ են եղել: Պատմական փորձը ցոյց է տուել, որ մենք մեր թէօրիաները պէտք է փոփոխենք և յարմարեցնենք մեր գործնականին: Ֆրանսիայի մէջ տեղի ունեցած սօցիալիստական տարնապը ամէն երկրներէ մէջ էլ տեղի ունի: Շէտի առաջարկը ներշնչում է արդէն կատարուած իրողութիւնից: Այդ առաջարկն է որ պէտք է ընդունել և Միջազգայնականին (էնտերնացիոնալին) էլ ներկայացնել:

ԳԵՂԻ ՃԱՌԸ

Խնդիրը այն մասին չէ թէ statu quo-ն պէտք է պահպանել կամ ոչ: Խնդիրն այն է որ ֆրանսիական Սօցիալիստ Կուսակցութիւնը պէտք է ասի թէ իր կարծիքով ի՞նչ պիտի լինի Կուսակցութեան և սէնդիկատներէ յարաբերութիւնը, նոյնը պէտք է ասի և՛ Շատուգարտի Միջազգային Կօնգրէսին: Այս նկատմամբ Շէտի առաջարկը թէ երկրի մէջ է և թէ հակասական: Նա ճանաչում է, որ աշխատաւորների ազատագրութիւնը կարող է լինել միայն երկու կազմակերպութիւնների միացած ուժով և սակայն եզրակացնում է թէ այդ երկու գործունէութեան մէջ որ և է բաղկացութիւն չի կարող լինել: Գործօջի առաջարկը ամբողջ աշխարհի աշխատաւորների գործնականի հետ համաձայն լինելու առաւելութիւնն ունի: Ասում են թէ նա երբեմն ճշմարիտ էր բայց այժմս հինցած է և անպէտք դարձած: Այսպիսով, ժամանակ առ ժամանակ, սօցիալիզմի նոր պիւտերի ենք հանդիպում: Լազարդէլը այն պիւտերն է արել թէ սէնդիկատական կազմակերպութեանց մէջ ընկերային ձևափոխութեան համար տարրեր կան: Այսօր, ինչպէս և շատ առաջները, մենք ստել ենք որ պրոլետարիատը պարտականութիւն ունի սէնդիկատական համախմբումներէ մէջ մտնելու ո՛չ միայն իր անմիջական շահի, այլ իր ազատագրութեան համար: Թող այստեղ մի դէպք յիշեցնենք. երբ 1876-ին Արբաս դահլիճի մէջ գումարուած արհեստակցական Կօնգրէսը վայանք և ուրիշները համարեցին մի փորձ գործաւոր դասակարգին քաղաքական կռուից խտտորեցնելու, եւ առաջինն եղայ՝ այդ ժամանակ՝ որ այդ արհեստակցական Կօնգրէսը մատնանիշեցի որպէս գործաւոր դասակարգի շարժման մի նախաստիճան: Արհեստակցական Կօնգրէսներից է որ բանտարական Կուսակցութիւնը ծնաւ: Մի ժամանակ ֆրանսիական Բանտարական Կուսակցութեան կողքին կար ֆրանսիայի սէնդիկատների ազգային ֆէդերացիան: Թէև երկու օրգանիզմների (յօրինուածք) մէջ դեռ կարգաւորութիւն չկար, բայց դա արդէն աշխատանքի բաժանման սկզբնաւորութիւնն էր: Ասում են որ Գործօջի առաջարկը նուազեցնում է սէնդիկատական գործունէութեան սահմանը, երբ ասում է թէ այդ հաստատութեան կողքին պրոլետարիատը պիտի ունենայ և՛ իր քաղաքական կազմակերպութիւնը: Բայց մի թէ այդպէս չեն ասում և՛ միջազգային բոլոր Կօնգրէսները. դա՛ էլ Հին գաղափար է: Ես սպասում եմ որ ապացուցանեն թէ ի՞նչպէս սէնդիկալիզմի բնաւորութեանը յատուկ ղեկերով՝ գործաւոր

դասակարգը կարող պիտի լինի իր նպատակին հասնել: Սէնդիկալիզմը ի՞նչ ղեկեր պիտի գործածի: Այն ժամանակ երբ ընդհանուր գործադուլի գաղափարը ջատագովում էր, դա նրա համար էր, որ այդ գաղափարը, որպէս օրինական միջոց, հակադրուած էր ապստամբութեան և յեղափոխական շարժումներին: Այդ էր ասում Տուրի որոշումը 1892-ին: Այն ժամանակ ասում էին թէ քուէատոմսի միջոցով մղած կռիւր շատ երկար կը աշէր. ես պատասխանում էի՝ որ այդ ժամանակի իրենց մտածած ընդհանուր գործադուլի եղանակը և՛ ս աւելի երկար պիտի քաշէր: Այս էլ աւելացնեմ, որ ո՛չ պրօպագանդայի մէջ, և ո՛չ էլ ընարողական շրջանում՝ ես երբէք ասած չեմ թէ միմիայն քուէատոմսով գործաւորները կարող են ազատագրուել: Ընտրութիւնները գործաւոր դասակարգի մեծ ռազմափորձերն են, որ նրան ձօնացնում են իր վերջնական նպատակին, բայց և որին նա կարող է հասնել միայն իր վճռական թիկնահարուածով և ապրատութեամբ: Իսկ ինչ վերաբերում այն դարձաբարին թէ ռամկակարգութիւնը պիտի ազատագրի աշխատաւորներին, այդ պատրանքի մասին էլ ես այն եմ ասած՝ թէ քուէատոմսով մղած մարտը հրացանամարտի նախերգանքն է: Մի թէ սաբօտաժուլ՝) և նման միջոցներով է, որ դուք վերջ պիտի տաք կապիտալի տիրապետութեանը: Այդ կարելի չէ: Մեր ամենօրեայ գործը պիտի լինի գիւղացիներին և գործաւորներին կազմակերպել, որպէսզի վերջնական մի ճիգով իշխանութիւնը ձեռք ձգուի: Եւ հիւսիսի առաջարկը, կիսօթի մէջ, այսպէս էր ասում. «Կապիտալիստ ընկերութեան փոխանցումը ղեկի սօցիալիստ ընկերութիւնը այնքան աւելի դիւրին կերպով կլինի, որքան որ գործաւոր դասակարգը աւելի լաւ կը կազմակերպուի իր սէնդիկատների մէջ»: Մենք երբէք չենք կարծել թէ Սուրբ Հոգու աղղեցութեամբ է, որ բուրժուա Պետութիւնը պիտի կործանուի: Յեղափոխութիւնը մենք մեր գրպանի մէջը չունինք, — մենք միշտ կրկնում ենք աշխատաւորներին որ իրենք միայն կարող են և պէտք է որ աւնեն այդ յեղափոխութիւնը:

Դուք ֆրանսիական սէնդիկալիզմը հակադրում էք գերմանական սէնդիկալիզմին և առաւելութիւնը տալիս էք ֆրանսիականին:

ՄԼՆ ԴԻԿԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ:

Ֆրանսիական սէնդիկատական շարժումը ուրիշ երկրների սէնդիկատական շարժումներից տարբերուած է նրանով, որ շատ քիչ անդամակցողներ ունի: Ի՞նչ կարող է լինել սէնդիկատական շարժումը: Ուզեք չուզեք, դա պրօֆէսիօնէլ և արհեստակցական մի եռասիրութիւն է: Տէրերերի կամայականութիւնների դէմ պաշտպանուելու համար՝ գործաւորները կողիացման փոխարէն դնում են հաւաքականութիւնը: Այս կերպով է որ դուք բոլորը առաջ էք տանում սէնդիկատական պրօպագանդան, և եթէ դուք ուրիշ փաստ չունենայիք յարգի կայացանել՝ դուք չէիք կարող գործաւորին դուրս հանել իր անշուք բնակարանից և նրան ձեր սէնդիկատի մէջը մտցնել: Գերմանական և Աւստրիական սէնդիկատները դրա վրայ աւելացնում են առաւելութիւնների մի ուրիշ սխալէմ էլ, որ անգիտակից գործաւորների համար և՛ ս աւելի շօշափելի է դառնում: Յայտնի բան է, որ սէնդիկատների դերը միայն դրանով չի սահմանափակուած: Աշխատանքը հալանաւորող մի քանի խեղճ օրէնքներ քուէարկուելուց ի վեր, որովհետև այդ օրէնքները իրական վաւերացումն չառացան. — օրինակ գործատերերի կատարած ոճիւրը երեխաների և կանանց նկատմամբ, որ օրինազանցութեան պահուն 30 սանտիմ է արժենում — ուստի սէնդիկատները պարտաւորութիւն ունեն կռուելու, որպէսզի գործադուլով օրէնքները գործադուրեն: Արա համար էլ սէնդիկատը բայց պիտի լինի ամէնքի առաջ, առանց

(«Վատ վարձագին» վատ էլ աշխատանք»: Այս է սաբօտաժուլիստների թէգը: Խմբ.

պահանջելու որ ձի գործարար այս կամ այն բանաձևով պնդագործարար Այսպիսով կարելի է հասնել ձիային սենյակների կամ մի կամիսին: Բայց բացառաբար սենյակների միջոցով, աշխատանքները կարող են նուազեցնել ատերերի (գործատերերի) ընդհանրությունը գործադրելով կամ գործարարի սպասարկումով: Ինչոր պէտք է, այդ այն է՝ որ աշխատանքները երկու արուեստանոց պէտք է ունենան, մին արհեստակցական (հոսպոսալիս) արուեստանոց կամ սենյակիսան և միւրը՝ քարտրական արուեստանոց (atelier): Սենյակիսաները սպորտիսան չունեն Պետութեան վրայ: Իսպ. է լինում և՛ ուղղակի գործունէութեան (action directe) մասին, — բայց բարձր գույքիսան ունենալուց առաջ իր ձեռք կատարել ենք: Սակայն այժմու սենյակիսան սյծով կոչ ձի գործունէութեան, որ Պետութեանը յետ նահանջել ար: Սենյակիսանը կրում է գործարարը դէմ՝ բայց իր կուրբ չի հասնում ո՛չ գործարարութեան և ո՛չ էլ գործարարական (պարտական) հաստատութեան, և՛ս աւելի այդ կուրբ չի հասնում Պետութեանը:

Հերթին խօսում է արտաձի գիւղատնտեսի մասին, բայց նրանք Պետութեան թնայանքները կրակի տակը կրնինեն և ձեր ձեռքին մէջ կմնան այնպէս, ինչպէս ձի դրամատրանակ (porte-monnaie) մում է պետից վերցնողի մում, մինչև որ մանդարը՝ գալիս յետ է աւնում: Լագարդէլը ասում է որ Սոցիալիստ Կուսակցութիւնը դասակարգային կուսակցութիւն չէ: Բայց գործարար դասակարգը սահմանափակում չէ մի-միայն ճարտարագործական (էնկլատրիէլ) պրոլետարներով: Ինչոր իր ոչմն է կազմում, այդ այն է՝ որ գործարար դասակարգը իր մէջ բովանդակում է և՛ քիմիկոսին և՛ ճարտարագէտին, մի խօսքով՝ այժմեան ընկերութեան՝ մէջ՝ դանբուրդ ուղեղային այն բոլոր գործիչներին, որոնք անմիջապէս կարող են ապահովել վաղուան ընկերութեան անսայթաք արտաձիսարութիւնը:

Ո՛չ, Սոցիալիստ Կուսակցութիւնը էականապէս դասակարգային մի Կուսակցութիւն է: Արովհետև բոլոր յեղափոխութիւնների մէջ մի դասակարգից միւս դասակարգը անցնելու իրողութիւններ են պատահում, արովհետև մի Վալան, մի Կապարէլ գալիս է պրոլետարական դասակարգին, գրանով Սոցիալիստ Կուսակցութեան դասակարգային կուրբ բնաւորութիւնը չի պահառում:

Երրորդ դասակարգի (ախեր պէտա) մարդկանց մէջ կային դարձեր, կոմսեր և մարքիզներ. աղետականների Կուսակցութեան մէջ կային արհեստաւորներ. շուանների մէջ որսպահներ: Անկասկած, կարող է պատահել որ շուանը Կուսակցութեան մէջ մանում են, ինչպէս եղաւ ընդհանուր գործադրական Բրիանը, որպէսզի իրենց համար պատուանդան վարձեն: Բայց Կուսակցութեանն էլ կմնայ իր դրանը պահանջներ լինել և իր կատարելները կրկնապատկել:

Չեզ շատ լաւ յայտնի է այն, որ Էթէ յեղափոխական մի մասնաւոր սենյակիսանի մասին որք պարտաւորներ ունենք, որս պատճառն այն է, որ Կուսակցութեանն մարդիկը շատ յաճախ գատուրել են դասակարգային կուրբ հոգը:

Մեզ ասում են. — ինչո՞ւ միայն համաձայնել սոցիալիստ Կուսակցութեան հետ. ինչո՞ւ ՀՀամաձայնել և՛ Արմատական Կուսակցութեան հետ՝ որ ներկայիս մէջ իշխանութիւնը իրենց ձեռքին ունեն: Եւ այդպէս խօսողներն են որ իրենց յայտարարում են յեղափոխական սենյակիսաններ:

Ինձ մեղադրում են, որ ես Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութեան թշնամին եմ, ես՝ որ որանից մէկ ու կես ամիս առաջ՝ այս կաղնակերպութեան անդամակցել եմ սուել Ռուբէի մանարանի սենյակիսանի 800անդամներին:

Ի՞նչ մեղադրանքս անարկիսաններին այն է, որ նրանք արդէլ են հանդիսանում նոր անդամներ աւելացնելուն և խոչընդոտ են դառնում սենյակիսանին միութեան կազմուելուն:

Մենք պիտի երթանք Շատուղարա և ասենք որ պրոլետարիստը չի կարող ինքն իր դէմ բաժանուել: Մենք պիտի ասենք այն, ինչոր ասել ենք շատ ասանջ, այնինքն թէ պրոլետարական աղտադրութիւնը կարելի է ճիմիայն քաղաքական իշխանութեան տիրապետութեամբ:

ՎԱՅԱՆԻ ՃԱՌԷ

Քաղաքացի Վալանը հակիրճ սեղեկութիւններ է ասելու

իր և իր բարեկամները ջանքերը մասին, թէ ինչպէս իրենք նպատակ են ունեցել արհեստակցական մի ուժեղ կազմակերպութիւն ստեղծել, որպէսզի գործարարական միութեան ներկայացուցիչը լինէր: Եւ ճշմարիտ է համարում Լագարդէլի պատճառաբերը, բայց չի ընդունում նրա հասնած հետեւութիւնները: Սիսալ է, օրինակի համար, Լագարդէլի այն խօսքը թէ Սոցիալիստ Կուսակցութիւնը դասակարգային կուրբ Կուսակցութիւն չէ, արովհետև քաղաքական կուրբ նոյնքան էական և անհրաժեշտ նշանակութիւն ունի, որքան որ անտեսականը: Մարտական ամէն ձև ընդունելի է, — ընարական և պարլամենտական գործունէութիւնից սկսած մինչև գործարարական գործունէութիւնը: Ի դուր է Սոցիալիստ Կուսակցութեան ձեղադրել, որ նա դառնում է լոկ ընտրական և պարլամենտական մի Կուսակցութիւն. Էթէ ոմանց այդպէս է երևում, որ հետևանք պիտի համարել մի կարգ պայմանների, որ շատով կը փոխուեն և Կուսակցութեան կրան աւելի յեղափոխական բնասրութիւն: Բայց այժմ սենյակիսանից է, որ աւելի յեղափոխական բնասրութիւն ունի, լոկ սենյակիսանը սիսալ հասկանալ է, երբ պահանջում է որ նա իր ներկայ գիրքից հրաժարուի և պարփակուի միմիայն արհեստակցական գործի սահմանների մէջ: Այժմ սենյակիսանը Պետութիւնը ուղղակի քանդելու ճառագործիւններ է մատուցանում, ինչոր անհրաժեշտ է մեր աւելի յառաջ երթալուն համար: Բանի որ սենյակիսանը իր բոլոր ընդհարումների մէջ Պետութեան ձեռքը պիտի աւանի, ուստի սակայն պիտի լինի ուժին ուժով էլ պատասխանել: Երբ, ուրիմն, սենյակիսաները սոխորում են պատրաստի դէմ աղտառումը՝ նրանք սոխորում են արտաձիսար և Պետութեան դէմ: Չի կարելի պատմականորէն ընդհանուր գործադրել յայտարարել, որս համար պէտք են որս պայմաններ: Բայց ընդհանուր գործադրել պրոլետարիատի ձեռքի մէջ դնուական մի դէպ պիտի լինի: Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութիւնը իր դէմ պատեղադի յայտարարութիւն է ընդունում, երբ սենյակիսանի յեղափոխական իրաւունքը դերը վիճարանութեան են ենթարկում: Դորոջնի առաջարկը Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութեան այն՝ բարձրարի է ասալիս, թէ նա ուրում է սենյակիսանի գործունէութեան շքանը սահմանափակել և նրա յեղափոխական արժեքը ուրանալ: Եւսի առաջարկը, ընդհակառակը, ամէն դիւրագրանութիւն խնայում է, և ապագան էլ արտա է թողնում: Վերջապէս համաձայնութեան միակ միջոցն է համերաշխական յաճախակի՝ գործեր կատարել, ինչպիսին է Մալիս Ա. ր: Վալանը եռանդալին յանձնարարում է քուէարկել Եւսի առաջարկը:

ԲՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ

Եւսի առաջարկը ստանում է	167	ձայն
Դորոջնի առաջարկը ստանում է	141	"
Ձեռնարկութիւն	0	"
Եւսի առաջարկը, ուրիմն, ստանում է	26	ձայնի

Տե՛ս մ մ ա ս ն ու թ ի լ ն: Միևնոյն առաջարկը անցեալ ամսի, Կիսօթի մէջ, ստացել էր 14 ձայնի Տե՛ս մ մ ա ս ն ու թ ի լ ն:

Հետեւեալ անգամ կուանք Շատուղարաի Սոց. Միջազգային Կոնգրէսի համառում տեղեկագրութիւնը:

U. S. - 9.

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ զանաւարանում ստացուել են հետեւեալ գրեւորները. —

ՐԱԳՈՒ Մ: Աղբէկանից Ի Նպաստ Թրիսիս)	
սովետական (ընկեր Մուրատի մուսա)	673 թ. 70 ր
ԳՈՌԿԱՉԻ Մ-ՊԵՅ (ընկեր Ա. հ մուսա)	200 "
ՄՕՓԱՍԵՒ " " " " " "	74 "
ՂԱՌՆԱՅՈՒ " " " " " "	68 "
ՔՅՕՍԹՆՆԷՆ " " " " " "	500 "
ՄՈՌՐՅՍ " " " " " "	2630 "
ՄՄԵՐՈՒՍԵՐ ԳՈՐԾԱԴՐՈՒ ՅԱՍԶ-ից	50 ր.
ՔՐԱՏՏՓՈՐԻ Մ-ՊԵՅ " " " "	96 " 73 ր

M. BELLART — 7, Rue Campagne-Première 7, (France) PARIS. Imprimeur-Gérant EMILE LEBÉE.